

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ XXI ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ
ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԹԵԶԵՐ

XXI CONFERENCE OF
YOUNG ORIENTALISTS OF ARMENIA
THESES

ԵՐԵՎԱՆ - 2000 - YEREVAN

Տղագրվում է
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

դ.գ.թ. Արտակ Ե. Մովսիսյան

Համակարգչային շարվածք և ձևավորում՝

Անահիտ Գ. Վահանյան

Մեկենասությամբ

Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամի

ԱՄՆ



This Publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.
USA

սիրային մի հմայանքում ծառից պտուղ բաղելը հանդես է գալիս որպես կնոջ սիրուն հասնելու հմայական միջոց:

Քանի որ բերված, ինչպես նաև մի շարք նման մոտիվներ հանդես են գալիս աշխարհի բազմաթիվ ժողովուրդների գրական և բանասիրական տեքստերում, հայ-շումերական այսպիսի ընդհանրությունները կարելի էր համարել տիպաբանական: Սակայն հայկական և միջագետքյան տեքստերում երբեմն զուգահեռաբար հանդես են գալիս մի բանի նույնական մոտիվներ նույն համատեքստում և նույն հաջորդականությամբ:

Հայկական օրորոցային մի անտունիում և շումերական օրորոցային մի երգում մայրը ցանկություն է հայանում, որ նրա որդու արմատը լինի խոր (անտունի) կամ հաստ (շումերական երգ), ապա որդին նմանեցվում է ծառի, ու հիշվում են ծառի ճյուղերը: Շումերական երգում խափում է որդու ապագա ամուսնության մասին, ընդ որում, այլ տեքստերից պարզ է արմատի ֆալլիկ սիմվոլիկան: Օրորոցային անտունիում մոր ցանկությունը՝ «դու և լինի անտառ մորում, / ու զարնես քաքիկդ խորում, / քաքիկդ խորում զարնես, / ծառդ շուք անե ճեղքում», նույնպես կարելի է մեկնաբանել որպես խոսք ապագա ամուսնության մասին, քանի որ հայրեններում և անտունիներում «մորին» սովորաբար հանդես է գալիս որպես նախամոսնական նվիրագործության վայր: Շումերական օրորոցայինի տեքստը բավական երկար է, և այն հնարավոր է համադրել ոչ միայն առանձին մի անտունիի, այլ օրորոցային անտունիների ամբողջ երգաշարի հետ, որն ակնհայտ է դարձնում բերված համադրությունը:

Հայ-շումերական տեքստային նման ընդհանրությունները դժվար է միայն տիպաբանական համարել: Հնարավոր է խոսել ուղղակի կամ միջնորդավորված փոխառությունների, արեալային և ծագումնաբանական կապերի մասին, որոնց բնույթը պարզելու համար մանրամասն տեքստային վերլուծություններ են անհրաժեշտ:

ԱՍՏՆՈՒՅՆ ԲՈՒՇԱՆՆԱԼԵՐ

ԻՒՆ-ԱՄՆ. ԱՆՎԱԹԱՎԱՐԵԼԻ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՍԱՓԵԼԻ ՄԵՐՁԵՅՈՒՄ

Իրանում իսլամական հեղափոխության հաղթանակը, որպես անհետաձգելի քայլ, կոչված էր պահպանելու երկրի սասանավոր ամբողջականությունը և մեկ ընդհանուր՝ շիա նախադրի շուրջ համախմբելու այդ պետության բազմաթիվ տարակենցաղ ու տարածագում ցեղերին ու ժողովուրդներին: Իրապես ահագնացող ներքին պրոբլեմների ու հակասությունների լուծման համար անգնահատելի դեր կատարեց արտաքին քննադատական կերպարը, որի անձնավորումը դարձավ Արևմուտքը՝ ի դեմս ԱՄՆ-ի: Այժմ, իրանցիների համար ԱՄՆ-ի հետ կապերի բարելավումը հավասարազոր է հեղափոխության հիմնական սկզբունքների ուրացմանը: Մյուս կողմից, ԱՄՆ-ը, հետապնդելով իսլամական ֆունդամենտալիզմը կոտրելու գաղափարը, պատրաստ է զոհելու անգամ սեփական տնտեսական շահերը: Դրանով հանդերձ, ԱՄՆ քաղաքական շրջանակներում առկա «իրանամետ» ուժերի պնդմամբ՝ իսլամական ռեժիմը շատ ավելի կայուն է և վստահելի, քան տառաջան կամ քուրբակյան վարչակարգերը:

Շուրջ քսան տարի է, ինչ Իրանը համառորեն դիմադրում է ԱՄՆ-ի կողմից գործադրվող պատժամիջոցների քաղաքականությանը: Պատժամիջոցները գործում են և

այսօր: Որպես ԻԻՀ-յան հետ խաղաղ երկխոսության խաչընդոտներ ԱՄՆ-ը նշում է հետևյալ հինգ գործոնները.

1. Մարդու իրավունքներ: Համաձայն իրանական տեսակետի՝ ԱՄՆ-ը այս հարցում դիմում է երկակի ստանդարտների, մի քաղաքանություն վարելով Իրանի նկատմամբ, և այլ, ավելի զիջողական, Պարսից ծոցում իր դաշնակիցների հանդեպ: Միևնույն ժամանակ, Իրանը մարդու իրավունքների բնագավառում, բնականաբար, զիջում է եվրոպական երկրներին:

2. Անաբեկչություն: Սկսած 1980-ականներից Իրանը հիշատակվում է ամերիկյան պետ. դեսպարտամենտի ցուցակներում, որպես անաբեկչությունը հովանավորող երկիր, սակայն հղվաժողի ապացույցների բացակայությունը (թերևս, չհաշված «Միլոնոսի գործը») ենթադրություն է առաջացնում ԻԻՀ-յան կտրականապես մերժել իր մասնակցությունը իրեն վերագրվող անաբեկչական գործողություններում:

3. Տարածաշրջանային անվտանգություն: Շիական հեղափոխությունը, թվում է, պետք է խորացնե՞ր ճեղքվածքը Իրանի և արաբական աշխարհի միջև: Հարկ է նշել նաև Իրանի և Սաուդյան Արաբիայի մրցակցությունը՝ իսլամական աշխարհում առաջնային տեղ գրավելու համար: Սակայն, խրախուսվող արաբական դաշինքը ակամա մերժեցրեց արաբական երկրներին և ԻԻՀ դիրքորոշումները: Բացի այդ, Իրանի ռազմական ծախսերի չափը մտահոգվելու առիթ չի առաջացնում պետություններին:

4. Արաբա-իսրայելական խաղաղ կարգավորում: ԻԻՀ-ը, թշնամական դիրք գրավելով Իսրայելի հանդեպ, բազմիցս դատապարտել է խաղաղ կարգավորման գործընթացին միաված քայլերը: Սակայն ԻԻՀ քաղաքականությունը վերլուծողներն ավելի շատ հակված են այդ առնակատմանը տալու տակտիկական, քան ռազմավարական բնորոշում:

5. Ձանգվածային ուժնացման զենք: Այս հարցում Վաշինգտոնը մեղադրում է ոչ միայն Թեհրանին, այլև Ռուսաստանին և Չինաստանին՝ ԻԻՀ-յանը տեխնոլոգիաներ մատակարարելու համար: Միջուկային զենքի ստեղծմանը չձգտելն ապացուցելու նպատակով Իրանը թույլատրեց ՄԱԷԳ-ն առուգող հանձնաժողովի մուտքը երկիր:

Վերջին տարիներին ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ վարվող քաղաքականության նպատակն էր մեկուսացնել իսլամական ռեժիմը և ստիպել վերջինիս փոխելու իր քաղաքականությունը: Սակայն, նույնիսկ 20-ամյա տնտեսական և դիվանագիտական ճնշումից հետո դժվար է ասել, որ ԱՄՆ-ը մեծ հաջողությունների է հասել այս առաքարեզում: Ընդհանրապես, Իրանի հանդեպ տնտեսական պատժամիջոցների քաղաքականությունը ի սկզբանե դատապարտված էր ձախողման, քանի որ չափազանց մեծ էին ԱՄՆ-ի պահանջները, որոնք հարվածում են իրանցիների սկզբունքային փիլիսոփայական արժեքներին և ենթադրում կրոնական և գաղափարախոսական համոզմունքների ուրացում:

Վերջին քաղաքական զարգացումներն Իրանում ցույց են տալիս առաջադիմական ուժերի ակտիվացում և «մեկուսարարներին» դիրքերի թուլացում, սակայն ամենիս կլինի կարուկ փոփոխություններ և արագ բեկում ակնկալելը: Իրանը կամավոր կերպով երբեք չի դիմի իր պետական շահերին հակառակ քայլերի: Բայց և ԱՄՆ-ը, իր հերթին, չի կարող ամտեսել իրանական գործոնի դերը Միջին Արևելքում:

**ԹՈՒՐԲԻՈ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԳԻՎԱՆԻ ՓԱՏԱԾՈՂԹԵՐԸ
ԱՄՆ-Ի ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XIX դ. վերջ - XX դ. սկիզբ)**

1. Պոլսո հայոց պատրիարքությունը մշտապես եղել է արևմտահայության, նաև՝ ճակատագրի բերումով սարսափի դարձած իր զավակների հարազատ ու նվիրական պատվարը: Այդ մասին են վկայում Թուրքիո Հայոց պատրիարքարանի ղիվանում պահպանվող բացառիկ արժեք ներկայացնող փաստաթղթերը, որոնց են ծանոթացել են 1997թ. Թուրքիա կատարած այցի ընթացքում:

2. «Ամերիկա» ընդհանուր խորագիրը կրող ֆոնդում ամփոփված գործերը ներառում են երկարատև մի ժամանակաշրջան՝ սկսած 1880-ական թվականներից մինչև մեր օրերը: Փաստաթղթերն արխիվային գործերում դասակարգված են ժամանակագրական կարգով, հետևաբար, հնարավոր է հստակ պատկերացում տալու պատմական այս կամ այն ժամանակահատվածի մասին: Այսպես, եթե 1880-ական թվականներից սկսվող գործերը տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ բավականին սովոր նյութեր են պարունակում, ապա առաջին աշխարհամարտի տարիների գործերում նկատելի է փաստական նյութերի զգալի նոսրացում, իսկ հաջորդող տարիներին՝ ընդհանրապես անհետացում: Հետպատերազմյան շրջանի գործերում կրկին նկատվում է փաստաթղթերի որոշ սովորացում, բայց արդեն ոչ նախկին չափով: Հարկ է նշել, որ Թուրքիո Հայոց պատրիարքարանի ղիվանի գործերը, երկրում առկա պատմաքաղաքական ստիպողական հանգամանքների բերումով պարբերաբար զավել են, ինչպես նաև արտածվել ԱՄՆ և այլուր: Այդ է պատճառը, որ ներկայումս մեզ հասած նյութերը ընդհանուր առմամբ չեզոք բնույթի են՝ զերծ որևէ քաղաքական, կուսակցական, ազգայնական ու անցյալի պատմական երանգավորումներից: Այդուհանդերձ, պատմական հրաշքով փրկված ու մեզ հասած այդ փաստաթղթերն իրենց ինքնատիպությամբ ու պատմագիտական կարևորությամբ սկզբնաղբյուրային բացառիկ արժեք են ներկայացնում:

3. Փաստագրական այդ նյութերն ընդգրկում են ինչպես մինչև 1898թ. Պոլսո Հայոց պատրիարքության վիճակ հանդիսացած Ամերիկահայ թեմի (պաշտոնապես 1902թ. Ամերիկահայոց առաջնորդությունն անցել է Սբ. Էջմիածնի կաթողիկոսության հովանու ներքո), այնպես էլ հետագայում՝ նորաստեղծ Ամերիկահայոց առաջնորդարանի, գաղութահայ տարբեր կազմակերպությունների ղեկավարների ու անհատների կողմից Թուրքիո Հայոց պատրիարքներին, ինչպես նաև ԱՄՆ-ի հայաշատ վայրերից Ամերիկայի հայոց առաջնորդներին ուղղված և հանգամանքների բերումով Պոլսում հայտնված բազմաթիվ նամակներ, խնդրագրեր, փաստաթղթեր:

4. Հիշյալ սկզբնաղբյուրներում լուսարանվում են ԱՄՆ-ի հայ գաղթականության դրությունը, աղյուս-ամոռեսական վիճակը, հայրենի բնակավայրեր վերադառնալու ցանկությունը, ամերիկահայ երիտասարդությանն ուժացումից զերծ պահելու նպատակով Պոլսից հայ որբուհիներ ուղարկելու նպատակահարմարությունը, պատշաճ և կարող հոգևորականներ ունենալու անհրաժեշտությունը, հայ որբերի որդեգրմանը, որբահավաքին ու որբախնամին, ամերիկահայ եկեղեցիների կարիքներին, գաղութահայ հարանվանական եկեղեցիներին առնչվող հարցերը, եկեղեցական ու քաղաքական պաշտոնական հարաբերությունները, ամերիկահայ տարբեր կազմակերպությունների գործունեությունը, նրանց ազգանպաստ ու հայրենամպաստ ձեռնարկները, անձնական ու ընտանեկան խնդրանքները, Մեծ եղեռնից վերապրած իրենց հարազատներին

փնտրելու, նրանց նյութական նպաստ ուղարկելու հետ կապված հարցերը, ինչպես նաև՝ առանձին դժգոհություններ, բողոքներ և այլն:

5. Թուրքիա Հայոց պատրիարքարանի ղեկավարն պահվող հիշյալ փաստաթղթերը, առաջին անգամ հրատարակվելով և գիտական շրջանառության մեջ դրվելով, իրենց ինքնատիպությամբ ու պատմաճանաչողական մեծ արժեքով կարևոր ներդրում են ԱՄՆ-ի հայ զառուրթի տվյալ ժամանակահատվածի ներհամայնքային կյանքի տարբեր ասպարեզների լուսաբանման և համակողմանի ուսումնասիրման ուղղությամբ՝ պատվով բերելով պատմաարտաքական տարբեր փորձությունների բովով անցած և առ այսօր կանգուն մնացած Պոլսո Հայոց պատրիարքությանն ու հայ համայնքին:

ԱՐԻՍՅԱՆ ՆՈՐԱ (ԵՊԷ)

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՈՒԼԻ ԷԶԵՐՈՒՄ

Եփրատայի և Լատինական Ամերիկայի երկրներում սիրիական սփյուռքի մասնաւոր ծնունդ է առել Արդալ Համիդի, ապա երիտթուրքերի իշխանության սահմանած խիստ զրարնության և հալածանքների պատճառով: Քաղաքական, տնտեսական և զրական ուղղվածություն ունեցող սիրիական սփյուռքի քերթերը հիմնականում լույս էին տեսնում Փարիզում, Լոնդոնում, Նյու Յորքում, Սան Պաուլոյում և այլուր:

Մեր ուսումնասիրության առարկան հատկապես այն քերթեր են, որոնք անդրադարձել են հայկական բեմաներին: Դրանք են՝ «Ալ Բասիր» («Պայծառառես»), խմբագիր՝ Յուսեֆ Բախա», «Ալ Միքրաս», («Հնչակ», խմբագիր՝ Մալիմ Լաբաբի), «Ալ Աֆրաթ» («Մոբեր», խմբագիր՝ Մալիմ Աբու Ժամրա), «Ալ Զալամ ալ Հադիդի» («Երկաթե գրիչ», խմբագիր՝ Ժորժ Հադիդալ), «Ալ Մուսրաբբաթ» («Ապագա», խմբագիր՝ Հաբի ալ Ադրմ) և այլն:

1881-ից Փարիզում լույս տեսնող «Ալ Բասիր» քերթը, որը անդրադարձել է միջազգային ղեկավարության մեջ Հայկական հարցի լուսաբանմանը, ցավոք, միայն երկու տարվա կյանք ունեցավ: Ուշագրավ է, որ քերթի հրատարակիչը՝ Խալիլ Դանեմը, հրաժարվել էր ընդունել Համիդի պարզև՝ հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության հալածանքների պատճառով:

1913-ից Սան Պաուլոյում հրատարակվող «Ալ Զալամ ալ Հադիդի» քերթը անդրադարձել է Օսմանյան կայսրության մեջ հայերի կոտորածներին, որոնց նկարագրության ցավից, ինչպես նշվում է, «մարդկության սիրտը արշուճուովեց»: Թեքթը մանրամասնում է ազգային փորձառնությունների (արարներ, հայեր, քրդեր) նկատմամբ բուրքերի քաղաքականությունը:

1914-ից Սան Պաուլոյում լույս տեսնող «Ալ Միքրաս» օսմանմետությամբ աչքի ընկնող քերթը առավելապես լուսաբանել է Բրազիլիայում նոր ձևավորվող հայկական համայնքի առաջ ծառացած դժվարությունները, ազգային գործի կազմակերպման հետ կապված հարցերը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի 1903-ից կրկին Սան Պաուլոյում հրատարակվող «Ալ Աֆրաթը», որը լավական երկար կյանք ապրեց (մինչև 1921թ.): Թեքթը մանրամասներ է նկարագրում հայերի ցեղասանության մասին, որն, ըստ վերլուծությունների, երիտթուրքերի կողմից նախօրոք ծրագրված քաղաքականության արդյունք էր: Վկայակոչվում են Հալեպի նահանգում Օսմանյան կայսրության կողմից

հայերի տեղահանման հրահանգները: Թերթի հրապարակումների համաձայն, Օսմանյան կայսրության քուրմական ծրագրերը նստառակ ունեն իսլամ ազգերի քուրքացումը և ոչ իսլամ փոքրամասնությունների բնաջնջումը: Հայերի ցեղասպանության մասին խոսում են արաբ ակամատեսները, որոնք բերում են մահացածների մասին առույգ թվեր: Թերթը հայերի ցեղասպանության կազմակերպման մեջ Թուրքիային օգնելու համար մեղադրում է Գերմանիային:

1916-ից Փարիզում լույս տեսնող «Այ Մուսաբբալ» բերթի հրապարակումներից չի վրիպել հայկական ջարդերի նկարագրությունները, որոնք ընդգրկված են 70-ից ավել հոդվածներում: Թերթից հայտնի է դառնում, որ արաբական աշխարհը բողոքում է հայոց ջարդերի դեմ, որոնք քուրքերը վերագրում են իսլամին:

Հատահորեն կարող ենք ասել, որ հայ ժողովրդի ռդերիզությունը լայն արձագանք է գտել ոչ միայն սիրիական, այլև սիրիական արաբական ափյուրի մամուլի էջերում, որը վկայում է արաբների կողմից հայկական խնդիրների նկատմամբ անվերապահ ուշադրությունը: Սիրիական ափյուրի մամուլը անվիճելիորեն փաստում է Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանությունը, հայոց տարագրությունները և հալածանքները: Ալեհայտ է, որ սիրիացի արաբ մտավորականները, թղթակիցները, քաղաքական գործիչները, մեծապես աջակցել են հայերին և լուսարանել հայոց ցեղասպանության հանգրվանային փուլերը:

ԲԱՂԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԻ)

ԲԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐԻԲԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1920-1930 ԹԹ.)

Բանակը եղել և մնում է Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի կարևորագույն գործոնը: Այս դերը պայմանավորված է 1920-1930-ական թթ. Թուրքիայի Հանրապետությունում ստեղծված ավանդույթներով:

Այդ շրջանում երկրում գոյություն ունեին երկու լավ կազմակերպված և ազդեցիկ ուժ՝ բանակը և Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը: Ընդ որում, այս կուսակցության ղեկավարության մեծ մասը գեներալիտետի անդամներ էին:

1920-1930-ն թթ., ինչպես և մեր օրերին, բանակն, անմիջապես չմասնակցելով պետության կառավարմանը, հանդես էր գալիս որպես վճռորոշ քաղաքական գործոն և իր ձեռքում էր պահում երկրի քաղաքական կյանքի վրա վերահսկողության լծակները: Ջինվորական և քաղաքական ոլորտների բաժանման այդ ժամանակաշրջանի Թուրքիայում այնպես էլ չդարձավ լիակատար: Քաղաքականության մեջ միջամտության կարիքն, ըստ էության, չկար, բունի որ Հանրապետության համաբոյս բոլոր ղեկավարները համդիսանում էին բարձրաստիճան գինվորականներ:

Հենց բանակի վրա վերահսկողությունը պահելու համագանձանքն էր պայամանավորում Արաբյուրքի իշխանության ամբողջությունը: Բանակի հետ կապված Արաբյուրքի հիմնական խնդիրը եղել է, սպառնալուքել բանակի լիակատար հավատարմությունն իրեն և Հանրապետությանը, որպիսի այն աջակցի նոր Թուրքիան կառուցելու իր ջանքերին: Ջեմալական վարչակարգը թեև հենվում էր բանակի վրա, սակայն չդարձավ ռազմական բռնապետություն: Թուրքիայում հաստատվել էր միակուսակցական համակարգ, մինչդեռ ռազմական դիկտատուրան սափակուսակցական վարչակարգ է, նրա կուսակցությունը բանակն է: Հանրապետության ստաջնորդները՝

Զ.Աթաբյուրքը, Ի.Ինյունյան և մյուսները այն կարծիքի էին, որ բանակը պետք է դուրս պահվի քաղաքականությունից:

Բանակը նաև եղել է երկրում արդիականացման գործընթացների շարունակական շարժիչ ուժը: Այլ խաղաղական երկրներից Թուրքիային տարբերում էր նախ և առաջ այն փաստը, որ նրա արևմտականացված զինվորական ընտրանին իր վրա վերցրեց երկրի մոդեռնիզացման պրոցեսի ղեկը: Աթաբյուրքի գծված սխեմայում բանակին վերապահված դերը ավելին էր, քան թե պարզապես երկրի սահմանների պաշտպանի դերը: Այն պետք էր նաև լինել երկրի առաջընթացի աղբյուրը:

Դրա հետ մեկտեղ-բանակն օգտագործվում էր երկրի ներքին քաղաքական խնդիրների լուծման համար: Ուրպես դրա օրինակ կարող է ծառայել բանակային զորամասերի մասնակցությունը 1925թ. քրդական ապստամբության ճնշման գործում:

Հետևյալ է, որ Թուրքիայի Հանրապետության առաջընթաց Զեմալ Աթաբյուրքը համարում էր ոչ թե պետական քյուրակրատական ապարատը, խորհրդարանը, կառավարությունը կամ հատուկ ծառայությունները, այլ բանակը: Այս փաստը բացատրվում է ինչպես նախագահի կադրային զինվորական լինելով, այնպես էլ Օսմանյան պետության պատմության ընթացքում բանակի խաղացած դերով:

Նոր Թուրքիայի և նոր քուրքի կերտման ճանապարհին Աթաբյուրքը հիմնականում ուժի սպառնալիքով, իսկ հաճախ նաև դրա գործադրմամբ էր հատրահարում քաղաքական, կրոնական, ավանդապաշտական, ազգա-կենցաղային արգելքները, և, հասկանալով քուրքերի բնական հակումն անցյալի վերականգնմանը, ձգտում էր հավերժացնել բանակի ազդեցությունը երկրում իբրև սեփական ձեռքբերումների պաշտպանության միակ հենարան և միջոց:

Հանրապետության հայր-հիմնադիր Աթաբյուրքի և երկրի հիմնական քաղաքական ուժերի կողմից բանակը դիտվում էր և շարունակվում է դիտվել որպես պետության կայունության երաշխիք, երկրում քայքայման ու պառակտման գործընթացները կանխող ուժ: Աթաբյուրքի ժամանակաշրջանում արմատավորվեց այն ավանդույթը, համաձայն որի միայն բանակն իրավունք ունի և պարտավոր է ճգնաժամային պահերին հանդես գալ իբրև ամբողջ ազգի շահերի արտահայտող և իր ձեռքը վերցնել իշխանությունը: Տվյալ երևույթի արտահայտում դարձան Թուրքիայում տեղի ունեցած զինվորական հեղաշրջումները և զինվորական վերնախավի միջամտությունները երկրի քաղաքական իրադարձություններին 1960-1990-ական թվերին:

ԲՈՐՈՒՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀՄԻ)

**ԿԱՅԻՆԸ (արադ. hazinu) ԵՎ ԾԱՌԸ (շում. SAR). ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՏԱՎՐՈՍԸ ՄԻԶԵՐԿԻՐԱԿԱՆ ՓԱՅՏԻ ԱՌԵՎՏՐՈՒՄ
(Բ.Ա. Ու-Ու հազ. սահման)**

1. Միջազգեությունների պատկերացմամբ կացինը և ծառը ծագում են հյուսիսային լեռներից, իսկ ծառահատումը համարվել է հեքասություն: Նման մտացումն ունի իրական հիմնավորք: Միջազգեությունները կենսական կարևորության այս ապրանքատեսակից և ներմուծում էր լեռնային շրջաններից, այդ թվում Հայկական Տավրոսից (ՀՏ), որտեղից միջազգեությունները փայտ էին ձեռք բերում Բ.ա. 4-րդ հազ. վերջերից (Algaze 1989), իսկ 3-րդի վերջին փորձում արշավանքների միջոցով վերահսկողություն հաստատել այդ տարածքի վրա (Hauptmann 1969-70):

2. Զ.ս. III-II հազ. սահմանին Լագաշ, Իսին, Ուրուկ փայտ արտահանող երկրների բվում հիշվում են հեռույալները (տեղայնացումը ՀՏ-ում և արևմտյան Չագրոտում ըստ Sogbad 1936, Rowton 1967 կմ.)։ Սուրիի (արտահանում էր բզենի, ձիթենի, սուրարու փայտե առարկան, մարտակառքի փայտ), Գուտիում (բզենի, մարտակառքի փայտ), Վերին երկիր (մայրի, ընկուզենի), Կուրդա (գերաններ), Էլուխտր (գիլի-մարտակառքի փայտ), Տաբրա, Տուգրիշ (պիստակենի), Արուա, Խանա, Մալաու, Վիզիկու (գիլի), Արմանում (լեռնային խնձոր), Խաշուր (նոճի), Մայրու լեռներ (ըստ Rowton-ի ՀՏ-ի և Ամանուսի սահմանին, մայրի), Խալիսում (ձիթենի), Մելարու (սոճի), Արանցախ (գետ, որի շրջակայքից Մարգուն Արաղացին արտահանում է խնձորենի, սալորենի, բթենի, խաղողի որթ, սերկեվի, նոենի), Նաիրի/Նահարաին (մարտակառքի փայտ, սոճի, գիլի, ուրումու, միքրու, դուրլու)։

3. Այս ծառատեսակները համապատասխանում են ՀՏ-ի կլիմայական պայմաններին և համահունչ են տարածքի հնագիտական հուշարձանների տվյալներին (Չայոնյու, Խաֆեր, Թեփեջիկ ևն)։ Վերջիններս համապատասխանում են միջագետքյան հուշարձանների նույնատիպ տվյալներին։

4. Փայտանյութը արտահանվել է Եփրատով վար, նաև ցամաքային ճանապարհով (հմնու. Էլուխտրի փայտը)։ Միջագետքի հետ փայտի առևտուրը կարող էր լինել ՀՏ-ի հասարակության «առտեսական հիմքը» (Whallon, Kantman 1969), փայտի առևտուրը՝ վերինեփրատյան «առևտրականների մենաշնորհը» (Mallowan 1947), Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ «հմնու փայտագործներ», իսկ մարտակառքերի արտադրությունը՝ «Հայաստանի առանձնահատկությունը» (Drews 1988)։ Փայտի առևտրի միջոցով հարավային Հայաստանի բնիկները աղրակի առնչության մեջ են մտել Միջագետքի և այլ հեռավոր շրջանների հետ, որոնց թվում էր նաև Եգիպտոսը։ Ֆորենցիայի բանգարանի եզիպտական մարտակառքը (որի փայտանյութը՝ հացենի և կեշի, հնարավոր էր ձեռք բերել միայն Հայկական լեռնաշխարհում), ուսվածի վկայությունն է։

5. Գրավոր և հնագիտական աղբյուրների տվյալները ցույց են տալիս, որ ՀՏ-ը պարբերաբար անտառահատվել է Զ.ս. III հազ. ընթացքում, ինչը կարող էր ազդել տարածքի բնակչության վրա (էրզիա, գետերի տիղմապատում)՝ նպաստելով անասնապահական կենցաղի ակտիվացմանը III հազ. վերջին։

ԳՐԵԿՅԱՆ ԵՐԿԱՆԴ (ԱԲ)

ՄԱՆԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՈՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՅ ՏՆԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զ.ս. I հազարամյակի հինարևելյան երկրների շարքում իր ուրույն տեղն ունի Մանայի թագավորությունը, որի պատմության էջերը, չնայած առանձին անդրադարձների, տակավին մնում են սակավ ուսումնասիրված։ Դրանց շարքին է դասվում նաև այդ թագավորության կազմում եղած կամ նրան ենթակա երկրների ու գավառների բացահայտումը և նրանց տեղադրությունը։

Ուրարտական և ասորեստանյան սեպագիր աղբյուրների մատուցած տվյալները թույլ են տալիս տարբերակել երեք խմբի շուրջ 12 վարչաքաղաքական միավորներ։

1. Տարածքներ, որոնք մաս են կազմել Մանայի քաղաքությանը և կառավարվել արքաների կողմից նշանակվող հաստուկ պաշտոնյաների՝ տեղապահների կողմից:
2. Տարածքներ, որոնք գտնվել են Մանայի գերիշխանության ներքո և կառավարվել ժառանգաբար իշխող ցեղային առաջնորդների կողմից, որոնք, փաստացի հանդիսանալով անկախ իշխողներ, պաշտոնապես համարվել են Մանայի քաղաքության «մեծ տեղապահներ»:
3. Տարածքներ, որոնք հանդիսացել են «անկախ» երկրներ և, առաժամանակ, գտնվել Մանայի ազդեցության ոլորտում:

Ըստ այդմ՝ տարբերակով ենք հետևյալ փառաբաղաբան կամ միավորները.

I - զավառներ.

1. «Իգիլտու քաղաքի շրջան» (Ուրմիայից հարավ և Փոքր Ջարի ակունքներից արևելք՝ Ջաղատու գետի վերին հոսանքի ձախափնյա ավազան, Բերդաձոր և հարակից տարածքներ),
 2. Մեսի (Ուրմիայից հարավ-արևելք՝ Ջաղատու գետի աջափնյա ավազան),
 3. Սուրիկաշ (Ջաղատու գետի ակունքների շրջան՝ Բանե, Սարբզ և Սահար քաղաքների միջև ընկած տարածքներ),
 4. Էրիշբեյանա քաղաքի շրջան (Ուրմիայից հարավ՝ Փոքր Ջար գետի ակունքների շրջան),
 5. Արսիյանիշ քաղաքի շրջան (Ուրմիայից հարավ՝ Փոքր Ջար գետի ակունքների շրջան),
 - II - «երկրներ» (Մանային ենթակա կամ ազդեցության ոլորտում գտնվող).
 6. Ջիկերաու (Ուրմիայից արևելք՝ Ջարմ-Ռուդ և Հաշաւ-Ռուդ գետերի ավազան),
 7. Ուիշդիշ (Ուրմիայի արևելյան ափամերձ տարածքներ),
 8. Սուրի (Ուրմիայից արևելք և հյուսիս-արևելք՝ մինչև Մարանդ, Թավրիզ ինչպես նաև Սոհենդ լեռն ընկած տարածքներ),
 9. Բիթ-Դայուկու (՝) (Ուրմիայից հարավ-արևելք՝ Կրզլ-ուզեն կամ Մաֆիդ-Ռուդ գետի հովիտ),
 10. Կումուրդայցիների երկիր (Ուրմիայից հարավ՝ Արսիյանիշ և Էրիշբեյանա քաղաքներին հարող տարածքներում, Փոքր Ջարի ակունքների շրջան),
 - 11-12. Ալլարբիա և Կարալլու (Ուրմիայից հարավ՝ Փոքր Ջարի վերին հոսանքի շրջան):
- Վարչաքաղաքական այս միավորների ընդգրկված տարածքները (Ուրմիայից հարավ և արևելք՝ Ջաղատու գետի ավազան, Փոքր Ջարի ակունքների շրջան, Կրզլ-ուզեն գետի միջին հոսանք) համապատասխանում են ներկայիս Իրանի Զուրդիստան, Արևելյան և Արևմտյան Ասորյալստական օստանների մեծագույն մասին:

ՀԱՄԱԼՅԱՆ ՏՈՐՔ ԵՊՂ

ՔՐԴՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԱՌԱՄՊՆԵԼԻ ԸՈՒՐՁ

Զուրդ առաջին պատմագիր Ծարաֆ-խանը (VI դ.), որպես քրդերի ծագման ամենահավանական վարկած, բերում է Ֆիրդուսու (X դ.) հաղորդած առասպելի Չոհակի (Չահակի) մասին: Վերջինիս անունը իրան. Դահակի (*Dahāk*) արարացված ձևն է՝ *دَاحَك* *dahāk*, որն «Ավեստայում» հիշվում է որպես Աեհիմանի ստեղծած օձակերպ աժի Էակներից (*Gandārva*, *Āzi Sruvara*, *Āzi Vīšāpa* և այլն) մեկը՝ *Āzi Dahāka* «իժ-Դահակ»: «Ավեստայում» Աժի Դահական եռազուխ վիշապ է, իսկ «Դենքարդում»

(Djnkard 3.229) համարվում է մագդեզական կրոնի հակառակորդը. նրանից, իբր, հուդայականության հիմնադրույթներն անցել են Աբրահամին:

Ըստ «Շահնամեի»՝ ծագումով արաբ, բռնակալ քուզալոր Ջոհակին ամեն օր գոհում էին երկու պատանի, որոնց գլխադեղով կերակրում էին նրա ուսերին անած երկու օձերին (եռագլուխ Աժի Դահակայի վերամարմնավորումը): Ուշ տարբերակով՝ գոհերի ուղեղները բառում էին Ջոհակի ուսերի վերքերին (Շարաֆ-խան): Սակայն, մի օր, գոհերին սպանողները սկսում են մի պատանու ուղեղի փոխարեն ծածուկ ոչխարի ուղեղ խառնել. այդպիսով, օրեցօր փրկված պատանիները թարքվում են լեռներում, և նրանցից, իբր, սերում է քյոյերի ցեղը (kord «լեռնական հովիվ», ըստ Շարաֆ-խանի՝ «քաջ»):

Ջոհակի մասին առյուծապատմությունը վկայված է Խորենացու (V դ.) և Իբն Կուրայբայի երկերում: Խորենացին, մեծ քամահարմարով, պատմում է նշված «պարսից անհարմար ու անճաշակ գրույցը» սոսկ ընդհանուր գծերով՝ առանց խոսելու փրկված պատանիների, բնականաբար՝ նաև քյոյերի մասին: Նա Ջոհակին անվանում է Բյուրասայի Աժդահակ և նույնացնում Կենտավրոս Պյոտիդայի հետ (հմմտ. որոշ հետազոտողների նշած կապը կենտավր և գանդիարվա անունների միջև): Պատմահայրը Բյուրասայիի կերպարը տարանջատում է մարաց Աժդահակից (հուն. Astagēd), սակայն վերջինիս տեսած «երազը» (Խոր. I ԻԶ) համեմատն է Ջոհակի երազին (Շահնամե, 1333):

Այսպիսով, հայ-իրանական դիցաբանության մեջ Աժդահակը այլազգի բունակալ-վիշապ է, որը չունի կոնկրետ էթնիկ պատկանելություն: Մ. Շվարցի կարծիքով՝ Dabaka անունը ծագում է խաբաներեն dāba- «ողամարդ», վախաներեն dai- «մարդ» արմատից (հմմտ. սկյութական դահ ցեղը, որից սերում էին պարթև Արշակունիները), այսինքն՝ Աժի Դահակա դիցանունը նշանակում է «վիշապամարդ»:

Ֆիլոլոգիան հայտնում է Ջոհակին մարդկային գոհեր մատուցած սպասավորների անունները. խմատուն Արմայիլ (Ազմայիլ) և խորագետ Քարմայիլ (Գարմայիլ), որոնք «Շահնամեի» մի ձեռագրում հիշվում են Արմանք և Գարմանք տարբերակներով: Արմայիլը (Արմանք) համարվում է Դամավանդ լեռան (որի խառնարանում, իբր, շիրայված է Ջոհակը) շուրջ բնակվող մուսուլման ցեղապետների նախահայրը, հնարավոր է նաև, որ նա Արման երկրի (Թուրանի հարևանությամբ) անվանադիրն է: Իբն Կուրայբան վերջինիս կոչում է Արիայի, իսկ Քարմայիլի մասին ոչինչ չի գրում: Արմայիլը կամ Արամը (Aoram, Awram) նաև գուրանական ամենամեծ ցեղախմբի՝ ավրոմանների (սուրամի) անվանադիր նախնին է, որին, իբր, Դարեհ արքան տեղափանել է Դամավանդի շրջանից (E.B. Soane): Արմայիլի և Քարմայիլի հնարագիտության շնորհիվ՝ Ջոհակի համար նախատեսված գոհերի մի մասը ողջ է մնում: Ուշագրավ է, որ դեռ XIX դ., Դամավանդի շրջակայքում նշվում էր Ջոհակի բռնապետությունից ազատվելու օրը՝ عيد کردی (J. Morier):

Իբն Կուրայբայի համաձայն՝ մագապարծ պատանիներն ապաստանում էին Ֆարսի լեռներում: Ըստ մեթոքյա ուսումնասիրությունների՝ հենց այստեղից են քրդական նախարարքառներով խառող ցեղերը VIII-X դդ. տեղաշարժվել դեպի հյուսիս-արևմուտք, մինչդեռ գուրանական ցեղերը մերձկասպյան շրջաններից աստիճանաբար վերաբնակվել են հարավային տարածքներում:

**ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԱՆՐԱՔԱՂՅԱՆ ԹՅՈՒՆԵՐ ԹՅՈՒՐԲԱԼԵԶՈՒ
ՀԱՆՐԱՔԱՂՅԱՆ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏՆԲՈՍՏՈՒՄ**

Հայ-աղբեջանական հասկամաբանությունը Լեոնային Ղարաբաղի շուրջ որոշակի տեղաշարժեր ունեցավ ԽՍՀՄ փլուզումից հետո: Հակամարտության մեջ ներգրավվեցին տարածաշրջանի բոլոր երկրները՝ Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան և ԱՄՆ-ը: Վերջինների շնորհիվ Թուրքիան առանձնացավ իր առանձնահատուկ շահագրգռությամբ՝ խնդիրն անսպասելի աղբեջանական կողմի օգտին լուծելու մշակված քաղաքականությամբ: Խորհրդային Միության փլուզումից հետո, օգտվելով նոր ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակից, Թուրքիան փորձեց մակիկին Խորհրդային Միության բյուրքալեզու հանրապետություններում տարածել իր ազդեցությունը և ստեղծել բյուրքալեզու երկրների համադաշնություն, որտեղ գերիշխող դիրքերը վերապահվելու էր իրեն:

Ղարաբաղյան հանգույցը հենց սկզբից վերածվեց Թուրքիայի ու բյուրքալեզու հանրապետությունների միջև հարաբերությունների խորացման խանգարիչ գործոնի, բացառապես միաժամանակ Թուրքիայի՝ տարածաշրջանում ունեցած քաղաքական ծրագրերի և իրական համետ հնարավորությունների լիակատար անհամասլացվածությունը: Յուրաքանչյուր հանդերձ տարաբնույթ օգնություն՝ բյուրքական կողմը այդպես էլ չկարողացավ էական րեկում մտցնել Ղարաբաղյան հակամարտությանը աղբեջանամետ լուծում ստալու գործում, որը նրա կողմից լուրջ փաստարկ էր դիտվում բյուրքական համերաշխության ստեղծման ճանապարհին:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը լուրջ դժվարություններ ապրեց 1992թ. Անկարայում կայացած համաբյուրքական առաջին զագաթաժողովում: Թյուրքական համադաշնություն ստեղծելու, ինչպես նաև Ղարաբաղի հարցում Աղբեջանին համերաշխություն հայտնելու բյուրքական ծրագրերը ըմբռնում և աջակցություն չստացան կենտրոնախիական հանրապետությունների կողմից: Ավելին, «բյուրքական աշխարհի» ներսում գոյություն ունեցող և նոր ձևավորվող հակառակությունները, ինչպես նաև անցանկալի քաղաքական զարգացումներից խուսափելու հանգամանքը, պատճառ դարձան, որպեսզի հետաձգվի 1993թ. աշնանը Բաքվում նախատեսված երկրորդ զագաթաժողովի անցկացումը: Ի վերջո, 1994թ. հոկտեմբերին Ստամբուլում կայացած երկրորդ համաբյուրքական զագաթաժողովի եզրափակիչ հռչակագրի մեջ արձանագրվեց լուրջ Ղարաբաղյան հակամարտությունը ՄԱԿ-ի որոշումների շրջանակում լուծելու անհրաժեշտությունը: Սակայն առաջին հայացքից Աղբեջանի օգտին արված հայտարարությունը չէր նշանակում Բաքվի և Անկարայի դիրքերի պաշտպանում, քանզի Հայաստանի դեմ պատժամիջոցներ կիրառելու առաջարկը մերժվեց Նագաբրանի և մյուս ղեկավարների կողմից:

Ղարաբաղյան հիմնախնդրի զարգացումները խաչընդոտեցին Թուրքիայի ազդեցության հետագա ուժեղացմանը Աղբեջանում և ներքափանցմանը Կենտրոնական Ասիա: Աղբեջանում ղեկավար շրջանները փորձեր արեցին բարեկամելու աղբեջանա-ռուսական հարաբերությունները և խորացնել կապերը Իրանի հետ: Տեսանելի ապագայում Ղարաբաղյան հակամարտությունը և դրա կարգավորման գործընթացը էական դեր կկատարեն Բաքու-Անկարա հարաբերությունների հետագա զարգացումներում:

ԻՐԱՆՈՒՄ ԱՄՆ-Ի ԳԵՄԱՆԱՏԱՆ ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱ-ԻՐԱՆՅԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՓՈՒՂԸ

1977թ. ԱՄՆ-ի պետդեսպարատամենուի ծրագրավորման բաժնի ներկայացված ամերիկա-իրանյան հարաբերությունների հետագա զարգացման հետևակարների մասին վերլուծականը, ուր լուրջ անհամապատասխանություն էր արտահայտվում Իրանում հաստատացող քաղաքական իրադրության կապակցությամբ, ըստ արժանվույն չընդունվեց և չգնահատվեց երկրի քաղաքական ղեկավարության կողմից: Իրադարձության հետագա սրբնթաց զարգացումը և ԱՄՆ-ի քաղաքական շրջանակներում ամերիկա-իրանյան հարաբերությունների կայուն վերելքի մասին մասամբ շահամետ լոբբիի օգնությամբ արմատավորված պատկերացումները թույլ չէին տալիս կանխատեսումներ և վերլուծություններ կատարել այնպիսի ճշգրտությամբ, որը թույլ կտար ԱՄՆ-ին առաջ ընկնել դեպքերի զարգացումից վերահսկել իրավիճակը Իրանում: Իրադարձությունների հետագա զարգացման անորոշության դեմն առնելու համար ԱՄՆ-ը գործում էր մի քանի հարթություններում և տարբեր ուղիներով ձգտում էր կապեր հաստատել այն գործիչների հետ, որոնք կարող էին ճշանակալի դեր խաղալ ներքաղաքական ուժերի ղեկավարման գործում: Այնուամենայնիվ ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը Իրանում որոշակի առումով անակնկալ էր Քարտերի վարչակարգի համար և երակետային էր այնքանով, որ այդ փաստից հետո ԱՄՆ-ի քաղաքական ղեկավարությունը կանգնեց երկընտարների առջև կա՛մ ռազմական միջամտության դիմել Իրանում և ցույց տալ հարևան արաբական երկրներին, որ Պարսից ծոցում իր շահերի պաշտպանության համար ԱՄՆ-ը պատրաստ է դիմել ծայրահեղ միջոցների, կա՛մ էլ գործել ոչ-բաց ճակատով, կազմակերպել և աջակցել նախկին բարձրաստիճան զինվորականների և շահամետ տարրերի հակահեղափոխական ելույթներ՝ ընդդեմ նոր վարչակարգի: Պետք է հաշվի առնել, որ և՛ Իրանը, և՛ ԱՄՆ-ը պատգրաստվում էին առճակատման արդեն իսկ դեսպանատան գրավմանը նախորդող շրջանում: Դեսպանատան գրավումը տարերային ելույթ չէր, ինչպես հետագայում փորձում էին ներկայացնել որոշ ուսումնասիրողներ: Իրանը գիտակցում էր այդ քայլի հնարավոր հետևանքները, բայց և այնպես չխաբչեց իրանա-ամերիկյան հարաբերությունների սրումից: Իսլամական հեղափոխության նաստատումից հետո հեղափոխության ղեկավարները բախվեցին նոր հիմնահարցերի հետ՝ կապված քե՛ր երկրի ներքաղաքական կառուցվածքի հետ, քե՛ն արտաքին քաղաքական կուրսի հետ և այդ առումով դեսպանատան գրավումը ոչ միայն արտաքին ազդեցվության գործոն էր այլև վկայում ներքին որոշակի ուժերի փոխազդեցության մասին: Իրանա-ամերիկյան ճգնաժամը զգալի ազդեցություն ունեցավ ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքում, ուր բացի Զբիգնև Բրեճգինսկիի և Սայրուս Վենս «սկզբունքային հսկանարարությունից»՝ երկրի քաղաքական դիրքորոշումը ձևավորելու հարցում, բավական բարդ իրավիճակ էր ստեղծվել երկրի նախագահ Ջ. Քարտերի համար, որն ընտրությունների նախադրյալին կարիք ուներ վճռական և ցուցադրական քայլերի անձնական վարկանիշի բարձրացման համար: Ստեղծված ճգնաժամից դուրս գալու անկարողությունը թույլ տվեց ընդդիմադիր հանրապետականներին գրավել ծայրերի մեծամասնությունը և անցկացնել իրենց քեկնածու Ռոնալդ Ռեյգանին, որի իշխանության զալը հարմար առիթ էր Իրանի համար՝ հետ կանգնել իր կոշտ դիրքորոշումից և հետ վերադարձնել պատանդներին, ինչն էլ էականորեն նպաստեց զազաբնակեղին հասան ճգնաժամի լարվածության բուլացմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱԿԱՆ ՔՐԳԵՐԵՆԻ ԳՈՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՈՃԻ ՄԻ
ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՔԶ**

1. Հայաստանում ձևավորվող գրական քրդերենը աչքի ընկնող առաջընթաց ունի իր գեղարվեստական ոճի ընդարձակման ու հարստացման ճանապարհին: Այս ոճի կազմավորմանը լայն մասնակցություն ունեն ժողովրդական խոսքին յուրահատուկ երեք՝ առօրյա-խոսակցակիցը, կուլտուրական բարձր, բանաստեղծական (ֆոլկլորային) ոճերը և նոր՝ հրապարակախոսական ոճը, որոնք իրենց միասնության մեջ ստեղծում են նրա կայացման համար անհրաժեշտ լեզվական նյութի ու ռճական բազայի առկայության հնարավորություններ:

2. Գրական քրդերենի գեղարվեստական ոճը իր զարգացման ճանապարհին ընթանում է երկու հիմնական ուղղություններով՝ տեղի քուրդ հեղինակների չափածո և արձակ գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծման, նրանց անընդմեջ կատարելագործման ու հղկման ճանապարհով և համաշխարհային գրականության զուլխոյործոց կոթողների քարզմանությունների միջոցով: Այս տեսակետից գեղարվեստական գրականության լեզվի ու ոճի ձևավորման ուղղությամբ նշանակալի դեր են խաղում առաջին հերթին հայ և ռուս դասական ու ժամանակակից գրականության նմուշները՝ Արտյանի, Լեւոնտոսովի, Թումանյանի, Պուշկինի, Բուֆֆու, Տոլստոյի, Իսահակյանի, Չեխովի, Բոչարի, Տուրգենևի, Գոբկու, Չաբենցի և այլոց լավագույն ստեղծագործությունները, որոնց քարզմանությունները ստիպում են ձևավորվող գեղարվեստական խոսքի մեջ ներառել բանավոր առօրյա-խոսակցական, բանասիրական ու բարձր ոճի պատկանող լեզվառճական հսկայական գանձերը՝ տալով նրան հարուստ ու բազմաբովանդակ դրսևորում:

3. Գրական քրդերենի գեղարվեստական ոճը ուսումնասիրելիս մենք օգտվել ենք առկա գրականությունից, ինչպես նաև այս ոճին վերաբերող քրդագիտական ուսումնասիրություններից (Ա. Եֆիմովի «Գեղարվեստական խոսքի ռճաբանություն» /Մ.1967/, Մ. Խամոյանի «Քրդերեն լեզու և գրականություն» /Ե.1990/ և այլն): Ներկա գեկուցումը պարունակում է քրդական գեղարվեստական գրականության լեզվի ու ոճի մի քանի հարցերի ուսումնասիրության արդյունքները: Այս հարցերից են գեղարվեստական խոսքի բառապաշարի, դարձվածապաշարի և պարենիապաշարի ներկա վիճակը և հարստացման ուղիները, լեզվի այս երեք նյութական բնագավառների միավորների ռճական կիրառությունը, նորաբանությունների ու փոխառությունների ուղղությամբ նրա հարստացման հնարավորությունները և նրա փոխհարաբերությունները քրդերեն լեզվի այլ բարբառների հետ, որոնցով տարբեր երկրներում լույս է տեսնում հարուստ գրականությունն ու մամուլը:

ԱՄԵՐԻԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆԻՆ ՈՐՉԵՍ ԻՐԱՆ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

1941թ. սեպտեմբերի 16-ին Մոհամմեդ Ռեզա Փահլավին ստանձնեց երկրի ղեկավարությունը: Նոր շահի գահակալությունը սկսվեց Իրանի համար բարդ ու դժվարին պայմաններում: Երկիրը կարիք ուներ արտասրին ֆինանսու-տնտեսական օգնության, որը տվյալ պայմաններում կարող էին ցուցաբերել միայն ԱՄՆ-ը: 1942թ. վերջին, վարչապետ Ղափան Էս Սալբանեի համաձայնությամբ Միացյալ Նահանգները Իրան մտցրին 30 հազարանոց բանակ, որի խնդիրն էր ապահովել ռազմական բեռների տեղափոխման անվտանգությունը դեպի Խորհրդային Միություն:

Իրանը կրկին օգնության խնդրանքով դիմեց Վաշինգտոնին: ԱՄՆ-ը արձագանքեցին այդ խնդրանքին, քանի որ հնարավորություն էր ստեղծվում իրենց ազդեցությունը տարածել Խորհրդային Միության հարևան երկրում:

Բացի ֆինանսական և տնտեսական օգնություններից, Իրան ներքափանցեցին մեծ թվով ամերիկյան խորհրդականներ:

1943թ. ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտը մշակեց այսպես կոչված «հովանավորման» քաղաքականությունը, որը հետպատերազմյան տարիներին շարունակվեց մահ հաջորդ գրեթե բոլոր նախագահների կողմից: Այդ քաղաքականության էությունը կայանում էր նրանում, որպեսզի ամերիկյան կենսական գոտիներում «օգնության» մեխանիզմի շնորհիվ ստեղծվեն ազդեցության ուժեղ լծակներ: Անտարակույս, Իրանը մտնում էր ամերիկյան կենսական շահերի գոտու մեջ՝ ոչ միայն մալթի և բնական ռետուրների, այլև գրաված կարեւորագույն ռազմավարական դիրքի շնորհիվ:

Այսպիսով, հետպատերազմյան ժամանակաշրջանից մինչև 1954թ. ԱՄՆ-ը Իրանին պարտքերի և նպաստների տեսքով տվեցին 46,6 մլն., «IV կետի» շրջանակներում 72,2մլն., ռազմական օգնություն՝ (սկսած 1947թ.-ից) 175մլն., անհատալի օգնություն՝ 45մլն.: Այս քաղաքականության միջոցով ԱՄՆ-ը Իրանից «դուրս վոնդեցին» Իրանի նախկին «տերերին» Անգլիային և Խորհրդային Միությանը:

Վարչապետ Մոսադեղի կառավարության ժամանակ ԱՄՆ-ը կրճատեցին օգնության քանակը, քանի որ վարչապետին հարում էր «Թուղե» կուսակցությունը, որն, ըստ էության, կոմունիստական էր, և ԱՄՆ-ը թույլ չէին կարող տալ Խորհրդային Միության ազդեցության ուժեղացումը Իրանում: Նույնիսկ, եթե 1951թ. Մոսադեղը 120 մլն. դոլարի օգնության խնդրանքով դիմեց ԱՄՆ-ին, վերջիններս մերժեցին՝ պատճառաբանելով, որ Իրանը բավականին եկամուտ է ստանում նավթային ռետուրների շահագործումից: ԱՄՆ-ը գեներալ Ջակեդիի օգնությամբ իրականացրին «Այաթ» կոդավորված օպերացիան, որի շնորհիվ իշխանագրկվեց և ձերբակալվեց Մոսադեղը: «Այաթ» օպերացիան ԱՄՆ-ին արժեցավ 100.000 - 200.000 դոլար:

1953թ. հուլիսին ԱՄՆ-ը փակեցին Իրանի բյուջեի ճեղքվածքը: Մոսադեղի պաշտոնակալությունից հետո սկսվեց ամերիկյան օգնությունների տարափ: 1955թ. Իրանը մտավ ՄԵՆՏՕ-ի պակտի մեջ: Կարեւորելով Իրանի հանգուցային դերը մերձավորարևելյան ռազմական այս բլրի մեջ, ԱՄՆ ավելացրին Տրումենի դոկտրինայի «IV կետով» սահմանված օգնության փայաբաժինը Իրանին: Պետք է նշել, որ ԱՄՆ-ի օգնությունները միայն դրամական տեսքով չէին մտնում Իրան:

Այսպիսով, հարկ է նշել, որ Իրանի համար վճռորոշ յոթ տարիների ընթացքում, ԱՄՆ-ը շուրջ 1 մլրդ. դոլարի օգնություն հատկացրեցին Իրանին: Չնայած ԱՄՆ-ն իրենց

արտաքին քաղաքականության մեջ առաջնորդվում էին սեփական շահերով, այնուամենայնիվ այս օգնությունները մեծապես նպաստեցին Իրանի անտեսության զարգացմանը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՎԱՏԵՐԻՆԱ (ԵՄՂ)

ՀԱՎԱՏԱԽԵՎՈՒԹՅԱՆ ԿՐՈՆՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ

ՀԱՅԵՅԱԿԵՏԵՐԻ ԸՈՒՐՁ

Քրիստոնեական ավանդույթում կանոնակարգված սրբերին կարելի է տաքադասել երկու խմբի՝ հանուն հավատքի իրենց կյանքը զոհած մահադատակների և աշխարհիկ կյանքից կամավոր հրաժարված ճգնավորների:

Հաճախ, ճգնակյացի կենսաձևն ընտրած անձինք Աստծուն այնքան էին նվիրվում, որ չբավարարվելով հասարակական կյանքից հեռանալով՝ իրենց ենթարկում էին հոգեբանական և ֆիզիկական այնպիսի զանազան սահմանափակումների, որոնք ոչ միայն գերազանցում էին մարդկային օրգանիզմի հնարավորությունները, այլև հակասում էին մարդու կենսագոյության տարրական օրենքներին: Նրանց քվում առանձնահատուկ խավ էին կազմում այն ճգնավորները, ովքեր գիտակցաբար հրաժարվում էին հասարակության հետ խելամիտ վարքագծով առնչվելուց: Քրիստոնեության մեջ մյուս նվիրյալները կռվեցին հավատախններ (юродивые):

Այս երեւոյթն ատկա և նաև իսլամում, որտեղ հավատախնները հայտնի են مجانين عقلا (օղալա-յե մաջանին՝ իմաստուն խենթեր), جذوبان (մաջոբան՝ [Աստծո սիրով] զերվածներ) և այլ անվանումներով:

Կամավոր գրկանքների ծայրահեղ քացասական ազդեցությունը նյարդային համակարգի վրա մարդուն ոչ հազվադեպ հասցնում էր խելահեղության, այսինքն՝ կարող էր վերածվել իսկական խենթության: Ե՛վ ակամա, և՛ կամադրված խենթությունը դրսևորվում էր միևնույն վարքով, միայն այն տարբերությամբ, որ երկրորդ դեպքում հավատախնի պահվածքը մտածված խելահրաժարման արդյունք էր լինում: Երբեմն նրանց նմանության պատճառով և՛ քրիստոնեության մեջ, և՛ իսլամում սխալմամբ հասարակ խենթերը, որպես հավատախն, դասվել են սրբերի կարգը: Բացի այդ, հայտնի են դեպքեր, երբ վարքաբանական երկերում որոշ սուֆիներ ներկայացվում էին որպես «իմաստուն խենթեր»:

Իսլամական գրականության մեջ հավատախնների մասին պատումներում առավել հաճախ հիշատակվում են Բահուլը, Օլայանը, Լոդման-և Սաբախին, Լայխարը և ուրիշներ: Նրանցից շատերը մեծ հեղինակություն էին վայելում իրենց շքապատում: Այդ մասին են վկայում ակամավոր մի շարք բանաստեղծների՝ «իմաստուն խենթերին» վերագրվող ասույթների հիշատակումները: Բացի այդ, համաձայն միջնադարյան աղբյուրների, այդպիսի «իմաստունների» հետ խոբհեղակցելու էին գալիս նույնիսկ իշխանավորները: Հարուն ալ-Ռաշիդը, Մահմուդ Դազնավին, Թուրքի բեկը և ուրիշներ:

Հաճախ, հավատախնների ազդեցության տակ, մարդիկ ապաշխարում էին և ընտրում նրանց զաղափարներն ու կենսաձևը: Այս համզամանքը ևս հաստատում է, որ հավատախններն իրականում ոչ միայն հոգեկան հիվանդությամբ չէին տառապում, այլև ուժեղ, կամային անհատականություններ էին:

Կրթնակեցեալական, քաղաքական ու սոցիալական խնդիրների համակցումով բարդացած այս երևույթի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմել ճգնակեցության դրսևորումների մասին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ (ՍԻ)

ՏԱՀԱ ՀՈՒՄԵՅՆԻ «ՕՐԵՐԸ» ԻՆՏԵՆՍԻՎԱԿԱՆ ԵՐԿՐ ԵՎ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտական գրականության մեջ ժամանակագրական առումով հատուկ տեղ է գրավում XX դարի սկիզբը, երբ ձևավորվում է արձակագրության մեր ոճ՝ նովելը, և հետզհետե սկսում է դառնալ գերիշխող: Թեթև ընթերցվող այս ստեղծագործությունները մեծամասնորեն նկարագրում էին Եգիպտոսի կյանքն ու իրականությունը: Դրանք հիմնականում հասարակ գյուղացիների՝ ֆեյդաիների կյանքը, նիստուկացը, գյուղի անցույթարձն էին պատկերում:

Տաեա Հուսեյնը ծնվել է 1889թ. միջին բարեկեցիկ ընտանիքում: Դեռ վաղ մանկուց նա կորցնում է տեսողությունը, և ծնողները նրա ապագան տեսնում են իր նման շատերի օրինակով՝ մտածելով, որ նա կդառնա Դուբանի ընթերցող: Նա նախնական կրթությունը ստանում է գյուղի քոթքարում՝ սովորական մահմեդական մախսկրթական դպրոցում, ապա ալ-Ազհարին կից դպրոցում անցնում է աստվածաբանական գիտությունների լրիվ դասընթացը: Այստեղ նա լսում է հայտնի Մուհամմադ Աբդուլի դասախոսություններից մի քանիսը, ինչը խոր հետք է թողնում կույր աղայի հոգում: 1908թ. հիմնադրվում է Եգիպտական համալսարանը Կահիրեում, որտեղ 1912թ. ուսանում է Տաեա Հուսեյնը: Մեծ ազդեցություն և տպավորություններ ստանալով գրականության պատմության, փիլիսոփայության դասախոսություններից, երկտասարդ կույր հանճարը պատկերացնում է իր հետագա գործունեությունը:

1914թ. նա գրում և մեկ տարի անց տպագրում է գիտական թեզ կույր բանաստեղծ-փիլիսոփա Աբու ալ-Ալա ալ-Մաադիի ստեղծագործական ուղու մասին: Այս թեզից հետո համալսարանը մեծ ուշադրություն է ցուցաբերում շնորհաշատ կույր երիտասարդին և նրան ուղարկում են Փարիզ՝ գիտական կատարելագործման: Մորթոնում, սակայն, Հուսեյնը չի բավարարվում միայն ծրագրային դասընթացներով: Բացի դասական բանասիրությունից նա ուսումնասիրում է նոր ֆրանսիական գրականությունն ու արվեստը, քառերնը, Փարիզում այցելում մատչելի արարական գրականության ու խալանի մատչելի դասընթացներ:

Ֆրանսիացի բնադատների և գրականագետների աշխատանքների ազդեցությամբ հղկվում է նրա ճաշակը, ձևավորվում յուրահատուկ մեթոդը: Փարիզը Տաեա Հուսեյնի համար մեկ այլ նվեր էլ է պարգևում. այստեղ նա հանդիպում է իր ապագա ֆրանսուիի կնոջը:

1917թ. Մորթոնում նա պաշտպանում է արաբական պատմաբան Իբն Խալլունի մասին գիտական թեզ և երկու տարի անց վերադառնում է Կահիրե՝ իբրև Եգիպտական համալսարանի հին պատմության ամբիոնի պրոֆեսոր: 1925թ. համալսարանի բարեփոխումներից հետո նա փոխադրվում է արաբական գրականության պատմության ամբիոն:

1929թ. նա սկսում է աշխատել իր գլուխգործոցի՝ «Օրերը» ժամանակագրության վրա: Այս աշխատանքը բաղկացած է 2 մասից և ավարտվել է 1930թ.: Մենք փորձեցինք

պատկերացում տալ Տահա հուսեյնի կենսագրության մասին, քանի որ նրա կենսագրության I փուլը այս երկի պոեմն է հանդիսանում:

Տահա հուսեյնը, զգալով իրեն ժամանակագրության հերոս, որոշել է իր կյանքի մի փոքրիկ ամկյունը բացել և ներկայացնել աշխարհին՝ գեղարվեստորեն պատկերելով այն: Ինչպես գնահատել է Ի. Կրաչկովսկին. «Ստեղծագործության նշանակությունը ոչ միայն նրանում է, որ այն տալիս է հարուստ պատկերներով լի այնպիսի առօրյա, որը հասանելի է միայն հեղինակին, այլև նրանում, որ այս պատկերներին տրված է սոցիալական նշանակություն, այստեղ լայնակի կտրվածքով, առանց գեղարվեստականության խափանման, ներկայացված են փոքրիկ քաղաքի մարտնչող ուժերը, նորկայացված է հասարակությունների աճը, այն հակասությունների, որոնք դեռ բերելու են ավելի մեծ հակասությունների ամբողջ երկրի մակարդակով»:

Հետաքրքրաբաժան է նաև հեղինակի լեզուն և շարադրման ոճը: Գրքի ընթերցման ժամանակ մենք շատ յուրահատուկ զգացումներ ենք ապրում հագիսա, Նաիկական պատմությունը հետզհետե լսում է ուշադրությունը, հասնում բարձր ռդերգականության (օրինակ՝ եղբոր մահվան պատմության ժամանակ): Չարմանալի են կույր հեղինակի տված նկարագրությունները (Տահա Հուսեյնը կուրացել էր 4 տարեկան հասակում):

Ժամանակագրությունն իրենից ներկայացնում է ժամանակակից աբսբական գրականության մեջ գրական ստեղծագործության նոր ձև, որը XX դարի ընթացքում գտել է իր հետագա կիրառումը:

ԿՈՍՏԻՅԱՆ ԲՐԻՍՏԻՆԵ (ՍԻ)

ՍՅՈՒՆԻՔԻ ՕՐԲԵՂԱՆՆԵՐԸ XVIII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ

Սյունիքի Օրբելյանների իշխանական առնը եղել է Միջնադարյան Հայաստանի առավել ազդեցիկ և նշանավոր տոհմերից: XIII դարի սկզբին սեջուկ-թուրքերի դեմ հայ-վրացական զորքերի հաջող պայքարի արդյունքում հատուավելով Սյունիքում՝ Օրբելյանները շուտով այն դարձնում են իրենց ժառանգական տիրույթը: Շնորհիվ Մմբատ Օրբելյանի ճկուն քաղաքականության, այդ տոհմի քաղաքական դերն ու հեղինակությունը հատկապես ուժեղանում է XIII դարի կեսերին: Օրբելյան տան ժառանգները առանձնում են նաև տեղի հոգևոր իշխանությունը՝ հանձնինա Տաթևի Նախկապանների:

Օտար տիրակալների կամայականություններից իրենց տիրույթները պաշտպանելու նպատակով Օրբելյանները հետագայում (XIV-XVդդ.) դրանց որոշ մասը որպես վակֆ հանձնում են Տաթևի վանքին: XV դարի սկզբից Օրբելյանների իշխանությունը անկում է ապրում: Այն գրկվում է Սյունիքի տիրույթների մեծ մասից, սակայն մահից քիչ առաջ այդ տան ներկայացուցիչ Բեշքեն 1-ը 1437/8թ. հիշատակվում է որպես Անգեղակոթի իշխան: Օրբելյանների իշխանական տան ճյուղերից մեկի՝ Բուրբելյանների ներկայացուցիչները բռնի մահմեդականացվում են և սկսած XV դարից հիշատակվում Սյունիքի առանձին գյուղերի մեկիքների ու տանուտերերի շարքում: Սյունիքի Օրբելյանների իշխանական տան XIII-XV դարերի պատմությանն են նվիրված Սու. Օրբելյանի «Պատմություն տանն Միսական» պատմագրական երկը, ինչպես նաև ժամանակակից ուսումնասիրողներից Գ. Մ. Գրիգորյանի, Լ. Խաչիկյանի, Հ. Դ. Փափազյանի և այլոց հետազոտությունները:

Օրբեյան իշխանական տան հետնորդների ճակատագիրը XV-XVII դարերում փաստական նյութերի տրոջյան պատճառով մնում է չտամամասիված: Այդ շրջանի Բուրքեյանների պատմությանն է վերաբերում XVII դարի 70-ականներին պարսից շահ Սուլեյմանին հղված մի խնդրագրում տեղ գտած հիշատակությունը Դարսասի Բուրքեյու համայնքի կողմից Տաթևի վանքին հասցրած վճարների մասին: Սակայն XVIII-XIX դարերի սկզբնաղբյուրներում և փաստագրական նյութերում առկա են որոշ տվյալներ, որոնք վկայում են Օրբեյանների ժառանգների կողմից իրենց նախնիին հսկայական տիրույթների աննշան բեկորներին, որպես գավառների մեկիքներ, տանուտերեր և հոգևոր իշխանության ներկայացուցիչներ, տիրելու մասին:

Այսպես, Ղևոնդ Ալիշանը գրի է առել «Ուրբեյաններ» XVII-XVIII դարերի ճյուղագրությունը, առանց նշելու, սակայն, նրանց տիրույթները: Իշխանական այդ տոհմից սերված էին համարվում XVIII-XIX դդ. Անգեղակոթում և մոտակա Բոհակոթում իշխող Մելիք-Թանգյանները, Տաթևում և Բելխում իշխող Մելիք-Փարսադանյանները: Տաթևի Մելիք-Փարսադանյաններին Օրբեյանական ժազում է վերագրում նաև XIX դարի պատմագիր Ներսեսովը, որը իր «Թարիխե Սաֆի» աշխատության մեջ նշում է «Մելիք Մուսի (Մովսես), Մելիք Մանուչանի և Ռոստամ բեկ Օրբեյանովների» անունները, որոնք ինչպես հավաստում են Ղևոնդ Ալիշանը, Ե. Լալայանը ու XIX դարի փաստագրական նյութերը, սալյել են ռուսական տիրապետության ժամանակաշրջանում, եղել են Տաթևի տանուտերերը և հոգևոր իշխանության ներկայացուցիչներ:

Երևանի Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում է պահվում մի քա՛ղով՝ (շնորհագիր) տրված 1813/1814թ. Ֆաթհալի շահի կողմից Պետրոս Օրբեյանին: Այդ եզակի փաստաթղթի բնագրում պարսից շահը «Մամ-բեկ Օրբեյանի որդի Պետրոսի» դիմումի համաձայն հաստատում է վերջինիս ժառանգական իրավունքները Ամաղու գյուղի և Նորավանքի նկատմամբ՝ համձնարարելով իր որդի՝ Արաքսատականի կառավարիչ Աբբաս Միրզային հետևել, որպեսզի նրա տիրույթների նկատմամբ ռոնձգություններ չկատարվեն և ապօրինի հարկեր նրանից չգանձվեն:

Այս փաստերը հիմք են ապին պնդելու, որ չնայած իրենց իշխանության քուլացման ու որոշ ներկայացուցիչների (Բուրքեյան ճյուղի) բուն մահնդանացմանը Օրբեյանական տան ժառանգները գոյատևում են մինչև XVIII-XIX դարերը՝ հանդես գալով արդեն որպես Սյունիքի գյուղական մեկիքներ ու՝ հոգևորական վերնախավի անդամներ:

ՀԱՄԱԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՐՈՒԴ (ՊԻ)

«ՀԱՅՐԵՆԻՔԻ» ԸՆԿԱՍՄԱՆ ԸՈՒՐՑ (դրինահայերի օրինակով)

1. Ձեկուցման մեջ փորձ կարվի դիտարկել նոր տարածքի յուրացումը՝ հայկական գաղթականության օրինակով: Ցանկացած նոր տարածք ընկալվում է իբրև օտար, «քառտիկ» աշխարհի մի մաս, և նրա բնակեցումը պարտադիր ուղեկցվում է որոշ ծեսերով, որոնք ենթադրում են աշխարհարարման առասպելաբանական ենթատեքստ: Այսպես, Նոր Նախիջևան գաղթած դրինահայերը նախ կատարում են իրենց ապագա բնակության տարածքի և նրա կենտրոնի սինվոլիկ օրհնությունը, որտեղ հետագայում կանգնեցվում է եկեղեցի, որի շուրջը աստիճանաբար կառուցվում են մյուս շինությունները: Այնուհետև օժվում են տարածքի չորս կողմերը, ուր ևս կառուցվում են

եկեղեցիներ. այսպիսով տարածքը սահմանազատվում է «օտար» աշխարհից: Հետաքրքիր է, որ կենտրոնի օրինումը ուղեկցվում է Գրիմից Նոր Նախիջևան գաղթելու ճամապարհին մահացած հայերի հիշատակումով: Փաստորեն, կենտրոնը սիմվոլիկ կերպով ներառում է ճամապարհի հանգուցյալներին, որոնք ընկալվում են իբրև գոհ:

2. Բնակության վայր ընտրված նոր տարածքի օրինումը քահանայի կողմից գուցարդվում է հայ ժողովրդի պատմական անցյալից բաղած դրվագների ընթերցմամբ, ինչը հիշեցնում է արվայիկ արարչագործական ծխասկատարություններում նախնիների մասին առասպելական պատմությունների վերարտադրումը:

3. Մովսեսաբար հայրենիք, երկիր-երգիր, ծննդավայր հասկացությունները կապված են միմյանց հետ և՛ դեռ ավելին, հաճախ նույնացվում են: Գիտաբշխմանը ընթացքում արված հարցումների ժամանակ պարզվում է, որ հայրենիքը ընկալվում է նախ իբրև ծննդավայր: Ըստ առասպելաբանական մտածողության՝ հողը և արգանդը նույնացվում են և, համապատասխանաբար, հողին վերագրվում են ծնող մոր որոշ հատկանիշներ (Մ.Էլիադե, 1999): Գրիմահայերը նոր տարածքի ընտրությունից հետո որոշում են գերեզմանոցի տեղը, որը «յուրացվում է» Գրիմից բերված գերեզմանարարերի տեղադրությամբ, ու այդպիսով նոր տարածքը ստանձնում է «մայր-հողի» դերը:

4. Նոր տարածքի յուրացումը նախատեսում է նաև որոշ էրզիստենցիալ, զգացմունքային ընկալում: Նախ և առաջ ընտրված տարածքն իր տեսքով (բնակլիմայական պայմաններով, բնապատկերով) հնարավորության սահմաններում պիտի նման լինի մոսկվին տարածքին՝ երկիր-հայրենիքին: Նոր տարածքում հիմնադրված գյուղերին ու եկեղեցիներին արվում են նախկին բնակավայրերի և եկեղեցիների անունները, նախկին եկեղեցիներից բերված խերթ, համապատասխանաբար, տեղադրվում են նոր եկեղեցիներում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՍԳ (ՍԳ)

ՔՐԳԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՈՐԳԵՄ ՏԱՐԱԾԱՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԳԵԼԱԿ ԵՎ ԽԹԱՆԻԶ

1. Քրդական հարցի որևէ լուծում կախված է ոչ միայն տարածաշրջանի շուրջ միջազգային հարաբերությունների վիճակից, այլև քրդաբնակ շրջանների ներքին քաղաքական դրությունից: Տարածաշրջանում կառուցվածքային առումով ամենից կոտորակվածը քրդերն են:

2. Տարածաշրջանում միջազգային հարաբերությունների հետագա սրման և քարայցման պայմաններում քրդական հարցը կարևորվում է: Տերություններն այն օգտագործում են սեփական նպատակների իրականացման համար: Հետաքրքրության զլխավոր պատճառներից են քրդաբնակ տարածքների աշխարհագրա-ուսումնասիրական դիրքը և բնական պաշարները: Այս առումով քրդական հարցը միշտ դիտարկվում է ընդհանուր տարածաշրջանային խնդիրների համալիրում:

3. Քրդերով բնակեցված երկրների միջև լուսավորչական համագործակցությունը բավականին բարդ և խնդրահարույց է: Առկա են այդ երկրների միջպետական տարաբերույթ ներհակություններ, որոնց ավելանում է քրդական գործունի արգելակիչ պարագան, ինչը դժվարացնում է տարածաշրջանային համագործակցության հնարավորությունը: Հիմնականում երկրորդական դերով քրդական գործունի ակամայից նպատակ է վերոհիշյալ հանգամանքին:

4. Տարածաշրջանի քաղաքական պատակերը արձատապես փոփոխվել է: ՀՀ-ԼՂՀ առանցքն իրական հնարավորություններ ունի Այսրեղծկատում վճռորոշ դերակատարման հավակնելու: Հզորացող Իրանը այլևս նավակին շահական Պարսկաստանը չէ: Թուրքիան արևմուտքի աջակցությամբ հավակնում է տարածաշրջանային տերության կարգավիճակի:

5. Այս համալիրում քրդերի պետականության ստեղծման որևէ ծրագիր արդեն դառնում է ատուվել դժվար իրականանալի, որին արձատապես խաչընդոտում է պատմականորեն առկա Արևմուտք-Ռուսաստան հակամարտությունը: Իսկ Հյս. Իրաքի քրդական ինքնավարության արեւստական միավորը ԱՄՆ-Իսրայել խաղի արդյունք է:

6. Հայկական և քրդական հարցերը պետք է դիտարկել միասնության մեջ, քանզի մեկի լուծումը առանց մյուսի որոշման կլինի թերի և ժամանակավոր: Դրանք փոխկապակցված են և պահանջում են ներդաշնակ լուծում: Հայերի և քրդերի հողային պահանջները համընկնում են, ինչը խաչընդոտում է իրական համագործակցությանը:

7. Տարածաշրջանային համալիր համագործակցության զարգացումը արգելակելուց զատ քրդական գործունե ունի նաև խթանիչ դեր: Քրդերի համար գլխավոր բշնամին և մրցակիցը Թուրքիան է: Այս պատճառով քրդական գործունե շուրջ համախմբվելու եզրեր ունեն ՀՀ, ԻԻՀ, Ռուսաստանը, Սիրիան: Այս քաղաքական քրդական գործունե բազմակողմանի օգտագործման շնորհիվ կարող է արգելակել ԱՄՆ-Իսրայել Հովանու ներքո իրենց տարածքային ամբողջականությանը սպառնող պանթուրքիստական նկրտումներին՝ «Մեծ Աղբրեջանից» մինչև Կենտրոնական Ասիա: Իսկ արդյունքում այս քաղաքական տարածաշրջանում ի գործու կլինի ստեղծել կայուն անվտանգության և համագործակցության համակարգ:

ՀԱՐՈՒԶՅՈՒՆՅԱՆ ԼԵՒԻԶ (ԱԲ)

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՈՆԱ-ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մեր կողմից ուսումնասիրվող խնդիրը գիտական բննարկման առարկա է դարձել մի շարք եղիմակների կողմից (Ն. Հովհաննիսյան, Վ. Վեյնով, Ա. Ազարիշև, Ն. Լիֆանով, Վ. Կառին, Ջ. Մադուր, Ա. Մայեր, Վ. Հիթթի, Ջ. Լենցովսկի, Բաներչի, Ջ. Ջոնքսոն, Ֆ. Մուրեյն, Յ. Մայրոլ և ուրիշներ):

Լիբանանի պետական կառուցվածքի հիմքում ընկած է կրոնա-դավանական սկզբունքը: Ի տարբերություն այլ արաբական երկրների, որտեղ բնակչության մեծամասնությունը զավանդում է իսլամ, Լիբանանում բնակչության կեսը քրիստոնյաներ են: Լիբանանը կազմված է քրիստոնյա և իսլամ համայնքներից (մարոնիներ, կաթոլիկներ, հայ-լուսավորչականներ, ուղղափառներ, բողոքականներ, հրեաներ, սուրմիներ, շիաներ, դրուզներ և այլն): Կրոնական խայտաբղետությունը մշտապես օգտագործվել է արևմտյան պետությունների կողմից տարածայնություններ երանդելու և իրենց ազդեցությունը Լիբանանում հաստատելու համար:

Ըստ 1943թ. ստորագրված «Ազգային պակտի», հանրապետության նախագահը պետք է լինի քրիստոնյա-մարոնի, վարչապետը՝ մուսուլման-սուրմի, խորհրդարանի նախագահը՝ մուսուլման-շիա, արտաքին գործերի նախարարը՝ հույն-ուղղափառ, պաշտպանության նախարարը՝ դրուզ և այլն: Այս սկզբունքը պահպանվում էր մեկ վաղախան համակարգում պաշտոնների և խորհրդարանում պատգամավորական տեղերի բաժանման ժամանակ: Պաշտոնյաների ընտրությունն ըստ կրոնական

պատկանելության և ոչ թե ըստ գործարար հատկանիշի թուլացնում է պետական համակարգը: Համաձայն «Ազգային պակտի», որը սահմանում է Լիբանանի պետական կառուցվածքի, ներքին և արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքները, Լիբանանի քրիստոնյաները չպետք է փնտրեն որևէ արևմտյան պետության հովանավորություն, իսկ մուսուլմանները չպետք է փորձեն Լիբանանը միավորել որևէ արաբական պետության: «Ազգային պակտը», Լիբանանը համարելով արաբական երկիր, միաժամանակ ընդգծում է նրա հատուկ «քրիստոնեական» բնույթը: Սահմանվեց նաև, որ երկրի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի, պետական անվտանգության ղեկավարի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոններ կարող են զբաղեցնել միայն քրիստոնյա-մարոնի համայնքի ներկայացուցիչները: Ի հավելումն այս ամենի, ընդունվեց մի կնքնոր սկզբունք ևս. Լիբանանի խորհրդարանում մուսուլման յոգաբարձրություն հինգ պատգամավորի դիմաց ընտրել վեց քրիստոնյա պատգամավոր, որով ապահովվում էր քրիստոնյա պատգամավորների գերիշխանությունը երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում, իսկ քրիստոնյա պատգամավորների մեջ՝ մարոնիների գերիշխանությունը: Նշենք նաև, որ հայերը Լիբանանի խորհրդարանում ներկայացված են յոթ պատգամավորներով, իսկ երկրի կառավարության մեջ նախարարի մեկ պաշտոնը պատկանում է հայ համայնքի ներկայացուցչին: Լիբանանի անկախության նվաճումից հետո հաստատվեց քրիստոնյա-մարոնի համայնքի վերնախավի յուրատեսակ մենաշնորհ: Դրա հետևանքով հասարակական-քաղաքական ոլորտում և կառավարման բնագավառում ստորադաս վիճակում էին գտնվում ոչ միայն իսլամ համայնքները, այլ նաև մյուս քրիստոնեա համայնքները: Իսկ մուսուլմանական համայնքների մեջ ավելի նախապատվելի դիրքեր ունի առնենի համայնքը, մինչդեռ հատկապես շիա համայնքը, որն այսօր իր թվաքանակով ամենամեծն է, ոչ միայն մուսուլմանական, այլև լիբանանյան բոլոր համայնքների շարքում համարվում է առավել չլիցենզավոր:

Լիբանանի իսլամ բնակչությունը, որն այսօր կազմում է Լիբանանի ողջ բնակչության կեսից ավելին, պահանջում է «Ազգային պակտի» վերանայում և մուսուլմանների ավելի լայն մասնակցություն երկրի կառավարման գործում: Սա, իհարկե, չի համապատասխանում մարոնիների շահերին, որոնք չեն ցանկանում կորցնել իրենց դիրքերը: Այսօր Լիբանանի խորհրդարանում քրիստոնյաների և մուսուլմանների ներկայացուցչությունը հավասար է 5:5, նախկին 5:6 հարաբերակցության փոխարեն: Լիբանանում կրոնական համայնքները հավասարակշռելու գործում էական է երկրի նախագահի ճկուն քաղաքականությունը: Լիբանանի պետական կառուցվածքի կրոնա-դավանական համակարգի թալլ և հսկասական կողմնորոշումը հաճախ օգտվում են արտաքին ուժերը, մասնավորապես՝ ԱՄՆ-ն և Իսրայելը, որոնք իրենց համար անհրաժեշտ պահին սրում են Լիբանանի կրոնական համայնքների միջև գոյություն ունեցող հակասությունները:

ՀՈԿԱՆԵՍՅԱՆ ՍՐՏԱԿ (ԳՊՄԻ)

1995Թ. ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻ ԻՍՐԱՅԵԼԱ- ՊԱԳԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1990-ական թթ. Իսրայելի և Պաղեստինի ազատագրության կազմակերպության միջև կնքվեցին մի շարք համաձայնագրեր, այդ թվում և 1993 թ-ի Օսլոյի համաձայնագիրը

խաղաղության և տերիտորիալ հարցերի վերաբերյալ: Դրանցից յուրաքանչյուրը որոշակի քայլ էր խրախուսելու-պատշաճացնելու հասկանալիության կարգավորման ճանապարհին:

1995թ. սեպտեմբերի 24-ին Վաշինգտոնում Իսրայելի և ՊԱԿ-ի միջև ստորագրվեց «Իսրայելա-պաղեստինյան ժամանակավոր համաձայնագիր արևմտյան ափի և Դազայի շուրջ», որը ստացավ Օսլոյի երկրորդ համաձայնագիր անվանումը: Համաձայնագիրը նախատեսում էր.

1. Իսրայելական զորքերի դուրսբերում արաբական 6 քաղաքներից և 400 գյուղերից:
2. 1996թ. անցկացնել Պաղեստինյան Խորհրդի ընտրություններ, որը ունենալու է օրենսդիր և գործադիր իշխանություն:
3. Պաղեստինի վերջնական կարգավիճակի համար բանակցությունները պետք է սկսվեն հենց որ դա հնարավոր լինի, բայց ոչ ուշ, քան 1996-ի մայիսի 4-ը:
4. Կողմերը հաստատում են միմյանց փոխադարձ ճանաչումը: Նրանք ճանաչում են միմյանց քաղաքական և օրինական իրավունքները:

Կողմերը համաձայնվեցին ժամանակավոր փուլի վերաբերյալ, որը սկսվել էր 1994թ. Ի մայիսի 4-ին: Այդ փուլը չպետք է գերազանցեր 5 տարին: Մինչ պաղեստինյան Խորհրդի ընտրությունները, որոնք տեղի էին ունենալու 1996թ.-ին, պաղեստինցիները համձն էին ստանում ամբողջ պատասխանատվությունը կարգավիճակի և քաղաքացիական վարչության համար 6 քաղաքներում և Հերբոնի մի մասում (շրջան A), ինչպես նաև ադմինիստրատիվ և հասարակական կարգավիճակի համար՝ B գոտու գյուղերում և քաղաքներում: Դա նշանակում էր, որ պաղեստինցիները պատասխանատու էին վերոհիշյալի համար արևմտյան ափի 27 տոկոսում, որտեղ ապրում է պաղեստինյան բնակչության 98 տոկոսը: B գոտու վարչական պատասխանատվությունը մնում էր Իսրայելի վրա: Բացառությամբ Իսրայելին էր մնում պատասխանատվությունը C գոտում, որը ներառում էր մի շարք բնակավայրեր:

Իսրայելական զորքերի դուրսբերումը նախատեսված էր փուլերով: Դուրսբերման առաջին փուլը կապված էր A և B գոտու հետ և պետք է ավարտվեր պաղեստինյան Խորհրդի ընտրություններից 22 օր առաջ: Հետագա դուրսբերումը ծրագրավորված էր C գոտու համար և պետք է տեղի ունենար Խորհրդի բացումից հետո 18 ամսվա ընթացքում: Այն լինելու էր 3 փուլերով:

Մեր կարծիքով Օսլո 2-րդը նախօրոք կնքված համաձայնագրերից առավել կարևորն էր: Դիշու է շրջադարձային է համարվում 1993թ. Օսլոյի 1-ին համաձայնագիրը, սակայն պաղեստինցիներին կոնկրետ ինքնավարություն, փաստաթղթում նշված կոնկրետ առարձքների շրջանակներում տալիս է 1995թ. Օսլոյի 2-րդ համաձայնագիրը: Օսլոյի համաձայնագրի կարևորությունը մյուս կնքված համաձայնագրերի համեմատ մեր կարծիքով կայանում է նաև նրանում, որ այս համաձայնագիրը վերջնականապես որոշում է պաղեստինյան Խորհրդի թվակազմը, Խորհրդի գործունեության շրջանակները և բնույթը, պաղեստինյան ռազմականության թվակազմը, ստեղծման կարգը և վերջապես ավելացնում է պաղեստինցիներին համձնվելիք տարածքները:

Չնայած դրան, համաձայնագիրը ուներ նաև յուր թերություններ: Համաձայնագիրը չի պարունակում ոչ մի սահմանափակում հրեական բնակավայրերի կառուցման, պաղեստինյան աշխատավորների առաջ սահմանների փակման վերաբերյալ, որը սպառնիչ է պաղեստինյան տնտեսության համար և չի նախատեսում ոչ մի երաշխիք իսրայելական զորքերի դուրսբերման ժամկետացանկի պահպանման հարցում:

**ԼԹՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ՍՈՒԳԱՆՈՒՄ
ՅՕ-ԲԳ. ԳԱՐԻ ԵՐԿՐՈՐԳ. ԿԵՍԻՆ**

1. 639թ. արարների կողմից Եգիպտոսի նվաճումից հետո սկսվում է արարամահմեդական ցեղերի ներխուժը Սուդան: Այդ ժամանակ Հյուսիսային Աֆրիկայի երկրներում բնակչության մեջ գերակշռում էր եվրոպիկոս ռասան՝ կապված այդ երկրների աշխարհագրական դիրքի և եվրոպական երկրների ու ժողովուրդների հետ նրանց դարավոր շփումների հետ:
2. Արաբական արշավանքների ժամանակաշրջանում Սուդան էր կոչվում ոչ միայն ժամանակակից պետությունը, այլև՝ Սահարա անապատից հարավ ընկած մի շարք երկրներ: Արաբական ցեղերը, թափանցելով Սահարայից հարավ ընկած տարածքները և նկատելով նեգրոիդ ռասայի տարածվածությունը, այդ երկրները անվանեցին Սուդան կամ Սուդանի երկրներ՝ արաբերեն «սուդո» (սև) բառից:
3. Արաբամահմեդական ազդեցությունը գործնականում չվաժմիսց Սուդանի երկրների էթնիկական կազմը, ինչը չի կարելի ասել Սուդանի Դեմոկրատական Հանրապետության մասին: Դրա հետ մեկտեղ երկրի շատ շրջաններում, նրանց մեկուսացման հետ կապված, պոստկոլոնիալ ներփակ էթնիկական խմբեր:
4. Թուրքական արշավանքների և նվաճումների հետևանքով 18-րդ դարից սկսում են Սուդան թափանցել թուրքերը, իսկ նրանց հետ միասին նաև եվրոպացիներ և կովկասյան ժողովուրդներ՝ չերքեզներ, հայեր:
5. Ինչպես նախկինում՝ արաբական, թուրքական, անգլո-եգիպտական տիրապետությունների շրջանում, անկախության ձեռք բերումից (1956թ.) հետո էլ Սուդանում առկա են ունենում բավական բարդ, տարբեր ուղղությունների էթնոգենետիկ գործընթացներ: Իր կազմավորման ճանապարհին է սուդանյան կամ Սուդանի արաբական ազգը: Որոշ փոքր էթնիկական խմբեր միաձուլվում են արաբատյանացիների հետ: Այս բազմազան գործընթացները իրենց արտահայտությունն են գտնում մասայական գաղափարական համակարգերի տարածման մեջ, որոնցից են մահմեդական հոգևոր միաբանությունները, կրոնական համայնքները և նրանց բազմաթիվ աղանդներ:
6. Սուդանում պահպանված հնագույն էթնիկական խմբերից են մուրիացիները և բեշաները: Նուրիացիները 6-րդ դ. ընդունեցին քրիստոնեությունը, իսկ 14-17-րդ դդ. դարձան մահմեդական: Ժամանակակից էտապում մուրիական հասարակությունը փոխակերպման ժամանակաշրջան է ապրում: Մի կողմից արագորեն հնանում է նրանց սովանդական չեզոքացումն ու արաբիկավածությունը, իսկ մյուս կողմից նրանք ցուցաբերում են էթնիկական էնդոգամիայի ձգտումներ: Նուրիացիների հետ ծագումնաբանական կապեր ունեն ֆոքերը, որոնց անունով է կոչվում Հյուսիսային Սուդանի երկու լեռնային շրջաններից մեկը՝ Դարֆուրը:
7. Հյուսիսային Սուդանի արևելյան մասում ամենից շատ իրենց ինքնատիպությունն ու յուրօրինակությունն են պահպանում բեշաները, որոնց առանձին առեմացեղային խմբեր կան նաև Եթովպիայում և Եգիպտոսում:
8. Սուդանի կենտրոնական և հյուսիսային շրջաններում ապրող վերոհիշյալ ժողովուրդներն ու ազգությունները համեմատաբար խոշորներն են, ի տարբերություն երկրի հարավում բնակվող բազմաթիվ փոքր էթնիկական խմբերի, որոնց տարածքները բաժանվում են պետական սահմաններով: Այս բոլոր փոքր էթնոսները կարելի է դիտել որպես Սուդանի ձևավորվող արաբական ազգի յուրահատուկ էթնոգենետիկ պաշար,

քանի որ գտնվելով պետական սահմանի տարբեր կողմերում և ընդունելով տարբեր մշակույթների ու լեզվական միջավայրի ազդեցության տակ՝ նրանք էլ ավելի են բաժանվում իրարից:

9. Մահմեդականությունը և քրիստոնեությունը մրցակցում են Հարավային Սուդանում ազդեցության համար: Առավել նշանակություն ունեն մահմեդական կրոնական, ինչպես նաև կրոնաքաղաքական կազմակերպությունները, որոնց համակարգում գոյություն ունեն բազմաթիվ հոգևոր միաբանություններ, ուխտեր, որոնք միավորում են արաբաստղանցիներին այլ էթնոսների մեծ և փոքր խմբավորումների հետ: Ռիֆտերի ներքոն տեղի է ունենում նրա կազմի էթնիկական միավորումը, ելմանականում, ոչ արաբների ծախումը արաբների կողմից: Միայն հազվադեպ, ինչպես քեջաների շրջանում, արաբականացումը ընթանում է ավելի դանդաղ տեմպերով: Այս առումով բավական հետաքրքիր է նուրիսցիների և քեջաների համեմատությունը: Առաջիններս ունեն մի քանի հոգևոր ուխտեր և էթնիկական դեզինտեգրացիայի վատ արտահայտված ուղղվածություն, երկրորդների ճնշող մեծամասնությունը պատկանում է մեկ ուխտի և զնալով ավելի է համալսմբվում ազգության մեջ: Նախկին ցեղակիցները, մտնելով տարբեր կրոնական համայնքներ, դադարում են մտնել ամուսնական հարաբերությունների մեջ, քանի որ տարբեր դավանությունների ընդունումը որոշում է սոցիալական միջավայրի և սոցիալական ու մշակութային ուղղվածության ընդունումը:

10. Ազգագրագետները, պատմաբանները, սոցիոլոգները հաճախ են նշում իսլամի էթնոմիավորող և մշակութամիավորող դերը, սակայն հոգևոր ուխտերի և աղանդների առկայության պայմաններում երբեմն նկատվում է նման գործընթացների դանդաղեցում: Ներկայումս «սուդանցի» հասկացությունն առաջին հերթին արտահայտում է պետական-քաղաքական, ոչ թե էթնիկական միասնության խնայող: Էթնիկական տարբերություններն անխոստիքի են գոյակցվում են սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակների հետ: Այդ պատճառով առաջացած չափազանց մեծ բեռնացումը Սուդանի հյուսիսի և հարավի միջև լուրջ խաչընդոտ է հանդիսանում ազգային համախմբման ճանապարհին:

ԴԱՇԱՐՅԱՆ ՍՐՇՈՐ (ԱԻ)

ԿԻՂՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՀԱՐՅԻ ԸՈՒՐԶ

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո անգլիացիներին հաջողվում է Թուրքիային պարտադրել Կիլիկիայի կոնվենցիան (1878 խուլիս 4), որի համաձայն Անգլիային տրվում էր կղզու օկուպացման և կառավարման իրավունք՝ փոխարենը պարտավորվելով սուրբանական զանձաբան վճարել տարեկան 99800 ֆունտ և աջակցել սուրբանին Օսմանյան կայսրության ասիական տարածքների պաշտպանության հարցում: 1878թ խուլիսին անգլիական զորքերը մտնում են Կիլիկիա: Այսպիսով Կիլիկիայի վերածվեց անգլիական գաղութի: Անգլիական տիրապետության հաստատումից հետո կիլիկիայի ժողովուրդը պայքար է սկսում անկախության համար, որը հատկապես մեծ ծավալների է հասնում 1945ից սկսած, երբ Կիլիկիայի պորթերնը դառնում է միջազգային քաղաքականության և դիվանագիտության առարկա:

Ակտիվ մասնակցությունը Առաջին Համաշխարհային պատերազմում ֆաշիզմի տապալմանը, ինչպես նաև պատերազմի ավարտից հետո միջազգային ասպարեզում քաղաքական ուժերի փոփոխարեփոխության արմատական փոփոխությունները

անկախություն ձեռք բերելու նոր հույսեր արթնացրեցին կիսյրոսցիների մոտ: Արդեն 1945թ. հոկտեմբերի 10-ին անկախության պահանջով Լոնդոն է ժամանում կիսյրոսյան պատվիրակությունը, որի պահանջը, սակայն, մերժվում է անգլիական կառավարության կողմից, փոխարենը առաջարկելով միայն սահմանադրական փոփոխությունների ծրագիր: Միաժամանակ Կիսյրոսում ծավալված պայքարը ճնշելու համար անգլիացիները գործի են դնում բանակը:

1949-ից սկսած գործընթացին է միանում նաև Հունաստանը՝ պահանջելով Անգլիայից բանակցություններ սկսել Կիսյրոսի վերաբերյալ: Նույն թվականին Լոնդոն է մեկնում կիսյրոսցիների նոր պատվիրակություն՝ Հունաստանին միանալու՝ Էնոզիսի պահանջով: Ի պատասխան՝ անգլիացիները էլ ավելի են ռազմացնում բռնությունները:

1950թ. հունվարին Կիսյրոսի բանվորական կուսակցությունը ելիսկոպոս Մակարիոսի (որը նույն թվականի հոկտեմբերին ընտրվեց արքեպիսկոպոս) նախաձեռնությամբ կազմակերպվում է հասարակական կարծիքի հարցում, որին մասնակցած 229747 մարդուց 215108-ը արտահայտվում են Հունաստանին միանալու՝ Էնոզիսի օգտին: Հարցման արդյունքները ներկայացվում են Անգլիային, Հունաստանին և ՄԱԿ, որի կանոնադրության համաձայն (նշենք, որ այդ կանոնադրությունը ստորագրել էր նաև Անգլիան) Կիսյրոսի բնակչությունը ուներ սեփական բախտը ինքնուրույն առօրինելու իրավունք: Սակայն անգլիական իշխանությունները հրաժարվեցին ճանաչել հարցման արդյունքները, դրանք հայտարարելով կեղծ:

Հարցման արդյունքները բողոքովին այլ կերպ ընդունվեցին Հունաստանում: 1951թ. հունական պատրամենտը քննարկեց այն և հայտարարեց, որ այդ պահից սկսած Կիսյրոսի պրոբլեմը Հունաստանի ազգային քաղաքականության մի մասն է:

1954-ին հունական կողմի պահանջով Կիսյրոսի հարցը առաջին անգամ ՄԱԿ-ի քննարկմանը դրվեց իններորդ մատչյալի ժամանակ, սակայն Անգլիայի և ԱՄՆ-ի ջանքերով այս հարցի քննարկումը ձախողվեց:

Չգալով իրենց դեմ բերված փաստարկների լրջությունը և միևնույն ժամանակ չցանկանալով կորցնել իրենց համար ստրատեգիական նշանակություն ունեցող կղզին՝ անգլիական դիվանագիտությունը ելք էր արձնում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, և այդ ելքը գտնվեց: Բանն այն է, որ Կիսյրոսի բնակչությունը միատարր չէր: Այն բաղկացած էր մեծամասնություն կազմող հույներից և փոքրամասնություն կազմող թուրքերից (18%), որոնք տնտեսական և քաղաքական աջակցություն էին ստանում Թուրքիայից, և Հունաստանին միանալու դեպքում հունական ազդեցության տակ ընկնելու մտավախություն ունեին: Այս հանգամանքը օգտագործվեց Անգլիայի կողմից, և պրոբլեմի մեջ ներգրավվեց Թուրքիան, որպես Կիսյրոսի թուրք բնակչության շահերի պաշտպան: Անգլիայի խնդիրն էր միմիանց դեմ դուրս բերել Թուրքիայի և Հունաստանի շահերը, և դրանց բախտը օգտագործել իր օգտին՝ փորձելով սպացուցել, որ Կիսյրոսի կարգավիճակի որևէ փոփոխություն կհանգեցնի երկու պետությունների միջև լուրջ պրոբլեմների առաջացմանը:

Թուրքական դիվանագիտությունը ճարպկորեն միանում է այս գործընթացին: Նրանք հայտարարում են, որ Կիսյրոսը շուրջ 300 տարի հանդիսացել է Օսմանյան կայսրության գաղութը և որ իրենք ոչ պակաս իրավունքներ ունեն Կիսյրոսի նկատմամբ քան հույները: Իսկ Էնոզիսի պահանջների շարունակման դեպքում, ելնելով կղզու թուրքական բնակչության շահերից, Թուրքիան առիաված կլինի ստաջ բաշել կղզու բաժանման՝ քաքսիմի պահանջ: Թուրքիայի նախաձեռնությամբ կազմակերպվում են կիսյրոսի թուրքերի բողոքի ցույցեր՝ «Կիսյրոսը՝ թուրքական» կարգախոսով:

Ստեղծված ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար 1955թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 7-ը Լեռնոցում տեղի է ունենում կոնֆերանս՝ Անգլիայի, Հունաստանի և Թուրքիայի արտ. գործ. նախարարների մասնակցությամբ, որը սակայն ձախողվեց կողմերի անհամաձայնության պատճառով:

Ճգնաժամի կարգավորման հետագա գործընթացը կապված է Վաշինգտոնի միջամտության հետ: ԱՄՆ-ն մի կողմից անհանգստացած էր ՆԱՏՕ-ի անդամ երկու երկրների՝ Թուրքիայի և Հունաստանի միջև օրեցօր աճող տարածայնություններով, մյուս կողմից իր աշխարհագրական դիրքով կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող Կիպրոսը գիտում էր որպես ՆԱՏՕ-ի ապագա բազա: Ուստի նրա և Անգլիայի նախածեռնությամբ և ճնշմամբ Կիպրոսի հարցով հետագա բոլոր բանակցությունները անց են կացվում ՆԱՏՕ-ի շրջանակներում՝ ելնելով այդ բոլորի շահերից:

Արդեն 1958-ին ուրվագծվում էր հունա-թուրքա-անգլիական կոմպրոմիսի տարբերակը, որի էությունը հետևյալն էր. Անգլիան պետք է Կիպրոսին տար անկախություն, Հունաստանը պետք է իրաժարվեր Լեռնոցից, իսկ Թուրքիան՝ թաքսիմից: Միաժամանակ սկսվում են եռակողմյան կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքները: 1958թ. ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտ. գործ. նախարարների խորհուրդը որոշում կայացրեց Անգլիայի, Թուրքիայի և Հունաստանի արտ. գործ. նախարարների մասնակցությամբ համատեղ կոնֆերանսի անցկացման մասին, որը կայացավ 1959-ի փետրվարին Ցյուրիխում: Կոնֆերանսին մասնակցում էին նաև Կիպրոսի հունական և թուրքական համայնքների ներկայացուցիչները:

Արդյունքում ստորագրվեց եռակողմ նախնական համաձայնագիր, որը դրվեց նույն ամսին Լեռնոցում կայացած կոնֆերանսի ընդունած որոշման հիմքում: Այս որոշումը ստորագրվեց Անգլիայի, Թուրքիայի և Հունաստանի վարչապետների կողմից:

Որոշման համաձայն Կիպրոսը հռչակվում էր անկախ հանրապետություն՝ Անգլիայի, Թուրքիայի և Հունաստանի հովանավորության ներքո: Այստեղ պետք է տեղակայվեին ՆԱՏՕ-ի զորքերը. պաշտպանվում էին նաև անգլիական բազաները:

Կիպրոսի հանրապետության հռչակումը կայացավ 1960թ. օգոստոսի 16-ին: Նույն օրվանի հուլիսի 31-ին կայացան պառլամենտական ընտրություններ: Երկրի նախագահ ընտրվեց Մակարիոսը (հույն), փոխնախագահ՝ Զուհուրը (թուրք):

Թեպետ անկախության հռչակումը լիարժեք անկախություն չրեց Կիպրոսին, քանի որ այն մի կողմից կղզին իրավաբանորեն ամբարգրում էր որպես ՆԱՏՕ-ի և Անգլիայի ռազմական բազա, իսկ մյուս կողմից իրավունք էր վերապահում Անգլիային, Թուրքիային և Հունաստանին «անհրաժեշտության» դեպքում միջամտել Կիպրոսի ներքին գործերին, այնուամենայնիվ սա կիպրոսցիների երկարատև և համատ պայքարի արդյունքն էր:

ՂԱՇԱՐՀԱՆ ՎԱՇԳԵՆ (ԵԴ)

ՄԻ ԺԱՆԻ ՍԵՂԱԳԻՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿՈՄՂՅՈՒՏԵՐԱՅՈՒՄԸ

Կոմպյուտերային տեխնիկայի հույժ արագ զարգացման հետ կապված՝ վերջին տարիներին խնդիր առաջացավ սեպագիր հսկայածավալ նյութը տեղափոխել կոմպյուտերի հիշողություն: Այս խնդիրը հեշտորեն լուծելի է սեպագրի միջազգային տառադարձման կիրառմամբ: Մեր կողմից առաջարկվում է խնդրի լուծման այնպիսի տարբերակ, որը թույլ կտա այդ ամենն իրականացնել առանց տառադարձման

կիրառման: Կոմպյուտերի համար գրված այս տառատեսակները լիովին աբստրակտում են բիայնական, նորաստրական, պարսկական և ուզաբիքյան սեպագիր համակարգերի մոնումենտալ ձևերը: Տառատեսակները ստեղծվել, վերջնականապես մշակվել և առաջարկվել են 1998 թվականին՝ հեղինակի կողմից: Վերը նշված չորս համակարգերի կոմպյուտերացման համար մշակվել են երեք տարբեր մեթոդներ:

1. Լրիվ տարրալուծման մեթոդ: Այս մեթոդի հիմքում ընկած է սեպագրի տարրալուծումը պարզագույն բաղադրիչների՝ «եռանկյունների» և «գծիկների»:

2. Մասնակի տարրալուծման մեթոդ՝ սեպագրի տարրալուծումը որոշակի ամենահաճախ հանդիպող խմբերի:

3. Հնչյունական համապատասխանեցման մեթոդ՝ սեպագիր նշանների ուղղակի համադրումը կոմպյուտերի ստեղծաշարի հետ:

Ստորև ներկայացնում ենք տառատեսակների ընդհանուր բնութագիրը:

1. Բիայնական սեպագիր համակարգ:

Այս համակարգի կոմպյուտերացման հիմքում ընկած է 2-րդ մեթոդը: Սեպագրի նշանները բաժանվել են պարզագույն ուղղահայաց այլևս անբաժանելի միավորների: Արդյունքում ստացվել է 94 նիշերից բաղկացած համակարգ՝ բիայնական սեպագրի շուրջ 200 նշանանոց համակարգի դիմաց: Հիշեցնենք, որ ստեղծաշարի հնարավորությունները թույլ չեն տալիս 101-102-ից ավելի սիմվոլ ներմուծել:

2. Նորաստրական սեպագիր համակարգ:

Նորաստրական սեպագրի կոմպյուտերացման հիմքում 1-ին մեթոդի կիրառությունն է, քանի որ սեպագրի այս տեսակը չունի բիայնական սեպագրին բնորոշ առանձնահատկությունները (սեպանշանների եռանկյունաձևություն, սեպերի զազաթներից սկսվող գծիկների բացակայություն, զաղափարագրերի եռանկյունաձև տակավաթիվ քանակ), որը, նշանների մեծաքանակության հետ միասին, թույլ չի տալիս կիրառել 2-րդ մեթոդը (այն կիրառելուց ստացվում է շուրջ 1500 նիշանոց համակարգ՝ մոտ 600-ի դիմաց): Ուստի սեպագիրը տարրալուծվել է պարզագույն բաղադրիչների՝ եռանկյունների, գծիկների և դասնց մի քանի պարզագույն խմբերի, որոնք, ըստ տողից ունեցած բարձրության, բաշխվել են յոթ հորիզոնական գոտիներում: Արդյունքում ստացվել է 2 տառատեսակ՝ աստրական սեպագրում օգտագործվող 2 տարբեր չափի նշանախմբերի համար:

3. Պարսկական և ուզաբիքյան սեպագիր համակարգեր:

Պարզության շնորհիվ այս համակարգերի կոմպյուտերացումը ռա մի բարդություն չի ներկայացնում: Հնչյունական նշանները պարզապես կամապատասխանեցվել են ստեղծաշարի նույնանուն ստեղծերին: Սեպագրի տարրալուծումը միայն կբարդացնեք նշանների տպման պրոցեսը:

Տառատեսակները կարող են անհամեմատ դյուրացնել մասնագիտական գրականության հրապարակումը, և, որ ավելի կարևոր է, օգտագործվել կոմպյուտերով փիսկագրական բնույթի խնդիրների լուծման ու կոմբինատոր անալիզի համար:

ԵՂԻՏԱՆՔ-ՅԱԳՂԱՆ
(Կրեդորոշման փորձ)

Պատմական Եղիտանք (Եղիտակ, Եղիտուն, Եղատուն) գյուղը նոր ժամանակներում գտնվել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում, Լոռու նստիկանական շրջանում:

XVIII դարի վերջերին, ի թիվս 23 գյուղերի, այն հիշատակված է Օձունի վանքի գյուղերի թվում: Վերոնիշյալ 23 գյուղերը հիշատակված են Դուկաս Կարնեցի կաթողիկոսի կոնդակին ի պատասխան ուղարկված թղթում: Ըստ Գ. քահ. Աղանյանի, այդ կոնդակի մեջ խնդիր կա պոռնելու Սբ. Հովհան Օձնեցու նշանավոր վանքին պատկանող թեմը, որի «քյոթուն ու բոլոր կալվածագրերը կարել էին վանքի ավերվելու պատճառով»: «Հայաստանի և հարակից շրջանների տեղաբնակների բնակարանում» նույնիսկ մտավոր տեղադրման փորձ չի կատարված: Մեր կարծիքով, պատմական այս գյուղի տեղում կամ մոտակայքում է գտնվում ներկայիս Լոռու մարզի (նախկին Ստեփանավանի շրջանի) Յաղդան գյուղը:

1895թ. փետրվարի 3(15)-ի «Արձագանք» թերթում Գր. Երզնկյանը որոշակիորեն նշում է, որ Եղիտանքը գտնվում է Լեղոտարի (Լավար) Օվանասձորի ստորին մասում, համանուն գետակի աջ ափին, քարազլխին: Օվանասձորը նույն Հովհաննաձորը կամ Հովսեփաձորն է: Այդ անունով գյուղը գտնվում է նախկին Ստեփանավանի շրջանում, Հովանաձոր գետի ափին, Յաղդան գյուղից 3 կմ. հյուսիս-արևելք:

Հետաքրքիր է նաև, որ, ըստ Երզնկյանցի, Եղիտանքը, իսկ Տուտեի ցեղից առաջ՝ Կողեսը և դրանց սահմանակից տեղերը, պատկանել են Մամիկոնյան ցեղին, որի հին մեջեցյալների հանգստարանները դա են ապացուցում:

Ավելացնենք, որ Յաղդան գյուղը հարուստ է պատմաեռնագիտական հուշարձաններով. գյուղում և շրջակայքում պահպանվել են Կարմիր խաչ եկեղեցին (XVII դար), մատուռներ, գերեզմանոց՝ խաչքարերով (XIII-XVII դդ.), կամուրջ, գյուղատեղիներ:

ՔՐԳԱՎԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1970-90-ական թվականներին Թուրքիայում ծավալված բրդական շարժումը վերջինն ու ամենաընդգրկունն էր XX դարի բրդական ապստամբությունների և շարժումների ընդհանուր շարքում: Այն ստաջացավ Թուրքիայի կողմից երկրի ազգային փորքմասնությունների, այդ թվում բուրդ ազգաբնակչության նկատմամբ իրականացվող «սպիտակ զենացիոյի» քաղաքականության հետևանքով: Թուրքիայի Հանրապետության բոլոր սահմանադրությունները բացառել են այդ երկրում ոչ բուրդ ազգաբնակչության գոյությունը: Ըստ Թուրքիայի ներկայիս սահմանադրության թիվ 66 հոդվածի «Յուրաքանչյուր որ, ով ունի Թուրքիայի քաղաքացիություն, բուրդ է»:

Թուրքիայի հարավ-արևելյան շրջաններում, որտեղ բնակչության մեծամասնությունը բրդեր են, մինչև 90-ական թվականները կառավարությունը իրականացնում էր որոշակի տնտեսական քաղաքականություն: Այդ շրջանների զարգացման ծրագիր էր մշակվում: Այստեղ բնակչության կենսամակարդակը 4-5 անգամ ցածր էր Թուրքիայի Հանրապետության միջինից: Կանխատեսված ձևով բրդական շրջաններում ստեղծվում էր ազատ աշխատուժի հսկայական ավելցուկ, որը, բնականաբար, պետք է շարժվեր դեպի արևմուտքի խաշոր արդյունաբերական կենտրոնները: Այս պարագայում, բրդական էքսպորտի ծավալները դառնում էր անխտասպելի:

Ընդունելով կառավարության կողմից իրականացվող այս քաղաքականության հետևանքները, քրդական հասարակության մեջ 70-ական թվականներին ստեղծվեցին մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպություններ (Թուրքական Քուրդիստանի դեմոկրատական կուսակցություն, Ազատություն, Դեմոկրատական հերոսախաչական մշակութային միություն և այլն): Քուրդ մտավորականության հիմնական զանգվածը կենտրոնացած էր արևմուտքի քաղաքներում, հետևաբար վերը նշված կազմակերպությունները ձևավորվեցին և գործում էին այստեղ: Նրանք իրենց գործունեության հիմքում դրել էին ժողովրդավարության, սոցիալական ապահովության, գործազրկության և իրավահավասարության հետ կապված հարցեր, որոնք կազմում էին այդ տարիների Թուրքիայում գոյություն ունեցող կուսակցությունների հիմնական ծրագրային մասը: Միավրված չենք լինի, եթե ասենք, որ այդ կազմակերպությունները կտրված էին քրդական իրականությունից և չէին արտահայտում քուրդ ժողովրդի պայքարի իսկական նպատակները:

1974թ. Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի մի խումբ քուրդ ուսանողների կողմից ստեղծված «Անկարայի բարձրագույն կրթության հայրենասիրական դեմոկրատական միությունը» կարճ ժամանակահատվածում իր համախառնելը գտավ քրդաբնակ շրջաններում:

1975թ. Դիսքենեում (Անկարայի նահանգ) տեղի ունեցավ կազմակերպության առաջին ժողովը, որը հայտարարեց համաքրդական կուսակցության ստեղծման մասին: Ժողովում ընտրված «Բանվորական խումբը» (Կենտրոնական կոմիտեի լիազորություններով) որոշում ընդունեց նոր ծրագրի մշակման մասին, որը կհամապատասխանի քրդական հասարակության պահանջներին:

Երեք տարի անց, 1978թ. նոյեմբերի 27-ին Ֆիսե գյուղում (Դիսքերքիի նահանգ) զամբոված առաջին նստաշրջանում կազմակերպությունը վերանվանվեց Զրդական Բանվորական Կուսակցության (ԶԲԿ): Հատուկվեցին կուսակցության կանոնադրությունը, գործունեության նոր ծրագրեր, ընդունվեց դրոշմը: ԶԲԿ-ի նախագահ ընտրվեց Աբդուլլահ Օջալանը:

Կուսակցությունը իր գլխավոր նպատակ հայտարարեց Միասնական Անկախ Ժողովրդավարական Քուրդիստանի ստեղծումը: ԶԲԿ-ն սոցիալիստական կուսակցություն է, որն, ըստ կանոնադրության, դավանում է մարքս - լենինյան գաղափարախոսությանը:

Առաջին տարիներին ԶԲԿ-ն հիմնական շեշտը դնում էր գաղափարական-քաղաքական գործունեության վրա, կազմակերպում քաղաքական ակցիաներ, սակայն համոզվելով դրա անարդյունավետության մեջ, կուսակցությունը 1984թ. օգոստոսի 15-ին սկսեց զինված պարտիզանական պայքար:

ՄՀԵՐ-ՄԻՀՐԻ ԱՌԱՄԱՅԻՆ ԸՆԹՐՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՀԵՔԻԱՔՆԵՐՈՒՄ

Հայկական հրաշապատում հեքիաթների մի առանձին խումբ (քվով 17 հեքիաթ) պահպանել է դասական հնադարից հայտնի մեռնող և հարություն առնող աստծո առասպելների ավանդական մոտիվների հետքերը: Հեքիաթների այդ խմբում ակնհայտորեն արտացոլված է Յոթեն հատիկ աստծո հնազույն առասպելների մոտիվային առանցքը կազմող անդրաշխարհի տիրուհու և սիրո աստվածուհու (կամ Մայր աստվածուհու) հակամարտության քեման՝ հանուն մեռնող և հարություն առնող աստծո սիրո: Մեռնող, հառնող աստծո առասպելի պյուժեի ամբողջական զարգացումը հայկական հեքիաթներում, ցավոք, անավարտ է, քանզի ավելի ուշ ժամանակներում հին հայոց Յոթեն հատիկ աստծուն փոխարինելու է եկել հեռացող աստված, նույնպես հացամշակույթը հովանավորող Արև-Մեեր-Միքրա-Միերը: Արդյունքում երկու առասպելների արձագանքները թե՛ մոդերային, թե՛ գաղափարախոսական առումով համակցվել են մեկ պյուժեով պատմվող հայկական հեքիաթների մեջ: Ավելին, հեքիաթների առասպելական երկու շերտերն էլ դրսևորված են «Մասնա ծոեր» էպոսում, որը հայ հնագույն դիցաբանական աշխարհընկալման եսարտա աղբյուր է: Այս հանգամանքը բացատրում է կասկածն այն մասին, թե մեր հեքիաթներն, իբրև թափառիկ պյուժեներ, կարող էին հայկական միջավայր ներմուծել հին աշխարհի օրացուցային առասպելների բեկորները: Այդ դեպքում ինչպե՞ս պետք է նույն միջավայրում արմատներ չձգած հավատալիքները վերադարձվեին ազգային էպոսի մեջ:

Հավասարաչափ ուշագրավ են հայկական հեքիաթների առասպելական թե՛ առաջին, թե՛ երկրորդ շերտերը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Մեերի՝ հեռացող աստծո առասպելի շերտը, քանզի նոր լույս է ավառում հայոց մեջ միևրապաշտական հավատալիքների և ծեսերի վրա, որոնց մասին տեղեկություններն իսպառ բացակայում են հայ մատենագիրների երկերում: Մասնավորապես, հայտնի է դառնում, որ Կեղծ Պլուտարքոսից ավանդված Դիոքրիս անձնավորված լեռը նույն Արև Մանուկ - Փոքր Մեեր - Մասիս - Արարատի կերպավորումն է: Ընդ որում, Արևու կոչվող նրա հակառակորդը ոչ թե հունական ռազմի ատոված Արեսն է, ինչպես ընդունված է կարծել, այլ հայ էպոսի Սասունցի Դավիթը: Ինչպես էպոսում, այնպես էլ հեքիաթներում Փոքր Մեեր - Արև Մանուկը ժայռի (լեռան) մեջ է փակվում հոր՝ Դավիթի (Արեսի) հետ բախման մեջ մտնելուց և նրանից ապուսկ ստանալուց հետո: Հեքիաթներում Արև Մանուկը պատժվում է Արևից, որին նա նետահարելու փորձ է կատարում: Ուստի՝ Դիոքրիսի հոր անունը Կեղծ Պլուտարքոսին հասել է հայկական «Արև» անվանը հունական «ուս» վերջավորություն հավելումով: Հին հայոց մեջ Դավիթը (նրա նախնադրը) և Արև աստված է եղել, ինչպես և իր որդին՝ Փոքր Մեեր - Արև Մանուկը: Դավիթի կերպարն էպոսում չէր կարող պատահականորեն հայտնվել երկու արքիիների (Մեծ Մեերի և Փոքր Մեերի) միջև: Բնությունն աստվածացնող մեր նախնիք այդպես են պատկերացրել արշալույսի, կեսօրվա և վերջալույսի արևների հերթազարկությունը երկնականարում: Փոքր Մեեր - Արև Մանուկը նույն վերջալույսի աստվածն է, որը հորից պատժվելով և անիծվելով, մայր է մտնում Մասիս լեռան ետևում, այսինքն փակվում է լեռան մեջ: Հեքիաթներում նա «մեռելիքի» վիճակի է դատապարտված և կենդանանում է միայն գիշերները, քանզի անիծված է ցերեկվա Արևից: Այդպես գիշերովս աստղազարդ

երկնքում լուսինն է հայտնվում, որը կարծես գիշերվա նվաղած արև լինի, ինչպես Միքրա - Միքրն էր անվանվում հնդարիական դիցաբանության մեջ:

Հեթաբներում լեռան մեջ փակված կիսամեռ Արև Մանուկին հանդիպում է ծաղկունքի Աստվածուհին և տեղափոխելով դագաղի շուրջ դրված երկուսական կերտներն ու փարչերը՝ հարություն է ապիս նրան: Կերտները նույն այն ջահերն են, որոնք հանդիպում են Միքրին պատկերող հնադարյան որմնաքանդակներում: Այս պատկերն, ամենայն հավանականությամբ, խորհրդանշել է ափեզերական երկվորյան գաղափարը՝ հուր - ջուր ստրերքներով, որոնք կարող էին արտահայտել ինչպես գիշերվա և ցերեկվա, այնպես էլ ծնունդ և զարնան հերթափոխի խնաստը: Հավանաբար, հնում հայոց մեջ Մեերի սրբալուսններում վառվող ջահերի և ջրով լի սափորների նույնախիթ ծխական տեղափոխություններն են կատարել, որպեսզի նախատեն «մեռելիքի» եղած սիրելի աստծո վերադարձին: Այս մասին պարզորոշ ակնարկում է նաև «Արել - Մանուկին հեթաբի» ասացողը:

Ուշագրավ է, որ հայկական հեթաբների մի որոշակի խմբում Արև Մանուկ - Փոքր Մեերը ժառանգ է ունենում և, ի վերջո, կենդանանում ու դուրս է գալիս ժայռից: Ըստ երևույթին, հայոց մեջ եղել է, ինչ-որ մի ժամանակ, երբ ժողովուրդն, իրոք, Մեերին վերադարձած է պատկերացրել, իսկ աշխարհն՝ ավերված ու վերափոխված:

Մեերի հիմնավորյց առասպելի հայ հեթաբներում պահպանված պլուտոններից հայտնի արծազանքներն արտահայտվել են նաև ազգային տոներում: Այս առումով, ուշագրավ են Համբարձման և Տրեդեգի տոնախմբությունները, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել միերասպաշտության հնամենի ծիսական արարողությունների մասին:

ՍԵՆՏՐՅԱԼ ԿՍՐՈՆԵ (ՊԻ)

«NARRATIO DE REBUS ARMENIAE»-Ի ԱՂԱՅՈՒԲԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

1. Narratio-ի («Պատմություն հայոց հարցի մասին») պլուտոն հայ եկեղեցու պատմությունն է բյուզանդական եկեղեցու հետ իր հարաբերություններում՝ Նիկիայի ժողովից (325թ.) մինչև մոտ 700թ. ընկած ժամանակաշրջանում: Աղբյուրը գրված է քաղկեդոնիկ հեղինակի կողմից և բաժանվում է երեք մասի.

ա) հայ և բյուզանդական եկեղեցիների միության շրջան,

բ) հայ եկեղեցու կողմից Քաղկեդոնի ժողովի մերժման սկզբնավորման շրջան,

գ) բյուզանդական կայսրերի կողմից հայ և բյուզանդական եկեղեցիների միավորման հետագա անհաջող փորձերը:

Եթե աղբյուրի երկրորդ և երրորդ մասերը նվիրված են բացառապես հայ եկեղեցու պատմությանը, ապա առաջին մասը, սոսկ ընդհանուր գծերով շարադրելով Հայաստանի եկեղեցական և քաղաքական պատմությունը, առավելապես անդրադարձնում է IV-VI դդ. Բյուզանդական կայսրությունը փոքրեկող դավանական անցքերին: Այս առաջին ներածական մասը պարունակում է քաղկեդոնական դիրքերից շարադրված դավանաբանական անհրաժեշտ փաստեր՝ հիմնավորելու միաբնակ հայ եկեղեցու վարդապետության դատապարտումը:

2. Narratio-ն մեզ է հասել հունարեն թարգմանությամբ, հայերեն բնագիրը չի պահպանվել: Բազմաթիվ հատվածներում բացակայում են այն լուսաբանումները, որ

հունարենի՝ բնագիր լինելու դեպքում պիտի տրամադրվեին հույն ընթերցողին: Հեղինակը առանց մանրամասնելու իր միտքը, խառնում է այնպիսի դեպքերի, փաստերի և անհատների մասին, որոնց կարող էր իրագրել լինել միայն հայ ընթերցողը:

Ժամանակագրության կարգը ևս համապատասխանում է հայ պատմագրության բվագրության համակարգին:

3. Միջնադարյան երկու քաղկեղեղմական աղբյուրներ՝ Արսեն Սափարացու (IX դար) «Արաց և հայոց բաժանման մասին» փոքրածավալ աշխատությունը և Կ.Պոլսի Փոռ պատրիարքի (IX դար) «Թուրք սու Ջաքարիայ կաթողիկոս Հայոց Մեծաց» վերնագիրը կրող գործը բազմաթիվ հատվածներում զուգահեռներ ունեն խնդրո առարկա Narratio-ի հետ: Այդ զուգահեռները հաճախ կատարելապես բառացի են: Սակայն վերոհիշյալ երկու տեքստերը չեն կարող անմիջականորեն կախում ունենալ Narratio-ից, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ունի կարևոր տվյալներ, որոնք կամ բացակայում են Narratio-ում, կամ էլ վերջինիս մեջ ներկայացվում են բոլորովին այլ կերպ: Իր հերթին Narratio-ն բերում է այնպիսի փաստեր, որոնք բացակայում են այս տեքստերում, մինչդեռ քաղկեղեղմական դիրքերից շարադրված առյն փաստերը խայծ կարող էին հանդիսանալ այդ հեղինակների համար, եթե նրանց աղբյուր լիներ Narratio-ն: Մանրամասն քննությունն ապացուցում է, որ և Արսեն Սափարացին, և պատրիարք Փոռը օգտվել են մի հայերեն կոթած աղբյուրից:

4. Narratio-ն լիովին անկախ է հայ եկեղեցական պատմագրության ալվանդույթից: Կարևոր փաստեր և բազմաթիվ մանրամասներ, անտեսված կամ ձևափոխված միաբնակ պատմագիրների կողմից, հայտնի են դառնում շնորհիվ Narratio-ի:

Քաղկեղեղմիկ աղբյուրի համար ճակատագրական եղավ հայ պատմագրության ավանդույթի շրջանցումը: Պատասխական չէ, որ այժմ ունենք Narratio-ի հունարեն տարբերակը, ոչ թե երբեմնի հայերեն բնագիրը:

ՄԵԼՐՈՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ (ԳԻ)

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՒԶԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՄԵՎՈՐՈՒՄԸ Յ. Վ. ԳՅՈՒԹԻ
«ԱՐԵՎՄՏԱ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԻՎԱՆՈՒՄ»**

1819-ին հրատարակվեց Յ. Վ. Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը», որում հեղինակը ներկայացնում է Արևմտադրի և Արևելքի գրականության, մասնավորապես, պոեզիայի առանձնահատկությունները:

Արևմտյան գրականության մեջ ինչպես Գյոթեից առաջ, այնպես էլ հետո բազմիցս անդրադարձել են Արևելքի քեմային: Դեռևս XV-XVI դ. Արևմտադրի վարած գաղութային քաղաքականությունը գրականության մեջ հիմք դրեց ֆիդորենտալիզմի ձևավորմանը, որի ներկայացուցիչները իդեալականացնում էին արևելյան հերոսներին: Սակայն նրանք արևելյան ֆոնի վրա, արևելյան համդեքմանքով ներկայացնում էին արևմտյան մարդուն, նրա մտորումներն ու հույզերը, այսինքն՝ հերոսները արտաքինով արևելյան էին, իսկ գաղափարներով, ներաշխարհով՝ արևմտյան: Միայն Հերդերը, իսկ այնուհետև նրա բարեկամ ու գրական ժառանգորդ Գյոթեն կարողացան օրգանապես միացնել այս երկու աշխարհամասերի մշակույթն ու գրականությունը, «արևմտա-արևելյան» տերմինը օգտագործել որպես հոմանիշ «համամարդակայինի»: Այդ են

վկայում Հերդերի փիլիսոփայական հոդվածները, «Ժողովուրդների ծայրը» աշխատությունը, Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը»:

«Դիվանը» ստեղծվել է 1814-15թթ., ընդգրկում է 12 գրքեր՝ Մոզանի նամե, Հաֆեզ նամե, Ուշկ նամե, Թեֆկիր նամե, Ռենջ նամե, Հիկմետ նամե, Թիմուր նամե, Ջուլիկա նամե, Մաքի նամե, Մաքիալ նամե, Պարսիկ նամե և Խուլդ նամե: «Դիվանը» ստեղծման կարևորագույն խթանը հանդիսացավ ծեր բանաստեղծի սերը երիտասարդ կնոջ՝ Մարիանե Յունգի հանդեպ և արևելյան բանաստեղծությունների, մասնավորապես, Հաֆեզի ստեղծագործությունների ընթերցումը: «Դիվանին» կցված է նաև արձակ մասը՝ «Գրառումներ և հոդվածներ» «Դիվանը» լավագույնս ընկալելու համար»: Իր «Գրառումներում» Գյոթեն հանդես է գալիս որպես գրականագետ, իսկ «Դիվանում»՝ որպես պոետ: Որպես գրականագետ Գյոթեն կարողացավ բազմակողմանի ու խորը բնութագրել արևելյան և ամենից առաջ հաֆեզյան պոեզիան, որպես պոետ նա բացահայտեց արևելյան պոեզիայի առանձնահատկությունները, բառերի, նշանների, գույների նկատմամբ տածած արևելյան պոետների խորհրդավոր վերաբերմունքը: «Դիվանում» խառնված, միահյուսված են արևելյան սովորույթներն ու բարբերը արևմտյանի հետ՝ ստեղծելով արևմտա-արևելյան հարուստ կոլորիտ: Գյոթեն հաճախ է անդրադառնում արևելյան հեքոսներին, արևելյին բնորոշ մտքերին ու գաղափարներին, սակայն չի կարելի ասել, որ «Դիվանին» կառուցվածքն ու բովանդակությունը միայն արևելյան է, քանի որ ժողովածուում առկա են նաև գերմանական ժողովրդական երգի, բանահյուսության, անտիկ հունական գրականության տարրեր: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Գյոթեն «Դիվանում» պահպանել է արևելյան պոեզիայի թե՛ բովանդակային և թե՛ կառուցվածքային առանձնահատկությունները:

1. «Դիվանը» հարուստ է արևելյան լեքսիկական ժանրին բնորոշ բանաստեղծական ձևերով, առավելապես շատ է կիրառվել պարսկական գազելը,

2. Գյոթեն հաճախ պահպանել է արևելյան պոեզիային հատուկ հանգստությունը, օրինակ՝ aa, bb, cc,

3. «Դիվանում», ինչպես արևելյան պոեզիայում, առկա է յուրահատուկ հարգանք բառի, նրա երկու հիմնական հատկանիշների՝ խմաստի և բազմիմաստության նկատմամբ: Ծնորեիվ իր խմաստի՝ բառը ծառայում է որպես թուր, որ կարող է հաղթել նույնիսկ սուրբանին (օրինակ՝ Ֆիրդուսին՝ սուրբան Մահմադին), շնորհիվ իր բազմիմաստության բառը ծառայում է որպես վառան, որ բարցնում է բանաստեղծության իսկական խմաստը,

4. «Դիվանը» առանցքն են կազմում արևելյան պոեզիայի երեք հիմնական սկզբունքները՝ պոետի կերպարը, բանաստեղծական պատկերը և գեղագույն վեհ նպատակին ծառայելու ձգտումը,

5. «Դիվանին» բանաստեղծությունները այն չորս տարրերի ոգեշնչման արդյունքներն են, որոնք հարյուրամյակներ շարունակ ոգեշնչել են արևելյան պոետներին, դրանք են՝ սերը (ուշկ նամե), ատելությունը (ռենջ նամե), գինին (սաքի նամե) և թուրը (թիմուր նամե):

Գյոթեն, շնորհիվ իր ինքնատիպության և բացառիկ տաղանդի, կարողացավ պահպանել արևելյան պոեզիայի առանձնահատկությունները, արևելյան հերոսների ներաշխարհը, սակայն միաժամանակ չկորցնել սեփական ինքնատիպությունը: «Դիվանում» իշխում են պոեզիան, սերը, կիրքը, գինին. սրանք համամարդկային զգացմունքներ ու գաղափարներ են, «որոնք բնորոշ են թե՛ Արևելքին, թե՛ Արևմուտքին»:

Վերջում պետք է ցավով նշել, որ Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը», որ երկու հարյուրամյակ ոգեշնչում է բազմաթիվ պոետների, դեռևս չի բարգձմանվել հայերեն

**ԱԶԳԵՐԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ
ԱԳՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ (IX-XI Գ.Գ.)**

Միջնադարյան մուսուլմանական երկերը կարևոր աղբյուր են հանդիսանում ինչպես խալիֆայության, այնպես էլ նրա սահմաններից դուրս բնակվող ժողովուրդների և ցեղերի վերաբերյալ բազմաթույք տեղեկությունների համար:

Այդ սկզբնաղբյուրներում ներկայացնելով նրանց ապրելակերպը, հավատալիքները, սոցիալական և քաղաքական կազմավորումները, մուսուլման հեղինակները անդրադառնում են նաև այդ ժողովուրդներին բնորոշ հատկանիշներին՝ մարտաբանական տիպին, ազգային բնավորության ստանձնահատկություններին՝ գնահատելով դրանք բացասաբար կամ դրականորեն:

Իհարկե նրանց գնահատման չափանիշները լիովին իրական հիմքի վրա չեն, հաճախ պայմանավորված են որոշակի ստերեոտիպերով և նախապաշարմունքներով: Պետք է հաշվի առնել նաև այն քաղաքական և կրոնա-հոգեբանական դաշտը, որի պայմաններում ձևավորվում և գոյատևում է այդ մտացունենքը: Հաճախ, օրինակ, նրանց գնահատականները ավարտվում են ազգերի դասակարգմամբ: Եվ բնականաբար, արարները, հանդիսանում են ազգերի պոսկը, որոնք օժտված են արժանավոր և բարձր հատկություններով, իսկ այդ սանդղակի ամենացածր աստիճանին կանգնեցվում են «զինջիները» կամ սևամորթները, որոնք ներկայացված են որպես ստրուկների ամենացածր շերտը: Մովորաբար սևամորթները որպես ստրուկ օգտագործվում էին ամենածանր ֆիզիկական աշխատանքներում կամ ներքիններ էին:

Ուետք է նշել նաև, որ այդ դասադասությունները և ստերեոտիպները վերաբերում են ժողովուրդների կամ տարբեր նահանգների բնակիչների զանազան՝ մարդկային, մարտաբանական, մասնագիտական հակավածություններին, ֆիզիոլոգիական և անզամ սեռական հատկանիշներին: Հայտնի են մարաթացիների (ըստ երևույթին արամեացիներ) մասին Իբն ալ-Ֆակիհի բերած ծայրաստիճան բացասական գնահատականները: Կամ ալ-Մուկադդասիի բնորոշումները կայսրության այս կամ հատվածի բնակիչների վերաբերյալ: Օրինակ, նա գրում է, որ «...չկան ավելի ազաի քան մերթացիները... ավելի տգեղ քան խորեզմցիները, ավելի կովարար քան սամարղանդցիները և Շաշի բնակիչները»:

Մուսուլմանական կայսրության տարածքում բնակվող տարբեր ազգերի, նահանգների բնակիչների կերպարների վերլուծությունները հանդիպում են հատկապես աշխարհագրագետ հեղինակների՝ օրինակ Իբն ալ-Ֆակիհի, ալ-Մուկադդասիի և այլոց հայտնի աշխատություններում: Իսկ XI դ.-ից սկիզբ է առնում մի յուրատեսակ ժանր, որ կարելի է բնորոշել որպես ստրուկների գնման վերաբերյալ տրակտատներ: Սրանցում տարբեր ազգությունների ստրուկները բնութագրվում են այս կամ այն ուղղությամբ նրանց աշխատունակության կամ հմտությունների կիրառման տեսակետից:

Առաջին այսպիսի աշխատության հեղինակ է քաղաքացի քրիստոնյա, մասնագիտությամբ բժիշկ Իբն Բուտլանը: Բացի գործնական խորհուրդներից, որ պարունակում է այս աշխատությունը, հաղորդում է նաև հետաքրքրական ազգագրական տեղեկություններ տարբեր ազգերի բնավորության գծերի և այլ հատկանիշների մասին:

Չմայած միջնադարյան հեղինակների այս աշխատություններում տարբեր ազգերի նկատմամբ ներկայացվող բնորոշումները կամ ստերեոտիպները հաճախ սուր-յեկտիվ և կանխակալ բնույթ են կրում, երբեմն ինչ-որ տեղ պայմանավորված են կրոնա-

քաղաքական ազդեցությամբ, սակայն նրանք իրենց մեջ պարունակում են նաև ճշմարտության և օրյեկտիվության տարրեր: Բացի այդ, դրանք հետաքրքրական են նաև այն տեսակետից, որ հնարավորություն են ապահ արտակերպում ստանալ այլ ժողովուրդների նկատմամբ միջնադարյան արաբ-մուսուլմանական հասարակությունում ստեղծված վերաբերմունքի, նախապաշարմունքների, պատկերացումների, ինչպես նաև հենց իրենց սեփական աշխարհընկալման, էսթետիկական հայացքների մասին:

ՄԿՐՏՈՒՅԱԼ ՉԱՅԱԼԵ (ԵԴՂ)

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իսլամի ծագումը և զարգացումը VII դարում կապված էր արաբական հասարակության ընդերքում կատարվող պրոցեսների և քաղ առջիւղ-քաղաքական շարժումների հետ: Իսլամը դարձավ այս շարժումների գաղափարախոսական քաղաքը: Նորաստեղծ արաբական պետության ամրապնդման և համախալման պետության (Աբբասյան խալիֆայության) ձևավորման ընթացքում մեծ զարգացում սուրբեց մահմեդական իրավագիտությունը՝ Ֆիկհը, որը և ձևավորեց իսլամի վերաբերմունքը քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ:

Մերձավոր և Միջին Արևելքի, Միջին Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի նվաճված երկրներում արաբները հանդիպեցին զարգացման տարրեր ստաիճանների վրա կանգնած հասարակարգերի, որոնք պահանջում էին յուրահատուկ վերաբերմունք: Եվ դրան համապատասխան արաբական իրավագիտության մեջ մշակվեցին այն դրույթները, որոնք պիտի կարգավորեին իրենց փոխհարաբերությունները նվաճված երկրների ազգաբնակչության հետ:

Մուհամմեդ մարգարեից հետո Օմար բեն Խատտաբը (634-644) առաջին օրենսդիրն էր, որն ամրագրեց այն հարաբերությունները, որ պիտի ունենար խալմական իշխանությունը ոչ իսլամական կրոնների և պետությունների հետ: Դեռևս հիջրայի 2-րդ դարում գոյություն ունեին իրավաբանական դպրոցներ, որոնցից առավել հայտնի էին Ալ-Շաֆիի և Աբու Հանիֆի դպրոցները: Այս դպրոցների մեկնարանություններով պարզաբանված օրենսդրությունների մեջ հստակորեն է դրվում մահմեդական պետության ոչ մահմեդական պետությունների նկատմամբ վերաբերմունքի հարցը:

Հարցի ուսումնասիրման կարևոր աղբյուրներ են իրավագետներ Աբու Յուսուֆի (VIIդ.) «Հարկերի մատյանը», Մավադդիի (IXդ.) «Պետական կանոնների մատյանը», իսկ պատմագիտներից Ալ-Բալազորիի (IXդ.) «Երկրների նվաճման» գիրքը:

Մահմեդական իրավունքը Խալիֆայության հպատակներին բաժանում էր 3 խմբի՝ մահմեդականներ, զիմիներ, սաբուկներ: Չի կարելի անտեսել այն փաստը, որ զիմիների մասին եղած իրավական ձևակերպումները վերաբերում են առաջին հերթին Եգիպտոսի, Սաբիի, Միջագետքի ոչ-մահմեդականներին: Տեսականորեն զիմի էին համարվում միայն քրիստոնյաները, բայց ժամանակի ընթացքում ինքնաբերաբար այս խմբի մեջ մացվեցին զրադաշտականները և սաբիները (Խառան քաղաքի հեթանոսները):

Ըստ մահմեդական իրավունքի, մահմեդական համայնքի նվաճածն իրենն է, իսկ տեղական բնակչությունը միայն մահմեդական դառնալով կարող է հավատարմվել նվաճողի հետ: Ինչ վերաբերում է մահմեդականություն ընդունողին, ապա նա անձի և

ունեցվածքի ապահովություն կարող էր ձեռք բերել խալիֆայության հետ գլխահարկ (չիզյա) վճարելու պայմանագիր կնքելու միջոցով (ամսմ)։

Հետաքրքիր են արաբ գորավարների կնքած պայմանագրերը Ատրիքի, Միջագետքի, Հայաստանի և Վրաստանի քաղաքների հետ։ Այդ պայմանագրերը քեև ունեն բնդհանրություններ, այնուհանդերձ ունեն նաև ամեն մի երկրին վերաբերող հատուկ կետեր, որոնք նույնպես կարևոր են տարրեր երկրների պատմության ուսումնասիրման համար։

Վերին Միջագետքի Ռակկա քաղաքի բնակիչների հետ նվաճող գորավարի կնքած պայմանագրում ասվում է, որ այն տրվել է Ռակկա քաղաքին, նրա բնակչության, ունեցվածքի և եկեղեցիների ապահովության համար, որոնք չպետք է ավերվեն, բնակչությունը պիտի վճարի գլխահարկ և հավատարմի լինի արաբներին։ Նման բովանդակություն ունի նաև Եդեսիա քաղաքի հետ կնքած պայմանագրի տեքստը։

Ջառահ բեն Աբդուլլահ Հիբմի գորավարը, նվաճելով Թիֆլիսը, պայմանագիր է կնքում նրա բնակչության հետ, ըստ որի քաղաքի երկու մեծ հողակտորների և խաղողի այգիների եկամուտը լրիվ պիտի տրամադրվեր մուսուլմաններին։

Այսպես, երբ Մրվանը արշավում է Հայաստան, նրա շրջաններից մեկի բնակչության հետ պայմանագիր է կնքում, որ գեղեցիկ «սև մագերով և հոներեով և երկար քարքիչներով 50 ապառառի և 50 ապասավոր» տրամադրվեն նրան։

Իրավական շատ նորմերի հետ մեկտեղ համզամանորեն մշակվեց նաև հողային իրավունքը հայտանի օրենսգետ Աբու Յուսուֆի կողմից։ Հողային սեփականության և իրավունքի մասին համզամանորեն խոսում է նաև ալ-Բալազուրին իր «Երկրների նվաճման գրքում»։

Այսպիսով, քրիստոնյա սոցաբնակչության իրավական վիճակի ձևակերպումը մահմեդական իրավագիտության մեջ առաջին հերթին քիտում էր խալիֆայության շահերից և նպատակ ուներ ամրացնելու խալիֆայության դիրքերը նվաճված երկրներում։

ՄՈՎԱԽՍՅԱԼ ԱՐՏԱԿ (ԱԻ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԳԵՒՄԲՈՐՔ Բ. Ա. XX-XVIII ԳԱՐԵՐՈՒՄ (ԲՍՏ ՔԱՆԵՑԻ ԲՆԱԳՐԵՐԻ)

Դեռևս անցյալ դարում զանձախտագության հետևանքով, ապա 1925 թ. Բ. Հրոզմու կողմից սկսված պեղումների շնորհիվ Փոքր Ասիայի Քանեշ քաղաքից (Կեսարիայից մոտ 20 կմ հյւ.-արլ., Զյուլ-բեփե հնավայր) հայտնաբերվեցին հազարավոր կավե ապիկներ՝ զբված ասուրերեն, որոնք վկայում են Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի միջև Բ.ա. XX-XVIII դդ. գոյություն ունեցած առևտրական հարաբերությունների մասին։ Դրանցում հիշատակվում են նշված տարածքների շուրջ 120 բնակավայրեր, որոնք կապված են եղել առևտրամիություն կենտրոն Քանեշի և Քանեշ-Աշուր առևտրական մայրաղուի հետ, նշվում բազմաթիվ տեղեկություններ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացնելու տվյալ ժամանակաշրջանի ոչ միայն առևտրա-տնտեսական, այլև քաղաքական, էթնիկական և այլ իրավիճակները։

Չորսհազարամյա վաղեմության այդ բնագրերը անզնախտելի տեղեկություններ են պարունակում Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության վերաբերյալ, սակայն, անհասկանալիորեն, զրեթե չեն օգտագործվել հայագիտության

մեջ: Մեր ուսումնասիրության ոչ վերջնական արդյունքները ցույց են տալիս, որ Ք. ա. XX-XVIII դդ. Քանեշի և Քանեշ-Աշուր մայրաղու հետ կապի մեջ են եղել լեռնաշխարհի արևմտյան ու հարավային շուրջ չորս տասնյակ բնակավայրեր (Abum, Admuu, Amas/z, Aprum, Azamrum, Dadania, Degišana, D/Turhumit, Eluhut, Hāga, Hahhum, Haia, Hurama, Haššum, Karana, Kuburnat, Luhsatti, Mardaman, Nahur, Nihiria, Patna, Purattum, Šalahšua, Šamuba, Šimala, Šurpu, S/Zupana, Talhat, Tamni/Tawania, Tar(a)kum, Tegarama, Tilimra, Timalkia, Tuhpia, Uduu, Uršu և այլն), որոնցից մի քանիսը հայտնի են մակ այլ սկզբնաղբյուրներից: Քանեշի բնագրերը մեծարժեք տեղեկություններ են հաղորդում Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների, տնտեսական կյանքի, որոշ պատկերացում տալիս էքնիկական պատկերի վերաբերյալ:

ՅԱՇՐԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՆՏՈՒԱՆ ՍԱՆՎԵՆ (1904-1949) ԵՎ ՆՐԱ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԳԱՎԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԵ

Լևանտում, մասնավորաբար Լիբանանում գործող քաղաքական ուժերի շարքում իր ուրույն տեղն ու դերակատարությունն ունի Սիրիական ազգայնական սոցիալական կուսակցությունը (ՄԱՄԿ), որը հիմնել է Անտուան Սաադեն 1932-ին:

Անտուան (ժողովրդական տարախնչումով՝ Անտուն) Սաադեն ծնվել է Լեռնավիքանանի Շուեյբ գյուղում, ավարտել Բրումմանայի բարձրագույն դպրոցը, զբաղվել լրագրությամբ: 1932թ. Բեյրութում հիմնում է ՄԱՄԿ-ը, որը պայքարում է մանդատային իշխանությունների դեմ: Բազմաթիվ անգամներ բանտարկվում է վերջինների կողմից: Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին, խույս տալով հալածանքներից, հաստատվում է Արգենտինայում, որտեղից արդյունավետ ղեկավարում է անընդհատ հզորացող կուսակցության գործունեությունը: 1947-ին վերադառնում է Լիբանան և կոչ անում պայքարել Լևանտի պետությունների իշխանությունների և Պաղեստինում սիռնականների դեմ: Լիբանանյան իշխանությունների սադրանքներից որպես հակազդեցություն, 1949թ. հուլիսի 2-ին հռչակում է սիրիական ազգայնական սոցիալական ստաջին հեղափոխությունը, որն ավարտվում է ձախողությամբ: Սիրիայի բռնապետ Հուսնի ալ-Չախիր, որը խստասցել էր օգնել Սաադեին, նրան դավադրաբար ձերբակալում է Դամասկոսում և հանձնում լիբանանյան իշխանություններին, որոնք հապճեպ դատավարությունից հետո նրան զնդակահարում են 1949թ. հուլիսի 8-ի արևածագին: Չախող հեղաշրջման արդյունքում, ՄԱՄԿ-ի հարյուրավոր անդամներ բանտարկվեցին, մի քանիսը՝ մահապատժի ենթարկվեցին:

Իրենց ղեկավարի սպանությունը առավել եռանդ հաղորդեց ՄԱՄԿ-ի անդամներին: Կուսակցությունը կարևոր դերակատարություն ունեցավ Լիբանանի և Սիրիայի, մասնավորաբար 50-ական թվականների քաղաքական կյանքում, մասնակցեց Լիբանանի 1958 և 1975-1989 թվականների քաղաքացիական պատերազմներին, Իսրայելի դեմ Լիբանանյան դիմադրական շարժմանը:

ՄԱՄԿ-ի նշանաբանն է՝ «Կեցցե՛ Սիրիան»։ ՄԱՄԿ-ի համար, «Սիրիա» հասկացությունն բնորոշում է ներկայիս Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինյան ինքնավարության, Իսրայելի, Հորդանանի, Իրաքի, Բուվենյի և Կիպրոսի պետությունների տարածքը,

ման՝ Եգիպտոսի տարածքում Մինայի քերակղզին, Իրանի՝ Պարսից ծոցի ավաաններ՝ շրջանը և Թուրքիային նվիրաբերված Կիլիկիան ու Ալեքսանդրեսի սանջակը:

Անտուան Սաադեի գաղափարախոսության առաջնորդ միևնույն տարածքում սպարալ է միևնույն հավաքական շահերով առաջնորդվող հասարակություն-սոցիումն է. այստեղից էլ՝ կուսակցության անվան «սոցիալական» բաղադրիչը: Նրա համար, «ազգ» հասկացությունը բնորոշող հավաքականության համար երկրորդական նշանակություն ունեն լեզուն, կրոնը, դավանանքը և այլ գործոնները: «Մեկ վայրն ու միասնական կենսածնը պայման են ազգի գոյության ու ազգության առաջացման համար», - ասում է Սաադեն: Այս հիման վրա, ՍԱՄԿ-ի գաղափարախոսությունը «սիրիական ազգը» համարում է առանձին ազգ, «արաբական ազգերից» մեկը: Ընդունելով հանդերձ «արաբական ազգերի» համագործակցության կարևորությունն ու անհրաժեշտությունը, ՍԱՄԿ-ը մերժում է համաարաբականության գաղափարախոսությունը, որի հետևանքն եղավ արյունառ հակամարտությունը համաարաբական քաղաքական շարժումների, մասնավորապես, նասերականության և բաասականության հետ՝ հասկապես 50-ական բվականներին:

ՍԱՄԿ-ը նույնքան մերժում է «լիրանանականության» տեսությունը, որի հիմնական կողմն էր «Լիրանայան փառանգներ» ֆաշիստանտ կուսակցությունը:

Իր գաղափարախոսության մեջ, Ա. Սաադեն շեշտը դնում է անհատի ինքնամարման և ազգային հովիտի զարթոնքի, անհատի և ազգի կամքի գործոնների վրա: «Ազգի փրկությունը նրա հասարակական գիտակցության մեջ է», - գրում է նա: Նրա համար, առաջնային է ազգը, որի փառքի համար անհատը պարտավոր է զոհաբերել իր շահերը, մինչև իսկ՝ կյանքը:

Ա. Սաադեի և նրա հիմնած կուսակցության կյանքը, գործունեությունն ու գաղափարախոսությունը համարյա ամբողջովին անժամոք են հայ լայն հասարակայնությանն ու նույնիսկ գիտական շրջանակներին, մինչդեռ դրանք արժանի են խորը ուսումնասիրության՝ երկու պատճառով.

1. ՍԱՄԿ-ի գաղափարախոսությունը, լինելով ազգայնական, ուսանելի շատ կողմեր ունի հայ ազգային-ազգայնական գաղափարախոսության շարադրման համար:

2. ՍԱՄԿ-ի կողմից Թուրքիան և պաղեստինականությունը համարվում են ռիսերիմ թշնամի. հետևաբար, քաղաքական և այլ ոլորտներում հնարավոր են մերձեցումներ, մինչև իսկ համատեղ ձեռնարկներ ու գործողություններ հայ և սիրիական ազգայնականների միջև: Այս իմաստով, մեր ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական արդիական նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՅԱՆԵ (ՀԱԿ)

«ԱՐԱՐԶԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԹԵՄԱՆ ՀԱՅՈՅ ԱՎԱՆԳԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՓԵՍԱՆՅՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ

Բազմաշերտ հարսանյաց ծեսում վերականգնվում են մի շարք նվիրագործության ծեսեր: Դրանց առկայությունը պայմանավորված է ոչ միայն հարսանիքն անցման ծես տխրաբանելով՝ իրրև հասարակական կարգավիճակի փոփոխություն, այլև այն պատճառով, որ հարսանիքը պատմականորեն ժառանգել է մինչամոսնական նվիրագործության ծեսերը կամ՝ նրանց տարրերը: Այս օրինակով ծեսերը տարբերվում են ամուսնության ծիսական համալիրից թե՛ իրենց կառուցվածքով

քն՝ հիմնական առասպելաբանական բովանդակությամբ: Մինչդեռ ամուսնական հանդիսությունները հիմնականում վավերացնում են զույգերի միացումը և այդ պատճառով այստեղ կարեւորվում է զույգերի միասին հանդես գալը (հմմտ. օր. քոնրի և եկեղեցական պատկեր, միասին նստեցնելու կամ իրար կերակրելու սովորությունները և այլն): Նվիրագործման համալիրն, ընդհակառակը, ենթադրում է փեսայի և հարսի միմյանցից առանձնացված ծխական և առասպելաբանական տեքստեր: Եվ եթե հարսի նվիրագործումը, իբրև կանանց անցման ծես, ավելի անհատականացված է, զուրկ բազմության մասնակցությունից, սակայն փեսային՝ որպես սոլամարդկանց խմբային անցումնային ծես, համայնքային արարողության բնույթ է կրում, որը պայմանավորված է արխայիկ հասարակություններում սոլամարդկանց անցումնային ծեսերը հաճախ օրացուցային որևէ տոնի հետ համընկնումը՝ դառնալով դրանց առանցքը (Л.А.Абрамян, 1983, 52): Զանի որ ման տոների բովանդակությունը, հիմնականում, կապվում է տեխնոլոգիայի առասպելաբանության հետ (В.Н.Топоров, 1992, 330), ժամի զարմանալի չէ, որ փեսային առնչվող բազմաթիվ ծեսերում առկա է այս քննադատական արտացոլումը:

Ըստ առասպելաբանական մտածողության՝ մարդը, հասարակությունը և աշխարհը միեւնոյն կառուցվածքն ունեն և, ինչպես փորձել է ցույց տալ Բ.Լինքոլնը, նշված երեք մակարդակները ընդհանուր արարման ցիկլի տարբեր փուլեր են կազմում: Այսպես, աշխարհի հիմքն է դառնում առաջին գոնը, որի մասերից ստեղծվում է տեխնոլոգիան, և տեխնոլոգիան տարբեր մասերից նորից վերականգնվում է առաջին մարդը՝ դառնալով արարման հաջորդ փուլի պոստեմպիրալ գոնը (Bruce Lincoln, 1991, 168-184):

Նման արարման առասպելի համատեքստում կարելի է դիտարկել փեսային ապիրելու (որտեղ առկա են գոհաբերության ծեսի մի շարք հատկանիշներ), ծառ կապելու և փեսային հագցնելու ծեսերը (հմմտ. առաջին մարդու արարման առասպելաբանության հետ): Վերջին ծեսում փեսայի կերպարի վերածությունը քայլ է տալիս առանձնացնել մեզոկոսմոսի (լոգոսական հասարակական կառուցվածքի) երկու մակարդակ՝ ա) ընտանիք և բ) իրական աշխարհ:

ՇՆՈՐԱԼՅԱՆ ՄԱՏՈՒԿ

ՔՐԳԵԿԱՆ ՀԱՐՅԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՎՆՏՈՒԹՅՈՒՆԸ

1920-ականներից սկսած, Հյւ. Զուրդիստանում չեն հանդարտվում բուրդ ժողովրդի խռովությունները: Զրդերը պահանջում են իրենց գոյության ճանաչումը:

Մարքս-լենինյան ուղղության տարբեր խմբեր ի հայտ եկան Թուրքական Զուրդիստանում 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին: 1978թ. նոյեմբերի 27-ին դրանցից շատերը միացան Զուրդիստանի Բանվորական Կուսակցությանը: 1984թ. ից ԶԲԿ-ն պարտիզանական պայքարակեց Հյուսիսային Զուրդիստանում: 1985-ին ԶԲԿ-ն ստեղծեց Զուրդիստանի Ազգային Ազատագրական Ճակատը և նրա ղեկավարն Զուրդիստանի Ժողովրդական Ազատագրական Բանակը: 1998-ին ԶԺԱԲ-ի շարքերում կռվում էր մոտ 15000 մարդ:

1999 թ. փետրվարի 15-ին Նայրոբիում ձերբակալվեց է ԶԲԿ-ի ղեկավար Աբդուլլահ Օջալանը: Վերջինս, մեղավոր ճանաչվելով դավաճանության և անջատվողականության մեջ, մահվան դատապարտվեց: Օջալանի նկատմամբ

մահապատժի որոշումը Եվրամիության համար դարձել է կարևոր խաղաքարտ, որով փորձ է արվում ճնշում գործադրել Թուրքիայի վրա:

Օջալանի մահապատժի հարցում Թուրքիայի քաղաքական շրջանակների մտաեցումը միանշանակ չէ: Դ-կեթ Բահելին՝ «Ազգայնական շարժում» կուսակցության ղեկավարը, հանդես է գալիս Օջալանին մահապատժի ենթարկելու դիրքերում, որով և հակադրվում է Էջեփին: Անշուշտ, Օջալանի մահապատժին հակադրվելիս Էջեփին մարդասիրությունն ամենևին չի հուզում: Այնուհայտ է, որ եթե Օջալանը մահապատժի ենթարկվելու փոխարեն դատապարտվի ցմահ բանտարկության, միևնույն է՝ ԶԲԿ-ն ղեկավարել չի կարող: Բայց մահապատժին ի կատար ածելու դեպքում Թուրքիան ոչ միայն կսրի իր հարաբերությունները ԵՄ-ի հետ, այլև ԶԲԿ-ին սկսումս կդնի անհապաղ նոր ղեկավար ընտրելու հարցի առջև:

Այժմ դիտարկենք բրդական հարցի լուծման հնարավոր ուղիները.

1. Եթե բրդերը հաղթեն Թուրքիային.

Ըստ բրդերի հավակնությունների նրանց է պատկանում Արևմտյան Հայաստանի մեծ մասը: Նրանք նույնիսկ անվանափոխել են և քրդացրել տեղանունները. Բիթլիսի՝ Գարզան, Կարսը և Բայազետը՝ Սարեհայ և այլն: Պահպանվել է միայն Վանի անվանումը: Մա պայմանավորված է քրդական շրջանների հավակնություններով, որոնք ձգտում են սեփականացնել Ուրարտուն՝ վերջինս քրդական համարելու միջոցով: Ըստ ԶԲԿ-ի քաղաքական քարտեզի Արևմտյան Հայաստանից հայերին հասնում է միայն Անին՝ իր շրջակայքով: Ինչպես մի քուրք լրագրող է գրել. «Եթե քուրքերը հանկարծ անհայտանան, ապա հյուսիսից շարժվող հայերը և հարավից մագլցող քրդերը Արևելյան Անատոլիայում իրար կոկոռող կկրճեն»:

Հաջորդ պարագան այն է, որ ամալս Զուրդխսանի տեղծումը խաչընդառում է Թուրքիայի պանթուրքական ծրագրերին: Այն ես մեկ վախճան է գորշ գայլերի նկրտումների դեմ:

2. Եթե քուրքերը վերջնականապես ճնշեն քրդական շարժումը.

Շատ հավանական է, որ Թուրքիան, ազատելով իր զինված ուժերը ԶԲԿ-ի հետ պայքարից, կավելացնի Վրաստանին և Ադրբեջանին ցույց տրվող ուղղման օգնության չափարածինը: Պարզ է, որ վերջիններս էլ կփորձեն իրենց տարածքային հարցերը լուծել ոչ միայն բանակցությունների միջոցով:

Ազատվելով քրդական գլխացավից Թուրքիայի հաջորդ քայլերը կլինեն ամտեսության վերականգնումը, Արևմտյան Հայաստանում քուրք բնակչության տավարացումը, հայկական մշակույթի սեփականացման շարունակությունը: Եվ ապա, ամրապնդելով իրենց դիրքերը միջազգային ասպարեզում, նրանք անշուշտ կփորձեն իրականացնել իրենց պանթուրքական ծրագրերը:

3. Եթե շարունակվի քրդական շարժումը.

Զրդերի հակաթուրքական պայքարը խաչընդառում է քուրք-վերաբնակիչների ներհոսքին Արևմտյան Հայաստան:

Զրդական շարժումը բուլացնում է Թուրքիային: Այսպես, միայն զրոսաշրջության բնագավառում տարեկան կորստները կազմել են 3 մլրդ. ԱՄՆ դոլլար:

Թուրքիայի պաշտոնական շրջանները պարբերաբար զրպարտում են Հայաստանին՝ քրդական շարժմանն օժանդակելու մեջ: Բերենք ամենաբարձր օրինակներից մեկը: Թուրքիայի ներքին գործերի նախարար Թանթանը «Համան» քերթին տված հարցազրույցում մասնավորապես շեշտել է. «Թուրքիայի դեմ սկզբում գործում էր հայկական ASALA կազմակերպությունը: Ավելի ուշ ԶԲԿ-ն էր, որի հետ

բախումներում սպանվել են հայ մարտիկներ, այնուհետև հայկական փողերով կազմավորվեց «Հըզբոլլահը»:

Այստեղ մոտացության է արվում «Հըզբոլլահի» շարքերն ի սկզբանե «Գոքզ գայլերի» գրոհայիններով համալրելու պարագան:

Հայաստան-ԶԲԿ կապերի մասին պետական մակարդակով վարվող տեսական քարոզչության բուն նպատակը Հայաստանի վրա մշտական ճնշումներ գործադրելու նոր պատրվակներ ունենալն է: Այսպես, ԶԲԿ-ին հետապնդելը պատրվակ դարձնելով՝ Թուրքիան պարբերաբար ներխուժում է Հյուսիսային Իրաք, և արդեն իսկ միջազգային կարծիքը հաշտեցվել է այդ իրականությանը: Հարմար առիթ որսալով՝ բուրբակյան բանակը կարող է փորձել նշյուն անել նաև Հայաստանում:

ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ՍԻ)

ԱՆԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՎԱՏԱԼՔՆԵՐԻ ԸՈՒՐՁ

Եզդիականությունը պատկանում է այն կրոնա-դավանական ժամանակների շարքին, որոնցում լայն տարածում է ստացել հոգիների տեղափոխությանը (արաբ. tanāsux) կամ հոգու վերամարմավորման (արաբ. հսմ) գաղափարը: Եզդիները այս հասկացությունները արտահայտելու համար գործածում են փոխարեքական հատուկ մի կեր, որը բառացի թարգմանությամբ նշանակում է «շապիկ փոխել» (քրդ. kiras guhastin):

Մահմեդական, մասնավորապես, ծայրահեղական շիական այն աղանդներում, որոնց հետևորդները նույնպես հավատում են վերածննդային, որպես կանոն, բացակայում է անդրշիրիմյան կյանքի մասին հատուկ պատկերացումը: Հառկանշական է, որ սրանցում նույնիսկ դրախտը կամ դժոխքը ավելի շուտ փոխարեքական ընկալման են արժանանում՝ մեկնաբանվելով որպես հոգու երանության կամ տանջանքի վիճակ հենց մարմնում, այլ ոչ անդրաշխարհում: Այս առումով, հետազոտողների շրջանում կարծիք կար, որ եզդիականության մեջ ևս չի կարող գոյություն ունենալ անդրշիրիմյան կյանքի մասին հատուկ պատկերացում, այնիչ այս յուրօրինակ դավանանքը իրենում, փաստաբեմ, միաեյություն է թե՛ հոգու վերամարմավորման, և թե՛ անդրշիրիմյան կյանքի վերաբերյալ լավական կոտ և կանոնակարգված հավատալիքային համակարգեր:

ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ (ԵԴՀ)

ՀԱՅԵՐԵՆԻՅ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՐԲԱՆՆԵՐԻՆ ԱՆՅԱԾ ԲԱՌԵՐԸ

Թյուրքական լեզուների վրա հայերենի բողած ազդեցությունների (արձնելիզմներ) լեզվական որակը մինչև վերջ պարզաբանված չէ, և այդ հարցի բարբառային ասպեկտին է նվիրված ներկա համառոտ ակնարկը:

Լեզուների փոխադրեցությունը երկկողմանի բնույթ է կրում, տարբերությունը միայն փոխառությունների (բառային, իմաստային, քերականական) չափի մեջ է: Նույնը վերաբերում է նաև հայերենի և թյուրքական լեզուների շփումներին:

Դատելով պատմական Հայաստանի հարակից շրջաններում բնակություն հաստատած քյուրքական ցեղերի ու ժողովուրդների առաջին գրավոր աղբյուրներից, արդեն XIII-XIV դարերից հայերեն բառերը, իբրև որոշակի հասկացությունների անուններ, կիրառվել են քյուրքական բարբառներում: Օրինակ, «Քիթաթի Դադա Գորգուր»-ում՝ ազնավուր, գուր, քազավոր, խաշ, սուր (=միզակ) և այլն, Իմադադին Նասիմիի «Դիավան»-ում՝ ադու, գուր (gutfu), քազավոր (takfur), աուար (davar) և այլն: Դրանք զրի են առնվել XIV-XV դարերում, սակայն բնական է ենթադրել, որ քյուրքական բարբառները հայերեն բառերը փոխառել էին դրանից ավելի վաղ, որոնք XIV դարում արդեն քաղաքացիություն էին ստացել:

Թյուրքալեզու գրականության մեջ հայերեն բառերի հայտնվելու առաջին ճանապարհը բանավոր՝ բարբառային փոխառություններն են: Ջարգացման այլ հարթության վրա գտնվող, քոչվոր կենցաղավարությամբ ունեցող քյուրքերը հայերից վերցնելու բավականին բան ունեցան: Բարբառային փոխառությունները (դրանց մեծ մասը՝ զրի է առնվել հիմնականում XIX դարի վերջերին, և այդ հարցում նախաձեռնությունը Հրայր Աճառյանինն է), նախ և առաջ կապված են հողագործության, արհեստների, մտակյաց կենցաղավարության հետ, օրինակ. գուրան (kotan), հերկ, գերան, զոզնոց, զոս, խոփ, կամ, բոնիր, բունը և այլն: Մեծ թվով բառեր քյուրքական բարբառներին են անցել բույրախոս հայերի միջոցով՝ չորբան, ժամ, կնիք, վանք, որք, մատակ, խնամ(ի), անօրեն և այլն:

Հետաքրքիր է, որ հայերենից փոխառած բառերի մեծ մասն օգտագործվում են Հայաստանի քե՝ արևելյան ու հյուսիս-արևելյան, քե՝ արևմտյան քյուրքական բարբառներում, այսինքն՝ այդ փոխառությունները դիտվածային բնույթ չեն կրում և չեն սահմանափակվում որոշակի փոքր տարածքով: Օրինակ, հերկ, գուրան, գերան, խոփ, հիմ(ք), պահեստ և այլ բառերը կրկնվում են Թուրքիայի արևելյան և Ադրբեջանի բարբառներում:

Տարբեր աղբյուրներից հավաքած՝ հայերենից քյուրքական լեզուներին անցած բառերի ոչ ամբողջական թիվը մեր բառացանկում անցնում է 300-ից, ընդ որում, ցանկի մեջ ներառված չեն հայաստա քյուրքերեն գրականության մեջ պահպանված հայերեն բառերը, ինչպես՝ գիրք, մտածական, բարոգլար, քրիստոնյա և այլն, ինչպես նաև հայոց տեղանունները՝ Ագարակ-Էքրեկ, Ակն-Էզին, Չմշկածագ-Չմիշքեզեք և այլն: (Հիշեցնենք, որ Հ.Աճառյանի «Հայերենի արմատական բառարանում» քյուրքական փոխառությունների թիվը մոտ 700 է, որոնց փոքր մասն է պահպանվել գրական հայերենում:)

Սակայն նշված թիվն էլ վերջնական համարել չի կարելի, և աշխատանքը պետք է շարունակել, առաջին հերթին նկատի ունենալով, որ յուրաքանչյուր փոխառյալ բառ իր հետ քաղաքակրթական որոշակի տարր է փոխանցում փոխառու լեզվին ու ժողովրդին:

ՍՄԻՐԱՅԱՆ ՍՐՏԿՄ (ՄԻ)

ՄԳԴԻՆԻ-ՄՈՒՍԱՄԻՐԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԸՈՒՐՋ

Բիսյանագիտության դեռևս վիճահարույց խնդիրներից է Արդինի - Մուսասիրի (քաղաք և երկիր) տեղորոշումը: Այն սովորաբար տեղադրվում է Ուրմիա լճից հարավ - արևմուտք, Մ. Ջաֆի ձախափնյակում (Լեման-Հաուպո), քաղաքը նույնացվում է ներկայիս Մոդջեսիրի հետ (Բոյմեր): Ուսումնասիրողներն Արդինի - Մուսասիրը

տեղադրել են մաս Գ-յուսկանում (Թյուրք-Դանժեն), մույնացրել Մուշի (Ն.Տաղսկարյան), Քոչանիսի (Գր. Ղափանցյան), Աշտիշատի (Մ. Կառավայրյան), ասուր. աղբյուրներից հայտնի Մուսրու - Արինուի (ըստ Ի. Դյակոնովի՝ Մ. Ջաբիի վերին հոսանքում), Արիդուի (Դ. Սարգսյան) հետ:

Ընդունելով Մուսրու - Արինու և Մուսասիր-Արդինի մույնականությունը, զանոմ ենք, սակայն, որ այս երկիրն ու քաղաքը Մոկրում էին՝ համապատասխանելով Միջաս (Միջա) գավառին (մեղ առումով) և մյս համանուն կենտրոնին: Արդինի - Մուսասիրը բրիայնական շրջանում ընդգրկել է Մոկրը, գուցե և՛ հարակից այլ շրջաններ:

Մոտեցումները հիմնավորվում են հետևյալ փաստերով.

1. ըստ Սալմանասար I-ի և Թիգլաթպալասար I-ի հիշատակությունների Մուսրուն և Արինուն գտնվում էին Զինգունի (Զենգան՝ Տիգրիսի աջափնյակում) և Էրանունիի (Ավրաման - Ալաման՝ Զերմի ակունքների շրջ.) միջև, Մեկսիից (Մեքի - Նար՝ Խեզկիլի ակունքների շրջ.) հյուսիս, Թալա (Թաղ - Շառախ) և Խարուսա (Առնոս) լեռներից արևմուտք. այստեղ Միջան է.

2. Աղալներարի I-ը Մուսրուն հիշատակում է «շուբարեցիների երկրի» հարևանությամբ. ըստ Թուկուպի-Նինուրասա I-ի և մյս ժամանակի տնտեսական մի արձանագրության, Արինի երկիրը (= Մուսրու) գտնվում էր Կատունիսի (Կադմյան Ծավդեր), Մունմի (Մայմունիկ), Ալզի (Աղձինք), Դամնաուշ (Ամիդից հրվ. - արլ.) երկրների շրջակայքում: Աղալներարի II-ը Արինուն հիշատակում է Շուբբե երկրի կազմում.

3. Աշտրեբեկական (Ք.ա. 1076-1059) Արինունը (=Արինու [Հարությունյան Ն.]) հիշատակում է իր անցած հեռույալ երթուղու ընթացքում. Մ. Ջաբի, Արլ. Խարուրի, Արգաստի ավազանով՝ Մոկր (հմմտ. Կուկիարա-Գյալիլու, Ամուրաշկա-Ամաջա, Դունաշա-Ենդիաս, Ապարունու-Ապարանք, Խարաբիա-Խրեր, Խիպպու-Խոշապար, Իշուայսուն-Նիսյան, Մուսուկու-Սնքար, Իկկիս-Թերե), Բադեշ գետի ավազան (հմմտ. Թարքարա-Վերվան, Յարլիունու-Ելնև, Ջուրգուրա-Խմեջուր, Իշկուտուն-Բաշկան, Սասալիսի-Սակ, [...] սիուրու-Սիրեն, Շալլագիդու-Սդեդ, Պանիրասու-Բաներսի), Գարգան գետի ավազանով (հմմտ. Էրակու-Ալիկա, Էլիդա-Ամադին, Ռիվիշ-Էրմի)՝ Զիկունու-Զենգան.

4. Առնո սարի և լեռնաշղթայի, Առնոտուն գավառի անունները մույնական են KUR/URU Arin(n)a/i-Arin(n)-ի հետ, որը ճշանակում է Արշարույսի, Արենքի երկիր [քաղաք, լեռ, լեռնաշղթա](հմմտ. խեթ. Արիննային [արևի աստվածուհու քաղաք]. հնդեվրպ. *rev արմտ. որից ամնսի. aruna', aruša՝ «կարմիր», հայ.՝ արեգ, արև, արշալուրս, արուսյակ և այլն [»Խարուսա = Առնոս]).

5. ըստ Սալմանասար III-ի մի հիշատակության, Մուսասիրը գտնվում էր Խուրուշկիայի (Զերմի ավազան՝ Շառախ - Նորդուգ - Ջուրամերկ գծով), Ռիարաուի (Ռշտունիքի հատված), Գիզանի (Նիզան. Զեսան և Գարգան գետերի ավազանում) միջև. մյս Ծավ(ա)արիա բերդաքաղաքը, հավանաբար, Ծավան է (Մոկսից հրվ.-արլ.).

6. Սարգոն II-ը Ք.ա. 714-ի արքավանքի ժամանակ Մանգիբուտից (Գաբիբյան) անցել է հետևյալ երթուղով. Արմարիալի (Մ. Արբակ) - Այադու (Խոշարի վերին ավազանով [հմմտ. Անգալիա-Անձևացիք, Կուսային-Կանգուար]) - Վանա լճի հարավային ծովափնյակ (Արառա [Արծիդու] - Մոխարերդ [Մախունիա] հատված. հմմտ. Կալլանիա - Գյորանդաշա, Ալլի-Իլի(Հիլի), Դեզիդու - Դեդձիս, Բալդարգա - Բալվանց, Սարաարդի - Սարեն, Ալուարգա - Աղավանց, Հին Ռիայայիս - Ռիշինի, Արգիշտիունա - Մոխարերդ): Այնուհետև դարձել է հրվ. - արլ., անցնելով Ալլուրիա (հոսում է Ալլի - Իլիի շրջակայքից՝ Շառախ), Կալլանիա (Գյորանդաշա՝ Ալլուրիայի ձախ փոսկ), Իննայա գետերը, մտել է Ռիայայիս (Զերմի և Կանգուարի, Արբակի լեռների

այնուհետև՝ Խուրբուշկիա (Զմար): Այստեղից Արսիտ լեռան փեշերով (Կալամերիկ - Դաղ), անցել է Մ. Զարի Լևին-սու վտակը (Էլամուրիա) և շարժվել հյս. - արմ. ուղղությամբ, հասել Ալլուրիա լեռը (Թրաղի մոտ՝ Ալլուրիա գետի ավազանում) և մտել Մուսասիր: Վերադարձել է Անդարուտա լեռնանցքով (Խորասա), որ Խիպպարնա քաղաքի դիմաց էր (Խիպպու - Խոչասպար) և, հավանաբար, Ջերմի հոսանքով իջել է Կուտամուխի:

7. ըստ աստուր. լրտեսական բնույթի հիշատակությունների, Մուսասիրը սահմանակից էր Ուեսի - Ռիպալիսին, Խուրբուշկիա - Նաբրիին, Ուկկույի (Խեզկի ավազանում) դիմացի շրջանին, [...] տեղի շրջանին, որտեղից Մուսասիր անցնում էին Սև գետով (Կեծա՞ն). այն հեռու չէր Թուշասնից (Կարխ), Կուտամուխից, Ալամունից, Քար - Սիլարից, Մաննայից:

8. Մոկքի «Ռրբ», «Աբրակկու (Արվախ)», «Արվենից ձոր» տեղանունները առնչվում են «Արուբանի» դիցանվանը. «Միջասն» սերվում է «Մուսարու>Մուսասիրից» (հնդեվրպ. *մուս՝ «ռզի, վիշապ» և պրոսկ. *խշի՝ p>շի՝ r՝ «առյուծ») «Մոկք-Մոկար», քերևա, նույն հնդեվրպ. *mks արմատից է.

9. Արդինին հայ մատենագրության Արարադի երկիրն է (շում. Արատուա > ասուր. Ռրբուսարի, որոնցից՝ Ռրբարու > Արարաա. հնդեվրպ. *arto արմտ. [Հ. Մարտիրոսյան, Ա. Մովսիսյան]), որ ժառանգում է Կադմոսի Տունը (^{KUR} Gutium).

10. Արդինի - Մուսասիրը պետք է զտնվեր մետաղահանքերի շրջանում, իսկ Մոկքը, Շատախը, Սդերքը, Ռշտունյաց լեռները հնուց ի վեր հայտնի են բազմապիսի մետաղներով:

11. Մ. Զարի վերին ավազանում ասուր. աղբյուրները հիշատակում են այլ երկրներ՝ Արիդու (Այրաբուտանք), «Խարգայցիներին» (Այգաքք), «Խարմասցիներին» (Օրամար), Թումմե (Թիտում՝ մինչև Նեխեղի ավազան), Մումբի - Մունբի (Ռ-Լանդուզի շրջակայք. Մարսաց ամուր դռներ) .

12. Թափուզակայի արձանագրությունում նշվում է, որ Ռուսա I - ը, մուսասիրյան զորքերով հանդերձ, արշավել է Ասորեստանի լեռները. կորոյի տեղադրությունը ճշտում է, քե հատկապես որտեղ է արշավել բիսյանական բանակը: Իշպուինին ու Մեմուան ևս լեռնանցքներում վերահսկողություն հաստատելու համար էին արշավել նույն տարածքը և բողել Կելյաշինի արձանագրությունը:

ԿԱՐԴԱՆԱՆԱՆ ԳՈՒՄՐ ԵՆՎԱՂ

ԲԱՆԱՅԻՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԸ

1. Աշխարհի նորագույն կրոններից մեկը՝ բանասկանությունը (բանայի հավաքը) ծագել է XIX դարում Պարսկաստանում, հիմնադրին է Բաբի աշակերտներից Միրզա Հուսեյն Ալին, որն իրեն անվանեց Բանաուլլահ («Աստծո փառք»): Նա և իր հետևորդները հայրենիքում հալածվելով, արտաքլեցին Բաղդադ, ուր 1863 թվականի ապրիլի 21-ին Ռիզվան պարսեզում Բահաուլլահը իրեն հայտարարեց Աստծո նվիրակ, որի գալստյան մասին պտոգամել էր Բաբը: Նոր կրոնի սկզբնավորումից հետո, մոտ մեկուկես հարյուրամյակի ընթացքում, այն տարածվել է աշխարհի համարյա բոլոր երկրներում և այսօր ունի շուրջ վեց միլիոն հետևորդ: Բանայական սուրբ գրքերը քարգմանվել են մի քանի հայրյուր լեզուներով: Բանայի հավատքը, ի տարբերություն մյուս կրոնների, չունի հոգևորականներ, համայնքները ղեկավարում են Տեղական և Ազգային Հոգևոր ժողովները: Բանայիների վարչական կարգի գերագույն մարմինը

Արդարության Համաշխարհային Տունն է, որը գտնվում է Իսրայելի Հայֆա քաղաքում: Ամեն տարի ապրիլի 21-ից մայիսի 2-ը բախայինների համայնքներում տեղի են ունենում ընտրություններ, որոնցում ընտրվում են Տեղական և Ազգային հոգևոր ժողովներ, որոնց լիազորությունները և պարտականությունները շարադրված են Բահաուլլահի, Արդու-Բահայի և Շողի Էֆֆենդիի գրքերում և ձևակերպված են Արդարության Համաշխարհային Տան կողմից:

2. Տեղական Հոգևոր ժողովների ընտրությունները կատարվում են բոլոր այն բնակավայրերում, որոնցում ապրում են առնվազն ինը բախայի: Տեղական Հոգևոր ժողովի անդամները պետք է ընտրվեն այն բախայիններից, որոնք ապրում են տվյալ վայրում և աղեկն 21 տարեկան են: Ընտրությունները տեղի են ունենում ամեն տարի ապրիլի 21-ին: Տեղական հոգևոր ժողովի անդամների քիվը ինն է:

3. Երբ Արդարության Համաշխարհային Տունը որոշում է որևէ երկրում ձևավորել Ազգային հոգևոր ժողով, այդ երկրի բախայինների համայնքի անդամները ընտրում են իրենց Ազգային Համագումարի պատգամավորներին, որոնք իրենց հերթին ընտրում են տվյալ երկրի բախայինների Ազգային հոգևոր ժողով՝ բաղկացած ինը հոգուց:

4. Հինգ տարին մեկ անգամ տարբեր երկրների Ազգային հոգևոր ժողովների անդամները, Բախայինների Միջազգային Համագումարի ժամանակ, գաղտնի քվեարկությամբ ընտրում են Արդարության Համաշխարհային Տան ինը անդամներին: Արդարության Համաշխարհային Տան իրավունքները ձևակերպված են բախայինների սուրբ գրքերում:

5. 1992 թվականին Հայաստանում ևս կազմավորվել է հայ բախայինների համայնք, որի անդամների քիվը 2000 թվականի տվյալներով շուրջ 500 է: Այս տարվա ապրիլի 21-ին տեղի ունեցան Հայաստանի բախայինների համայնքների Տեղական հոգևոր ժողովների ընտրությունները և ընտրվեցին 23 Տեղական հոգևոր ժողովներ (1999թ. 17), իսկ մայիսի 1-ին Երևանում ընտրվեց Ազգային հոգևոր ժողովի անդամները:

ՎԻՐԱԲՅԱՆ ՂԱԿԻՉ (ԵՊՂ)

1973Թ. ԱՐԱՐԱԽՈՐԱՅԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀՈՐԳԱՆՆԵՐ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ի տարբերություն Սիրիայի և Եգիպտոսի, Հորդանանն անմիջական մասնակցություն չուներ 1973թ. պատերազմին, այլ բավարարվեց Սիրիային օժանդակ գործառնալու մեջ: Դրանում առկա էին մի շարք պատճառներ: Հրեական պետականության կերտման առաջին տարիներից ի վեր պաղեստինցի փախստականները հսկայական գաղութներ կազմավորեցին Հորդանան գետի արևելյան ափին: Ատոհմամարտը նրանք կազմեցին Հաշիմյան թագավորության բնակչության մեծամասնությունը: Ժամանակի ընթացքում փախստականների ճամբարները անցան պաղեստինցի գրոհայինների վերահսկողության ներքո: Նվազագույն կերպով ինտեգրացվելով հորդանանյան հասարակությանը, պաղեստինցի գրոհայինները ամառգում էին երկրի օրենքները և քաղաքացի սպառնում թագավորության տապալմամբ: Հորդանանյան բանակի հետ բախումները, օտարերկրյա քաղաքացիական ինքնաթիռների առևանգումը Հորդանանի տարածք, ինչպես նաև մի շարք մահավորածներ Հուսեյն թագավորի դեմ, ստիպեցին թագավորին երկրում ռազմական դրություն

հայտարարելու և հաշվեհարդար տեսնելու ֆեդայինների հետ: 1970թ. տեղի ունեցան «Աս սեպտեմբերի» իրադարձությունները, երբ հորդանանյան զորամիավորումները ջախջախեցին պաղեստինցի գրեհայինների ջոկատները: Արդյունքում պաղեստինցի գրեհայինները, առավել շուրջ 5 հազար գոռ, վտարվեցին երկրից: Նշենք, որ պաղեստինցի ֆեդայինների գործողությունները էական վնաս չէին հասցնում Իսրայելին, սակայն առիթ էին հանդիսանում պատասխան պատժիչ գործողությունների, իսկ Հորդանանի քաղաքական ուժերն ի վիճակի չէին դիմակայել իսրայելյան պրեզենտիվ հարձակումներին:

Թագավորության հարաբերությունները հարթ չէին մաս սահմանակից արաբական հանրապետությունների հետ: Իրաքի, Սիրիայի և Եգիպտոսի հեղափոխական վարչակարգերը փորձում էին ասպարիչ Հորդանանի քաղաքական իշխանությունը: Հորդանան, ի տարբերություն այլ արաբական երկրների, չունի բնական ռեսուրսների հարուստ պաշարներ: Երկրի բնականոն զարգացման համար մշտապես անհրաժեշտ են եղել մեծածավալ ֆինանսական միջոցներ: Հորդանանին, որպես Իսրայելին սահմանակից երկրի, մասն հատկացումների մասին որոշումներ ընդունվեցին արաբական երկրների լիգայում, սակայն երբ գործը հասնում էր գումարների տրամադրմանը, ապա նրանք կամ չէին վճարվում, կամ էլ վճարվում էր դրանց միայն մի մասը: Նշենք նաև, որ արաբական երկրների լիգան Պաղեստինի ազատագրման կազմակերպությանը ճանաչեց որպես պաղեստինյան ժողովրդի միակ ներկայացուցիչ: Սա ամբողջովին հակասում էր 1972թ. մարտի 15-ին Հոսեյն քաղավորի նոր նախագծին, որտեղ հայտարարվում էր Միացյալ Արաբական քաղաքական ստեղծման մասին: Այդ նախագծով Հաշիմյան ընտանիքի իշխանության ներքո միավորվելու էին Հորդանան գետի արևելյան և արևմտյան ափի տարածքները: Հաշվի առնելով, որ արաբական հանրապետական վարչակարգերը միառում ունեին տասպալելու քաղաքական ռեժիմը, իսկ ժամանակի երկրներ աշխարհի սոցիալիստական ճամբարում տեղ չկար քաղաքական իշխանակազմով Հորդանանին, քաղաքականը ձգտում էր հզոր հովանավորներ փնտրել արևմուտքում, մասնավորապես, ի դեմս ԱՄՆ-ի՝ ազատվելու արաբական երկրների կախվածությունից:

1967-ի պատերազմից հետո բավականին փոխվել էր Հորդանանի դիրքորոշումը Իսրայել պետության վերաբերյալ: Եթե նախկինում Հորդանանը մնացած արաբական երկրների պես չէր ընդունում Իսրայելի պետականությունը որպես այդպիսին, ապա այժմ պատրաստ էր բանակցելու հրետների հետ: Դրա մասին են վկայում Հոսեյն քաղավորի մի շարք հայտարարությունները:

Գճառով ավելի հաստատուն են դառնում այն ենթադրությունները, որ պարբերաբար զաղառնի հանդիպումներ են տեղի ունեցել հորդանանյան և իսրայելյան պաշտոնյաների միջև: Մասնավորապես, հայտնի է, որ Իսրայելի իշխանությունները տեղյակ էին 1973թ. նախապատրաստվող սիրիա-եգիպտական հարձակման մասին: Ըստ մի տեսակետի՝ իսրայելյան կողմին դրա մասին տեղեկացրել էին հորդանանյան իշխանությունները: Սա հնարավոր է, եթե հաշվի առնենք, որ 1970թ. սեպտեմբերյան իրադարձություններից անմիջապես հետո, երբ Սիրիայի փորձեց իր զորամիավորումները ուղարկել Հորդանան՝ պաշտպանելու պաղեստինցի գրեհայիններին, իսրայելյան իշխանությունները լուրջ նախագծաշարժում արեցին: Սա առիթեց սիրիական իշխանություններին բավարարվել փոքրաքանակ զբաղառնակային գումար ուղարկելով, որն էլ ջախջախվեց հորդանանյան քաղաքական ուժերի կողմից: Անշուշտ, այս ամենում մեծ դեր է խաղացել ԱՄՆ վարչակարգը: 1970-ին տեղի ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Ռոջերսի այցը տարածաշրջան, երբ նա ներկայացրեց խաղաղ կարգավորման իր նախագիծը: Սրան

հաջորդեցին 1972թ. Հունեյն քաղաքի և Իսրայելի վարչապետ Գոլդա Մեյերի հաջորդական այցերը Սպիտակ Տուն:

Այսպիսով, ԱՄՆ տնտեսական, քաղաքական, ինչպես նաև ռազմական (1970-ական թթ. ԱՄՆ ռազմական մատակարարումները Հորդանանին կազմեցին շուրջ 200 մլն. ամ. դոլար) օգնության ակնկալիքով, Հորդանանը պատրաստ էր հնարավորության դեպքում սեպարատ համաձայնագիր կնքել Իսրայելի հետ:

ՏԵՐ-ՄԱԶԵԿՈՍՅԱՆ ԿԱՐԿԱՆ (ԵԳՂ)

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՖՈՒՆԿՏՆԵՏԱԼԻԶՄԸ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅՈՒՆՔՈՒՄ

XX դարի 70-ական թթ. վերջին և 80-ական թթ. սկզբներին քե' արևմտյան և քե' խորիքային ՋԼՄ-ներում հանդես եկավ "խլամական ֆունդամենտալիզմ" բառակապակցությունը:

Այս երևույթը ժամանակակից խլամական աշխարհում հանդես է գալիս 2 տարատեսակով: Այդ կրոնական շարժումների վերելքը չէր կարող չըջանցել այնպիսի մի երկիր, ինչպիսին Թուրքիան էր:

"Խլամական բումի" պատճառների շարքում առանձնանում են երիտասարդական շարժումներն ամբողջ բազմազանությամբ, գործազրկության աճը, ուրբանիզացիայի բարձր մակարդակը, տնտեսությունն ապակայունացնող բուրբակյան լիբրայի մշտական արժեզրկումը, ներքաղաքական իրավիճակը սրալ բրդական շարժումը և այլն:

Թուրքիայի կրոնական գործընթացների էությունը լավ ընկալելու համար հարկ է ըմբռնել Մ. Քեմալի կողմից այդ ոլորտում կատարված քայլերի ամբողջ տրամաբանությունն ու փոխափայությունը, ինչպես նաև հետքեմալյան 50-60 տարիների ներքաղաքական զարգացումները, որոնք կարելի է բյուրեղացնել հասարակության աշխարհիկ և կրոնական քեների միջև անհաշտ պայքարով:

Քաղաքական դաշտում 60-ական թթ. վերջին հրապարակ եկավ խլամի քաղաքական քեը: Չնայած այն բանին, որ այդ կուսակցությունը չորիցս փոխեց իր անվանումը, հավատարիմ մնաց իր գաղափարական ուղեգծին և սկզբունքներին, գրեթե անփոփոխ մնաց նաև այդ կուսակցությունների ղեկավար կազմը:

Այժմ արդեն կազմակերպված բնույթ ստացած կրոնական շարժումներին դիմակայելու համար ակտիվացավ աշխարհիկ հասարակարգի և բարբերի թիվ մեկ ջատագովի՝ բանակի գործողությունները: Սպայակույտի կողմից կատարված 3 իրարահաջորդ ռազմական հեղաշրջումներին մշտապես հետևող մակերեսային բացատրությունների շարքում առանձնանում էր մեկ դրույթ. բանակն ամուր է իր դիրքերում և չի հանդուրժի կրոնական շարժումների ակտիվացումը:

80-ական թթ. վերջին բանակին, երկրի վերկուսակցական ուժերին քվում էր, քե նրանք լիովին վերահսկում են ամբողջ իրավիճակը և Թ. Օզալի որդեգրած «առեմանափակ դեմոկրատիայի» շրջանակներում խլամականներին արվեցին «աննշան» գիշումներ, վստահ լինելով, որ իրավիճակը ամբողջովին հսկողության տակ է: Սակայն որքան մեծ եղավ բանակի զարմանքը, երբ իրարահաջորդ քե՝ ՏԻՄ-երի, քե՝ խորիքայնաբանական ընտրություններում «Բարօրություն» կուսակցությունը սկսեց ավելի ու ավելի շատ քվեներ ստանալ:

Հիանալի վարելով ամբողջ ընտրարշավը արդեն 1995թ. դեկտեմբերյան խորհրդարանական ընտրություններում՝ նրանք կազմեցին որակյալ մեծամասնություն և, համաձայն սահմանադրության, առաջան կառավարություն կազմելու իրավունքը:

Բանակը գիտակցեց, որ «խլամը փողոց է հորդել», դարձել է անկառավարելի, և այդժամ կտրուկ քայլերի ու միջոցների շնորհիվ կարողացավ նախ 1997թ. հուլիսին միջնորդավորված կերպով հրաժարականի պահանջ ներկայացնել Ն. Էրբարանի կառավարությանը, ապա 1998թ. փետրվարին կուսակցությունը փակել, իսկ առաջնորդին գրկել 5 տարով քաղաքականությանը մասնակցելուց:

Սակայն 1997թ. նոյեմբերին արդեն քաղաքական դաշտում հայտնվեց «Բարօրություն» իրավահաջորդ՝ «Առաքինությունը», կրկին նույն առաքելությամբ, որը 1998թ. ապրիլի 18-ի ընտրություններում իր հավաքած քվեներով երրորդն էր, դրանով ապացուցելով, որ դեռ հզոր ուժ է երկրում և պետք է հաշվի առնել նրանց քաղաքական կշիռը և սոցիալական կազմը:

ՓԱՇՏՈՒՆԱՆ ԱՐԱՐՍՍ (ԿԻ)

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՈՒՄԸ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Միջազգային հարաբերությունների ներկա փուլում լայն քափ է ստանում իսլամական համերաշխության շաժուրը, որի շրջանակներում գործում են 70-ից ավել միջազգային իսլամական կազմակերպություններ: 1969թ. Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) հիմնադրումը առաջին անգամ միջազգային ասպարեզում ի հայտ եկավ իսլամական պետությունների ամուսնական, քաղաքական, մշակութային ինտեգրացումը որդեգրած, կրոնա-քաղաքական բնույթի մի կառույց, որին ներկայումս անդամակցում են 56 պետություններ: Մեր կողմից ուսումնասիրվող խնդիրը գիտական քննարկման առարկա է դարձել մի շարք հեղինակների կողմից, որոնցից են՝ Ն.Հովհաննիսյանը, Գ.Միրսալսկիին, Պ.Միրսալսկսյան, Լ.Վալկովան և ուրիշներ:

Իսլամական ինտեգրացման գործառության հիմքը իսլամական ազգի՝ Ումմայի գաղափարն է, որը պաշտոնապես հռչակվեց ԻԿԿ III զագաթաժողովում (Թաիֆ, 1981թ.): «Բոլոր մուսուլմանները, որ բնակվում են առաքելության երկրում, մաշկի գույնով, բնակության վայրով, մեկ ազգ են. նրանց միավորում է մույն հավատքը, նրանք շարժվում են մույն ուղղությամբ, ունեն մշակութային ընդհանուր ժառանգություն, աշխարհում ունեն մույն առաքելությունը»: Ումմայի պարտավորությունները վերաբերում են իսլամի երբեմնի փառքի վերականգնմանը, աշխարհում իսլամի դիրքերի ամրապնդմանը: Այս ռազմավարության նպատակը, որ բնակվում է կրոնական գործունի վրա, քաղաքական բնույթ ունի և կոչված է ծառայելու իսլամական դիվանագիտությանը:

ԻԿԿ-ին հաջողվել է ստեղծել ինտեգրացման լայն ցանց: Այս շրջանակում գործում են նորությունների և ռադիկալիզացումների իսլամական գործակալություններ, զգալի աշխատանք է տարվում իսլամական գիտության, մշակույթի, կրթության, քաղաքական, հրատարակչական գործի կազմակերպման, փորձի փոխանակման ուղղությամբ: ԻԿԿ-ին կից գործում են բազմաթիվ համաձայնագրված, երկու տասնյակից ավելի օժանդակ կառույցներ, համալսարաններ: Իսլամական ինտեգրացման գործընթացները նոր փուլ թևակոխեցին, երբ սաոր պատերազմից հետո ԻԿԿ-ին անդամակցեցին Ալբանիան, նախկին ԽՍՀՄ-ի Կենտրոնական Ասիայի

համընթացությունները և Աղբրեջանը: Հարավսլավիայի տրոհումից հետո ԻԿԿ-ի հետ համագործակցում են Մակեդոնիան, Բոսնիան և Հերցեգովինան: 1999թ. ԻԿԿ շրջանակներում ստեղծվեց Իսլամական պատմամեթոդների միությունը, որի նպատակներից մեկը իսլամական համերաշխության և համագործակցության ամրապնդումն է, ԻԿԿ անդամ երկրների միջև միջպատրամենտական փոքրձի և երկխոսության փոխանակումը:

Կազմակերպությանը, ընդհանուր առմամբ, հաջողվել է կոորդինացնել իսլամական պետությունների դիրքորոշումը միջազգային այն կոնֆլիկտների նկատմամբ, որոնցում ընդգրկված են մուսուլմաններ: ԻԿԿ-ն աջակցում է Պաղեստինի, Հարավային Լիբանանի, Ջամմու և Զաշմիրի, Կիպրոսի, Աֆղանստանի, Մոմալիի, Ֆիլիպինների, Բոսնիայի, Կոսովոյի* Աղբրեջանի մուսուլմաններին: ԻԿԿ 30-ամյա պատմությունը ցույց է տալիս, որ չնայած իսլամական աշխարհում գոյություն ունեցող լուրջ հակասություններին ու խնդիրներին, կազմակերպության շրջանակում գործում է միասնական իսլամական քաղաքականություն մշակելու ձգտումը:

Իսլամ տեսաբանների կարծիքով, իսլամական ազգի առաջ ծառացած են մի շարք խնդիրներ: Դրանք են՝ արևմտյան ազդեցությունը, ամենաական դժվարությունները, եղբայրասպան պատերազմները, կրոնական անհամաձայնությունները, որոնց հաղթահարման համար ջանքեր են պահանջվում:

Կրոնա-քաղաքական կազմակերպությունների գոյությունը որոշակի լարվածության է առաջացնում միջազգային հարաբերություններում: Հարկ է ընդգծել, որ ԻԿԿ շրջանակներում երեւմ հնչում են միացյալ իսլամական ռազմական ուժեր ստեղծելու առաջարկներ, որը կարող է դիտվել իբրև կազմակերպության կոտուցվածքի և նպատակների վերափոխման կարևոր ազդակ:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳ. - ՀՀ Ազգային գրադարան

ԱԻ. - ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ԳԻ. - ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտ

Գ.ՊՄԻ. - Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ

ԵՊՀ. - Երևանի պետական համալսարան

ՀԱԻ. - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԵՀԱՀ. - Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան

ՀՄԻ. - Հայաստանի մանկավարժական ինստիտուտ

ՊԻ. - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒԻԿ (ԵՊՂ) - Շամանական առասպելաբանության հետքերը
 հայ ժողովրդական հավատալիքներում1

ԱՅԴԻՆՅԱՆ ԱՆՆԱ (ՀԱԻ) - Հայկական և շումերական բանաստեղծական
 տեքստերի զուգադրման փորձ.....1

ԱՍԱՏՈՒՐՅԱՆ ՈՌԻՇԱՆՆԱ (ԵՊՂ) - ԻԻՀ-ԱՄՆ
 անհաղթահարելի տարածայնություններ և անխտասպիելի մերձեցում.....2

ԱՎԱԳՅԱՆ ԶԱՂՐԻԿ (ՊԻ) - Թուրքիա հայոց պատրիարքարանի
 ղեկավանի փաստաթղթերը ԱՄՆ-ի հայ գաղութի վերաբերյալ
 (XIX դ. վերջ XX դ. սկիզբ).....4

ԱՐԻՍՅԱՆ ՆՈՐԱ (ԵՊՂ) - Հայոց ցեղասպանությունը սիրիական
 սփյուռքի մամուլի էջերում5

ԲԱՂԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԻ) - Բանակի գործունը Թուրքիայի Հանրա-
 ստեղծության քաղաքական և հասարակական կյանքում (1920-1930 թթ.).....6

ԲՈՐՈՒՅԱՆ ԱՐՍԵՆ (ՀԱԻ) - Կացինը (արադ. *hazın*) և ծառը
 (շում. *SAR*). Արևելյան Տավրոսը Միջերկրական փայտի առևտրում
 (Ք.ա. III-II հազ. տահման).....7

ԳՐԵԿՅԱՆ ԵՐԱՎԱՆԴ (ԱԻ) - Մանայի թագավորության գավառներն
 ու նրանց տեղադրությունը.....8

ԴԱԼԱՅԱՆ ՏՈՐՔ (ԵՊՂ) - Քրդերի ծագման առասպելի շուրջ).....9

ԴԵՄՈՅԱՆ ՀԱՅԿ (ԵՊՂ) - Ղարաբաղյան հակամարտությունը բյալը-
 քալգու հանրապետությունների հարաբերությունների համատեքստում...11

ԴՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ (ԱԻ) - Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը և
 ամերիկա-իրանյան հարաբերությունների ճգնաժամային փուլը.....12

ԴՐԲՈՅԱՆ ԱՍԱՆ (ԱԻ) - Հայաստանում ձևավորվող գրական
 քրդերենի գեղարվեստական ոճի մի քանի հարցերի շուրջ.....13

ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ (ԱԻ) - Ամերիկյան օգնություններն Իրանին
 որպես իրանա-ամերիկյան հարաբերությունների կարևորագույն գործոն...14

ԼԱԶԱՏՐՅԱՆ ԵԿԱՏԵՐԻՆԱ (ԵՊՀ) - Հավատախառքյան կրոնա- հոգեբանական հայեցակետերի շուրջ.....	15
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ (ՎԻ) - Տաիա Հուսեյնի «Օրերը» ինքնակենսագրական երկը և եզիպտական իրականությունը.....	16
ԿՈՍՏԻԿՅԱՆ ԶՐԻՍՏԻՆԵ (ՎԻ) - Սյունիքի Օրբելյանները XVIII-XIX դարերում.....	17
ՀԱՄԲԱՐՈՒՄՅԱՆ ԺԱՐՈՒԾ (ՊԻ) - «Հայրենիքի» ընկալման շուրջ (դրինսհայերի օրինակով).....	18
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԱԳ (ԱԳ) - Քրդական գործունեությունը որպես տարածաշրջանային համագործակցության զարգացման արգելակ և խթանիչ.....	19
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ (ՎԻ) - Լիբանանի կրոնա-համայնքային համակարգը.....	20
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԳՊՍԻ) - 1995թ. Վաշինգտոնյան համաձայնագիրը իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման վերաբերյալ	21
ՂԱՐԻՖՅԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԵՊՀ) - Էթնիկական գործընթացները Սոտյանում XX դ. երկրորդ կեսին.....	23
ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐԹՈՐ (ՎԻ) - Կիպրոսի հանրապետության հռչակման հարցի շուրջ.....	24
ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ (ԵՊՀ) - Մի րանի սեպագիր համակարգերի կոմպյուտերացումը.....	26
ՍԱԼՈՅԱՆ ԱՐՄԱՆ (ՀՄԻ) - Եղիտամբ-Յադդան (տեղորոշման փորձ).....	28
ՍԱՆՈՒԿՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ (ՎԻ) - Քրդական բանվորական կուսակցության կազմավորումը.....	28
ՍԱՐՏՈՅԱՆ ԳԱԳԻԿ - Մենք-Միքիի առասպելի շերտը հայկական ժողովրդական հեքիաթներում	30
ՍԵԼԻԹՅԱՆ ԿԱՐԻՆԵ (ԵՊՀ) - «Narratio de rebus Armeniae»-ի աղբյուրագիտական արժեքը.....	31

ՄԵԼԾՈՆՅԱԼ ՆԱԽԻՆԻ (ԳԻ) - Արևելյան պոեզիայի առանձնահատկությունների դրսևորումը Յ. Վ. Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանում».....	32
ՄԻԶԱՅԵԼՅԱԼ ՏԻԳՐԱԼ (ՎԻ) - Ազգերի կերպարները միջնադարյան աղբյուրներում (IX-XI դդ.).....	34
ՄԿՐՏՈՒՅԱԼ ԳԱՅԱԼԵ (ՆՄԻ) - Զրիստոնյա համայնքների իրավական կարգավիճակը մահմեդական իրավագիտության մեջ.....	35
ՄՈՎՍԻՍՅԱԼ ԱՐՏԱԿ (ՎԻ) - Հայկական լեռնաշխարհը Բ. ա. XX-XVIII դդ. (ըստ Քանեշի բնագրերի).....	36
ՅԱԾԸՃԱԼ ԳԵՎՈՐԳ - Անտուան Սաադեն (1904-1949) և նրա ազգայնական գաղափարախոսությունը.....	37
ՇԱԳՈՅԱԼ ԳԱՅԱԼԵ (ՆՄԻ) - «Արարչագործության» թեման հայոց ավանդական հարսանիքի փեսայի ծիսական տեքստում	38
ՇԱԶԱՐՅԱԼ ԱՐՏԱԿ (ԵՊՂ) - Բրդական հարցի հնարավոր լուծումները և Հայաստանի Հանրապետությունը.....	38
ՈՍԿԱՆՅԱԼ ՎԱՐԴԱԼ (ՎԻ) - Անդրշիրիմյան կյանքի մասին եզրիական որոշ հավատալիքների շուրջ.....	41
ՊՈՂՈՍՅԱԼ ՆՈՐԱՅՐ (ԵՊՂ) - Հայերենից բյուրքական բարբառներին անցած բառերը.....	41
ՍԱՐԳՍՅԱԼ ԱՐՏԱԿ (ՎԻ) - Աղդինի-Մուսսիքի տեղորոշման շուրջ.....	42
ՎԱՐԴԱՆՅԱԼ ԳՈՂԱՐ (ԵՂՂ) - Բառայինների վարչական կարգը.....	44
ՎԻՂԸՅԱԼ ԴԱՎԻԾ (ԵՊՂ) - 1973թ. արաբա-իսրայելյան պատերազմը և Հորդանանի դիրքորոշումը.....	45
ՏԵՐ-ՄԱԾԵՎՈՍՅԱԼ ՎԱՀՐԱՄ (ԵՊՂ) - Իսլամական ֆունդամենտալիզմը թուրքիայի արդի բաղադրական կյանքում.....	47
ԾԱԾԱՅԱԼ ԱՐԱԶՍ (ՎԻ) - Իսլամական համերաշխության շարժումը Իսլամական կոնֆերանս կազմակերպության համատեքստում.....	48
ՆԱԿԱՎՈՒՄԵՐ.....	49

